Կապեցիր զիս, կապուէ՛ք սիր ախպակտելի,
Վըճիռս կնքուած յաւիտեան անայլայլելի:
5. Ո՞վ անիծեալ, աշխարհի հարստութիւնը,
Մոռցուցիր ինձ այս տեղի աղքատութիւնը.
Մոռցուցիր զիս զըմոյգին ու խաւարին մէջ,
Ընկեր ըրիր կըրակին ու բոցին հետ:
6. Զրկեցիր զուն աղքատ վերաւորն ու արդար,
Տեսաւ Աստուածն ու դատաւորը անաչառ.
Ուստի զուն հոտ տանջուէ յաւէտ չարաչար,
Իսկ ան հոս պիտ' վայ՛լէ փառք սրբորոց անդադար:

ԱԲԵՏԱՐԱՆԻՆ ՆՐԱԻԷՐԸ

375 ՆՐԱԻԷՐ ՄԵՂԱԽՈՐԻՆ Մատթ. 11. 28.

Oh, come to the saviour. S. H. 455

1. Նրաւէր կայ քեզի ո՛վ անհոգ մեղաւոր,
Յիսուս է որ քեզ կանչէ.
Իր Ոռրբ արեան մէջ զօրութիւն կայ հոգոր,
Մեղքի բռնէն քեզ կ'ազատէ.
Մահ կայ մութին մէջ. մութ գիշերը ան-
վճրոն անփոփոխ հաւրն անչէջ, \ զերջ
Ահե՛ղ այս վիճակն, ո՛հ կ'ըլլայ քեզ բաժին
երբ անփոյթ կ'ըլլաս իւր հրաւերին.
2. Մեղքիդ սեռութեամբ օն եկուր խաչին տակ.
Մեղքի համար բացուած ապրիւրին.
Մաքրող արիւննովն քեզ կ'ընէ ձիւն — ճերմակ
եւ ժառանգ կ'ըլլաս իւր փառքին.
Մահ կայ մութին մէջ . . .
3. Իւր վեհ սիրտը դեռ քեզ համար կը բարախէ,
Դարձի՛ր կ'ըսողասէ կարեւոր,
Դարձիր արդ Փրկչիդ, և ազատ լեր վախէ,
Մի՛ մերժեր գինք և իւր գութն ու սէր.
Մահ կայ մութին մէջ . . .
4. Կ'անցնի լոյս ցորեկն, ո՛հ կուգայ մութ գիշեր,
Պատեհութիւնդ է թերեւս վերջին.
Յայնժամ ողբ աղերս այլ ևս ինք չի լսեր,
Այժմ անսա, ո՛հ անսա իւր կոչին.
Մահ կայ մութին մէջ . . .
5. Ո՛հ, անյայտ խեղճ հոգի, արդ եկուր Յիսուսի,
Փրկիչդ է որ քեզ կը կանչէ.
Տե՛ս, իր սուրբ կողէն դեռ արիւն կը հոսի,
Մեղաց բռն թող ալ քեզ չի տանջէ.
Մահ կայ մութին մէջ . . .

376 (10) ԻՆՁՈՒ ԶԷ ԱՅՍ ԴԻՇԵՐ ԳԹԱՊ. 18, 21:

Oh why not to night. S. G. G. 335

1. Ո՛հ, մի՛ մերժեր փրկչիդ հրաւէր,
Եւ լոյսին դէմ աչքդ մի՛ գոցեր:
Ո՛վ մարդ, սիրտդ մի՛ խստացնէր,
Փրկուէ՛ այս գիշեր:
Ինչո՞ւ չէ՛ այս գիշեր, ինչո՞ւ չէ՛ այս գիշեր,
Պատեհ՛ ժամ է, փրկուէ՛ այս գիշեր:
2. Դուցէ՛ արեւն ալ չի ծագի,
Դադրին՝ բոպէք ժամանակի,
Յայնժամ ա՛լ ինք քեզ չի՛ յիշեր:
Փրկուէ՛ այս գիշեր:
Ինչո՞ւ չէ՛ այս գիշեր
3. Երկար ատեն փրկիչըդ հեղ,
Ի՛նչ անձկանօք կ'ըսպասէ քեզ:
Ո՛հ արդ միանգամ ըղգաստ լեր,
Փրկուէ՛ այս գիշեր:
Ինչո՞ւ չէ՛ այս գիշեր
4. Մեր փրկիչն մէկը չի մերժեր,
Իր խոստումն երբեք չի զրբժեր,
Քեզի կ'ուղղէ՛ այս լուրջ հրաւէր,
Փրկուէ՛ այս գիշեր:
Ինչո՞ւ չէ՛ այս գիշեր

377 (9) ՄԵՂԱԻՈՐԻՆ ՀՐԱԻՒՐ ՄԸ ԵՂԵԿ. 18, 23:

(Fierce and wild the storm is raging) S. S. S. 1005

1. Դարձի եկուր ո՛վ մեղաւոր,
Տէրն քեզ կը կանչէ:

Կ'ազատէ քեզ մեղքէդ բոլոր,

Յանցանքդ կը ջնջէ:

Դարձի եկուր, ո՛վ մեղաւոր,

Մեղք ես. ինչո՞ւ կորսուիս.

Քանի որ Տէրն քեզի համար այսօր,

Մեռած է. ինչո՞ւ կորսուիս.

Քանի որ Անոր սէրը յորդած է

Դո՞ւն ինչո՞ւ, ինչո՞ւ զրկուիս:

2. Յաւիտենական կորուստը,

Տէրոջ փափաքն չէ.

Կ'ուզէ որ ազգատ, հարուստը,

Հրաւերն չի մերժէ:

Դարձի եկուր ո՛վ մեղաւոր . . .

3. Քանի Սուրբ Հոգին կը կանչէ,

Լքուէ մեղաւոր.

Ընդունէ զԱյն, մ'ըսեր «Հոգ չէ»,

Փրկուէ այսօր:

Դարձի եկուր ո՛վ մեղաւոր . . .

378 Ե Կ Ո Վ Յ Ո Դ Ն Ա Ն Մատ. 11, 23.

1. Դեռ ե՞ս առանց Յիսուսի քեզ կանչէ նա,

Սուտ աշխարհ քեզ հանգիստ տալ ոչ կրնայ.

Մի՛ վատահիւր իւր հաճոյից փռւն ու սին,

Այլ հաւատա դուն փրկչիդ. Յիսուսին:

Եկ ո՛վ յոգնած մեղացի բռնէն տառապած,

Եկ կ'սպասէ նա գրկարաց:

Արդ կանչէ քեզ վար առնել քու ծանր բեր,

Եկ ո՛հ, մի՛ ըլլար դու անտարբեր:

2. Դեռ զուրկ փրկչէդ կը սահին ոսկի ժամեր,

Ի՞նչ պիտ' ընես մօտ է ահա զիշեր,

Քեզ համար ալ աղբիւրին քով տեղ մը կայ,

Քեզ փրկարար ջուր հոսէ Անիկա:

Եկ ով յոգնած մեղացի բռնէն . . .

3. Զուրկ Յիսուսէն սահայն կայ քեզ պատրաստ
Իէ յոժարիս քու մեղքովդ դալ Անոր: {չնորհ,
Ոն կ'սպասէ փրկիչդ ի դուռն փրկութեան,
Քու մեղքդ ահարկու ջնջել յաւիտեան:
Եկ ո՛վ յոգնած . . .

4. Դեռ դուրկ փրկէ՞դ՝ խոստացած է նա քեզ սէր,
Զայն ընդունիլ ու վայ՛լել չե՞ս ուղեր:
Ոն հետեիր յուսոյ աստղին՝ վառ անշէջ,
Քու փրկչիդ եկ ո՞հ մի՛ բլլար անդեղջ:
Եկ ո՛վ յոգնած . . .

379 ՀԻՄԱՅ ՆԱՏ ԶԱՐԲԱՐ ԲԿ.ԲՃ. Ը. 2

1. Փառք ու զիրք թողուցի քեզ համար,
Յանձն առի պաւեր անհամար:
Խաչ ու մահ սիրով կըրեցի,
Եկո՛ւր դուն ինձի:
Եկուր մ'ուշանար,
Հիմա շատ յարմար:
Ո՞հ, եկուր հիմա,
Ո՞վ հոգի անմահ:

2. Ո՞վ դուն յոգնած, խեղճ բեռնաւորուած,
Ո՞վ դուն յուսահատ ու ինկած:
Հիմա հանգիստ կուտամ քեզի,
Եկուր դուն ինձի:
Եկուր մ'ուշանար . . .

3. Եկո՛ւր, քեզ դուրս չեմ հաներ բընաւ,
Հաւատա յանձնուէ՛ ալ բաւ:

Կեանքն ու մահ կ'սպասեն քեզի,

Եկո՛ւր դուն ինձի:

Եկուր մ'ուշանաւ . . .

4. Մի՛ ուշանար, բողէներդ կ'անցնին,

Կ'անցնին ժամերը թանկագին.

Փրկութիւն խիստ մօտ է քեզի,

Եկուր դուն ինձի:

Եկուր մ'ուշանաւ . . .

5. Մի՛ ուշանար, մահն կը մօտենայ,

Պատեհութիւնն կը հեռանայ.

Մեղաւոր, կ'սպասեմ քեզի,

Եկո՛ւր դուն ինձի:

Եկուր մ'ուշանաւ . . .

6. Այս հրաւերն դու մի՛ մերժեր ի բաց,

Վերջն անօգուտ է ողբ ու լաց.

Զի վերջը դառնալն է զժուար,

Ո՛հ, մի՛ ուշանար:

Եկուր մ'ուշանաւ . . .

380 (14) ԻՆՁԻՒ ՀԻՄԱ ՁԵՍ ԴԱՐ Բ Կարն. 6, 2:

While we pray, and while we plead. S. S. S. 341

1. Երբ կ'աղօթենք և խնդրենք,

Կը տեսնենք հոգւոյն մեծ պէտքն.

Քանի հայրն կանչէ մեզ տուն,

Եղբայր, ինչո՞ւ չես գար դուն:

Ո՛հ, ինչո՞ւ, ո՛հ, ինչո՞ւ,

Հիմա չես գար Յիսուսի.

Ո՛հ, ինչո՞ւ, ո՛հ, ինչո՞ւ,

Հիմա չես գար Յիսուսի:

2. Շատ հեռու թափառեցար,
Ալ երբէք մի՛ ուշանար,
Հերիք, ո՛հ, շատ հեռացար,
Ընդունէ շընորհքն անճառ:
Ա՛հ, ինչո՞ւ, ո՛հ, ինչո՞ւ . . .
3. Աշխարհի մէջ անդադար,
Փնտռեցիր հանդիստ դադար,
Ալ Անոր եկ, հաւատա՛,
Որ գտնես դու կիանք անմահ,
Ա՛հ, ինչո՞ւ, ո՛հ, ինչո՞ւ . . .
4. Եթէ խոստովանիս լոկ,
Կ'ստանաս ներում ցնծում,
Եւ կ'ըլլաս խաղաղ անհոգ,
Սիրոյն մէջ միշտ մընայուն:
Ա՛հ, ինչո՞ւ, ո՛հ, ինչո՞ւ . . .

381 Տ. Ի. Ն. Կ. Բ. Կ. Ա. Ն. Զ. Ե. Մատթ. 4, 19:

Jesus calls us o'er the tumult. S. S. S. 162

1. Տէրն կը կանչէ մեզ, ալէկոծ,
Անհանդարտ կեանքի ծովէն.
Օրէ օր իւր ձայն մեղմագին,
Կ'ըսէ «Ինձի հետեւէ»:
2. Տէրն կը կանչէ մեզ, պաշտելէն
Պարասդ դանձը աշխարհի,
Եւ վատ սիրոյ քուրմը մարմնի.
Կ'ըսէ «Զիս սիրէ միայն»:
3. Ուրախութեան թէ վշտի մէջ
Օրուան տքնութիւններու,
Կամ կենաց հաճոյքներու մէջ.
Կ'ըսէ «Սիրէ զիս աւելի»:

4. Ան կը կանչէ՝ օգնէ մեզ Տէր
 Հընապանդիւ քու ձայնիդ,
 Յանձնել մեր սիրտերն կամքիդ.
 Եւ սիրել Գեղ աւելի:

382 Ե Ա... Հ Ա Պ Ա Դ Ո՞ Ի Ն Տիւ. 2. 13:

I gave my life for thee. S. S. S. 621

1. Թողի տունս երկնային,
 Աթոռս փառաւոր,
 Որ զամ աշխարհ՝ մըթին,
 Փրկել մարդիկ բոլոր:
 Թողի, Թողի, ամենայն ինչ
 Դուն ի՞նչ Թողիր ինծի:

2. Կամաւ ի խաչ ելայ,
 Արիւնքս Թափեցի,
 Որ կեանք բերեմ քեզի,
 Կեանք սուրբ և երկնային:
 Կամաւ, Կամաւ ի խաչ ելայ,
 Դուն ի՞նչ ըրիր ինծի:

3. Այս մեծ շնորհք քեզի,
 Յոժար կամօք ըրի,
 Մեղք, ցաւ ու վիշտ բարձի,
 Խաղաղութիւն բերի:
 Պէս պէս պարգեւ քեզի տուի,
 Դուն ի՞նչ կուտաս ինծի:

4. Աւա՛ղ, Յիսուս, աւա՛ղ,
 Գեղ մեռցուցին մեղքերս.
 Կուգամ քեզ անյապաղ,
 Առ դիս քու սիրոյդ ներս:

Ոչինչ, ոչինչ ունիմ քեզ տալ,
Հասկա խոնարհ իմ սիրտ:

5. Այ՛ս, զիս գընեցիր,
Անգին արեամբ, ո՛վ տէր,
Կուտաս ինձ անձանձիր,
Պէսպէս օրհնութիւններ:
Խոլոր բոլոր կուտամ քեզի,
Զի քուկդ եմ յաւիտեան:

383 (17) ՅԻՍՈՒՍ ԿՐԿԱՆՁԷ Մատթ. 11. 28.

Jesus is tenderly calling you home. K. G. 162

1. Յիսուս քաղցրութեամբ կը կանչէ քեզ տուն,
Ո՛վ մեղաւոր եկուր այսօր,
Իր սէրն մերժելով ո՛հ, մ'երթար հեռուն,
Մեղաւոր եկուր այսօր:
Ո՛վ մեղաւոր, եկո՛ւր այսօր,
Յիսուս քաղցրութեամբ կը կանչէ քեզ,
Եկուր այսօր:
2. Յիսուս կուտայ քեզ կատարեալ հանգիստ,
Յոգնած հոգի եկո՛ւր այսօր,
Թէև բերդ ըլլայ ծանրը և խիստ,
Կը լերցընէ բռնդ այսօր:
Ով մեղաւոր եկուր այսօր . . .
3. Յիսուս կ'ըսպասէ երկար ժամանակ,
Ո՛վ մեղաւոր, եկուր այսօր,
Եկո՛ւր մեղքովդ խոնարհէ խաչին տակ,
Եւ ներում գըտիր այսօր:
Ո՛վ մեղաւոր եկուր այսօր . . .
4. Յիսուս կ'աղերսէ արդ լսէ՛ իր ձայն,
Լըսէ՛ իրեն, լըսէ՛ այսօր:

Իրեն զացողներն ցնծում կ'ուռնենան,
 Գու ևս ցնծում ա'ռ աշտօր:
 Ո՛վ մեղաւոր եկուր՝ աշտօր. . .

384 ՏՈՒՐ ԲՈՒ ՍԻՐՏԴ ԻՆՏԻ Առակ. 23,25

Early in the spring time.

1. Մինչ գարուն է կեանքը,
 Եւ փայլուն արեւ,
 Ու պայծառ երկինքը,
 Եւ կանանչ տերեւ.
 Լսեցէք առ ձայնը,
 Է պատուէր ձեզի.
 Տէրն կ'ըսէ՝ «Որդեակ իմ,
 Տուր քու սիրտդ ինձի»:
 Տուր քու սիրտդ ինձի,
 Տուր քու սիրտդ ինձի.
 Տէրն կ'ըսէ՝ «Որդեակ իմ,
 Տուր քու սիրտդ ինձի»:

2. Երկինքէն իջայ ես,
 Քեզ յայանել իմ սէրս.
 Տես փուշէ պըսակս,
 Վիրաւոր ձեռքերս,
 Խաչուեցայ քու տեղդ.
 Տալ նուէր ձրի,
 Ու կեանք յաւիտեան քեզ.
 Տուր քու սիրտդ ինձի:
 Տուր լու սիրտդ ինձի. . .

3. Փորձութիւնք խիստ շատ են,
 Խորամակ, ոսոխ.
 Յաւէտ ըսպառնայ քեզ,
 Նորա քէնն ու սխ.

Միմիայն շնորհքս, բաւական լինի,

Անարատ պահել քեզ, տուր քու սիրտդ ինձի:

Տուր քու սիրտդ ինձի . . .

385 (11) ՁՈՒՆԻՉ ՏՆՂ ԴՈՒ ՅԻՍՈՒՍԻՆ Յայտ. 3. 29

Crowded is your heart with cares. Alex. 29

1. Լեցո՞ւն է սիրտդ տաղաւին, չունի՞ս տեղ դու

Յիսուսին,

Դրաւուած է այն աշխարհէն, չունի՞ս տեղ դու

Յիսուսին.

Նա դրանքդ քով կայնած է. կրկին կրկին կը զարնէ

Արդ լսէ Ան ի՞նչ կ'ըսէ, չունի՞ս տեղ դու Յիսուսին:

Չունի՞ս տեղ դու Յիսուսին,

Չունի՞ս տեղ դու Յիսուսին.

Ո՛հ, ահա՛ քեզ կ'աղաչէ,

Չունի՞ս տեղ դու Յիսուսին:

2. Չունի՞ս մի քանի ժամեր, նուիրելու Յիսուսին,

Ոսպուցա՞ն բոլոր ուժեր, զործածելու Յիսուսին.

Զրկա՞ն յաղթելու մեղքեր, դարձի բերելու անձեր

Չունի՞ս պատեհութիւններ, նուիրելու Յիսուսին:

Չունի՞ս տեղ դու Յիսուսին . . .

3. Միայն անպէտ տերեւներ, չունի՞ս պըտուղ Յի-

սուսին,

Ու՞ր են համեղ պտուղներ, չունի՞ս պըտուղ Յի-

սուսին.

Զ'ամբարեցի՞ր պաշարներ, բերելու փրկչին առջին

Ձեռն ունայն ելլես իր քովն, չունի՞ս պտուղ Յի-

Չունի՞ս պըտուղ Յիսուսին . . . [սուսին:

1. Մարմնով հոգևով ինկած եմ. օգնութիւն,
Մեղքերու մէջ թաղուած եմ. օգնութիւն,
Մոռցա՛ զԱստուած, իր ատեան,
Մոռցայ իր սէրն յաւիտեան,
Արժանի եմ կորստեան, օգնութիւն:
2. Նախանձեցայ, ատեցի, օգնութիւն,
Հպարտացայ, դատեցի, օգնութիւն,
Ազահութեամբ կռապաչտ՝
Հաճոյասէր, կամապաչտ,
Ապստամբ եմ ու անհաշտ, օգնութիւն:
3. Բեռներս ծանր ու ճնշող, օգնութիւն,
Վէրքերս խորունկ ու մաշող, օգնութիւն,
Խիզ՛ն կը խայթէ անդադար,
Սիրտս չունի բրնաւ հանգիստ,
Դատապարտութիւնս արդար, օգնութիւն:
4. Մութին մէջ եմ լոյս չունիմ, օգնութիւն,
Անմխիթար յոյս չունիմ, օգնութիւն,
Կեանքս Դժոխքի նըման,
Վախճանս կորուստ անպայման,
Աշխարհս չունի զեղ վարման, օգնութիւն:
5. Յոյսըս Դուն ես, ո՛վ Յիսուս, օգնութիւն,
Լոյսըս Դուն ես, ո՛վ Յիսուս, օգնութիւն,
Խաչիդ աչքերըս յառած՝
Դամուած ոտքերովդ փարած՝
Սրեանդ եմ ապաւինած՝ օգնութիւն:
6. Դուն քսիր թէ չեմ մերժեր, փառք Քեզ Տէր,
Ընդունեցիր խիստ շատեր, փառք Քեզ Տէր,
Ահա կուգամ գլխիկոր,
Անարժան եմ սինըլքոր,
Որդին սիրող, ներող Հօր, փառք Քեզ Տէր:

387

Մ Ա Ք Ր Է Չ Ի Ս Մատթ. 8.2.

Make me clean. SI. II. 296

1. Մարմնոյ փռւն հաճոյքին եղկելի մի գերին,
կը փարիմ արդ խաչին իմ Փրկչիս.
Հայրն զիս պիտ' ընդունի կը յենում խոստ-
ջի Փրկչիս արիւն կը մաքրէ զիս: [մունքին
Մաքրէ զիս, մաքրէ զիս,
Ծնրադիր կ'աղերսեմ խաչին քով.
Մաքրէ՛ զիս, մաքրէ՛ զիս.
Մաքրէ զիս Գառնուկին արիւնով:
2. Արդ հրաժեշտ կուտամ Տէր մեղսալից հին կեան-
հոր կեանքի արժանի բրէ զիս, [քին,
Մհանթիւ եմ մեղքերս, բայց Քու շնորհքդ է
Սուրբ արեամբ սրսկէ՛ արդ եղկելիս: [անդին
Մաքրէ զիս, մաքրէ զիս . . .
3. Ոչ մէկէ չի կայ յոյս, դու ես կեանքն իմ հոգ-
կեանք եւ յոյս ներշնչէ արդ հէզիս: [ւոյս,
Լեր խարիսխ հաստատուն, ալէկոծ իմ նաւոյն
Եւ խաղաղութիւն տուր նեղեալիս:
Մաքրէ զիս, մաքրէ զիս . . .

388

Կ Ո Ի Պ Ա Մ Տ Ո Ի Ն Ղուկ. 15, 20:

Coming home, coming home. E. P. 143

1. Թափառեցայ երկար ատեն,
Հա՛յր, արդ կուգամ տուն.
կուգամ մեղքի անապատէն,
Հա՛յր արդ կուգամ տուն:

կուգամ տուն, կուգամ տուն,
 Ալ չ'երթամ հեռուն.
 Բա՛յ ինձ րազուկներ սիրուն,
 Հա՛յր, արդ կուգամ տուն.

2. Զրգած մարմնոյ հաճոյքներ սին,
 Հա՛յր, արդ կուգամ տուն.
 Զղծման արցունք աչքէս հոսին,
 Հա՛յր արդ կուգամ տուն.
 Կուգամ տուն, կուգամ տուն . . .

3. Մե՛րկ յուսահատ, ինկած սյո՛ւէ,
 Հա՛յր արդ կուգամ տուն.
 Զիս հազուկցուր վէրքերս բռնէ,
 Հա՛յր արդ կուգամ տուն.
 Կուգամ տուն, կուգամ տուն . . .

4. Զոհուիլ յօժար Սուրբ սեղանիդ,
 Հա՛յր, արդ կուգամ տուն.
 Սրսկէ՛ վրաս ըսպեղանիդ,
 Հա՛յր արդ կուգամ տուն.
 Կուգամ տուն, կուգամ տուն . . .

5. Կարօտ եմ իր քաւիչ արեան,
 Հա՛յր, արդ կուգամ տուն.
 Լըւա՛ ըլլամ ձիւնի նման,
 Հա՛յր արդ կուգամ տուն.
 Կուգամ տուն, կուգամ տուն . . .

389 ԿԱՏԱՐԵԱԼ, ՆՈՒԻՐՈՒՄ Հոովմ. 12,1.

1. Ահա իմ կեանքս քեզ նուէր,
 Ով կեանք լոյս անըստուեր.
 Թողնած մաշած վիրաւոր,
 Այգատ, անոք, անգոր:

Դուռն եղիր կեանքս ու արև,
 Զօրութիւնըս, արդարև.
 Դիր բալասան լէքքերուս,
 Ով մեծ բըմիշկ Յիսուս:

2. Ահա իմ միտքս քեզ նուէր,
 Ով Արարիչ իմ Տէր.
 Իմ խորհուրդներս ցիրուցան.
 Մեղաց բոյներ դարձան,
 Ով քաւութեան ջինջ աղբիւր,
 Քաւէ մեղքերս բիւր.
 Մտքիս սանձը քու ձեռքդ առ,
 Ով զեկամար ճարտար:

3. Ահա հոգիս քեզ նուէր.
 Արդէն քու կդ էր, ով Տէր,
 Արիւնդդ Սուրբ ու անդին,
 Տուիր հոգւոյս ի գին.
 Թափառեցայ շատ հեռու,
 Եղայ շատ զանցառու.
 Ահա նորէն քեզ դարձայ,
 Հայր իմ մեղայ, մեղայ:

4. Ահա իմ սիրտս քեզ նուէր,
 Ով անճառելի սէր.
 Ատելութեամբ սեցած մուր,
 Կիրքերու կերակուր.
 Անզգայ եմ անտարբեր,
 Մաքրէ, վառէ, ո՞վ Տէր,
 Սրտիս եղիր դու իշխան,
 Հիմա ու Յաւիտեան:

5. Ահա մարմինս քեզ նուէր,
 Մարմինս որ բան չարմեր:

Ապակահանած է անտէր,
 Ոյ մեծ ճարտարապետ.
 Առ դու մարմինս այս տկար,
 Ըրէ հոգւոյդ տաճար.
 Որ հոն հոգւով պաշտեմ Գեղ,
 Սինչև զիս զեր առնես:

390 ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ ԵՐԿՆԻՑ ՄԼԶ ՂԱԼԿ.15.10.

1. *Մեղաւորն երբ դայ շնորհաց զահուն,
 Երկնից մէջ խինդ կ'ըլլայ.
 Երբ դառնայ խաչէն ցոլացող սիրոյն՝
 Երկնից մէջ խինդ կ'ըլլայ:*
 Հրեշտակներն բերկրին ու երգով,
 Սուրբ քնարներ զարնեն խինդով,
 Մեղաւորն երբ դառնայ Փրկչին՝
 Խոնարհի զահուն առջին:
2. *Երբ հոգի մը ծնի երկնային սիրով.
 Երկնից մէջ խինդ կ'ըլլայ.
 Քալէ հաւատքով, Անոր սուրբ սիրով,
 Երկնից մէջ խինդ կ'ըլլայ:*
 Հրեշտակներն բերկրին . . .
3. *Երբ պանդուխտն հասնի գետին միւս եզերքին
 Վերն Սուրբերն կը բերկրին,
 Երբ մտնէ երկինք, Վերին հայրենիք,
 Վերն սուրբերն կը բերկրին:*
 Հրեշտակներն բերկրին . . .

ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

391 (40) Մ Ե Մ Բ Ժ Ի Շ Կ Ը Մատթ. Գ. 12.

The great physician now is near. S. S. S. 89

1. Մեծ բժիշկն ինձ է մօտ ընդ միշտ,
Գթած կարեկից Յիսուս.
Իր խօսքն կը բուժէ ցաւ եւ վիշտ,
Կ'օրհնեմ զանունը Յիսուս.

Քաղցրը երգն ես դու սրբոց,
Քաղցրը ես դու մեր հոգւոց.
Քաղցրագոյն երգը երգոց,
Յիսուս, օրհնեալ Յիսուս.

2. Քաւեց մեղքերս արեամբն անդին,
Կ'օրհնեմ զանունը Յիսուս.
Կ'երթամ խաղաղ մինչև յերկին,
Օրհնել զանունը Յիսուս.

Քաղցր երգն ես դու սրբոց . . .

3. Անհուն փառք, զինեալ գառնուկին,
Մեր բարեխօսը Յիսուս.
Իր Հարսն առնել պիտ' զայ կրկին.
Մեծ Թագաւորը Յիսուս.

Քաղցր երգն ես դու սրբոց . . .

4. Կը փարատէ հոգերս եւ վախ,
Օրհնեալ անունը Յիսուս.
Հոգիս ո՞րքան կ'ըլլայ ուրախ,
Երբ լըսէ զանուն Յիսուս.

Քաղցր երգն ես դու սրբոց . . .

392 (58) ԱՆՈՒՆՍ ԳՐՈՒԱԾ Է Վ.աճ. 20, 12:

H. C. F. 569

1. Կա՞յ արդեօք կենաց մատեանին,
 Մէջը իմ լքեալ անուն.
 Հարցում մը, ո՞հ, կրկին կրկին,
 Կը յուզէ գիշեր ցայգուն.
 Կա՞յ արդեօք, կա՞յ արդեօք,
 Մէջը կենաց մատեանին.
 Գրուած մեր անուն ընտանեօք,
 Ո՞հ, յաւէտ անջնջելի:
2. Առօրեայ հոգեր ու վիշտեր,
 Կ'ընեն դիտ չատ յուսահատ.
 Կը ցնդին բոլոր սև ամպեր,
 Երբ տեսնում անունս հաստատ:
 Կա՞յ արդեօք, կա՞յ արդեօք . . .
3. Թերանայ երբոր իմ սլարտիք,
 Հաւատքը կ'ըստփոփէ դիտ.
 Բայց ի՞նչ է, արդեօք հաւատարմք,
 Թէ փրկուած է իմ հոգիս:
 Կա՞յ արդեօք կա՞յ արդեօք . . .
4. Մեղմ ձայնով կ'ըսէ, Սուրբ հոգին,
 «Յօժար եմ, դու ես դաւակ.
 Պիտ' ըլլաս յաւէտ մէջ զբրախտին,
 Եւ վայլես սէր, կեանք համակ»:
 «Գրուած է, գրուած է,
 Մէջը կենաց մատեանին».
 Հաստատ կերպով կ'ըսէ Հոգին,
 «Գրուած է, քու նոր անուն»:

393 Ի Ն Ծ Ի Հ Ա Մ Ա Ր Բ Կորն. 5. 15.

Alas! and did my savior bleed? G. R. H. 103

1. Աւա՛ղ, և Տէրս խաչին վըրայ,
Մեռա՞ւ արիւն լուայ,
Իր կեանքն յօժար յանձնե՞ց մահուան,
Փրկել յորդ մ'ինձ նըման:
 Խաչին տակ, խաչին տակ,
 Ուր որ նախ լոյս տեսայ.
 Եւ մեղքիս բռնն հոն ինկաւ միանգամ,
 Միանգամ ես հոն փրկութիւն գտայ,
 Եւ արդ. երջանիկ եմ ամէն ժամ.
2. Իմ անօրէնութեանցս համար,
Ո՛հ, ի՞նչ դութ անսահման.
Կըրեց տագնապ, վիշտ չարաչար,
Սիրով մ'անդուգական:
 Խաչին տակ, խաչին տակ . . .
3. Արեւս յերկինս ամօթահար,
Ծածկեց իւր դէմքը լոյս,
Զի մարդկութեան մեղքին համար,
Մեռաւ, ո՛հ Տէր Յիսուս:
 Խաչին տակ, խաչին տակ . . .
4. Տէ՛ր, Գու սիրոյդ ի փոխարէն,
Ի՞նչ կրնամ վճարել.
Ինչ որ ունիմ, և եմ, ամէնն,
Կ'անձկամ Գեղ նուիրել:
 Խաչին տակ, խաչին տակ . . .

394 ԴԱՌՆՈՒԿԻՆ ԱՐԻՒՆԸ Յայն. 1, 5.

1. Փրկի՛ն որդին եմ հիմայ,
Զի իւր արեամբ լուացուեցայ.

Փափաքով կ'ըստասեմ քանի որ կ'ապրիմ,
Սիրոյ թեւերով թռչիմ.

Ամպերէն վեր հայրենիք,

Հոն գիտ պիտի ողջունեն իմ սիրելիք:

Անմեղ Գառնուկին արեամբ,

Լուսացուած ճերմակ զգեստով.

Հաղուած շքեղ պայծառութեամբ,

Յաւերժ հանդէպ փրկչիս քով:

2. Ո՛հ մեծ լուսոյ օրհնեալ Տէրն,

Կարող է գիտ տանիլ վերն.

Իւր հզօր բազկաց մէջ եմ միշտ պահպանուած
Եւ իւր կուրծքին վրայ ինկած:

Քաղցր հանգիստըս հոն կ'առնեմ,

Ալէլուիա, երգելով պիտ' ներս մտնեմ:

Անմեղ Գառնուկին արեամբ . . . :

3. Երկնից զոնէն պիտ' անցնիմ,

Ուր կ'ըստասէ քաղցր Տէրն իմ.

Հոն ուր յոգնածն հանգչի լուծէն յաւիտեան,
Կեանքի չարիք վերջանան:

Փայլուն պրսակ գլուխս զըրած,

Միշտ վայելեմ անվերջ կեանք մը մեծ փառաց:

Անմեղ Գառնուկին արեամբ . . . :

4. Ազատ ամէն յաւերէն,

Ուստառնիմ վեր աստղերէն.

Դէպ ի իմ Հօրըս տուն փայլուն եւ պայծառ,

Ուր փայլի արեւն միշտ վառ:

Յաւերժական քաղցր երգեր,

Պիտ' երգեմ երբ ճերմակ հաղուած ելլեմ վեր:

Անմեղ Գառնուկին արեամբ . . . :

395 Պ Ի Տ Ի Տ Ե Ս Ն Ե Մ Sup 19, 26:

He took my place. (2 P. H.) 94

1. Ըրող աւրաւ յերկնից իջաւ .
Բանը մարմին եղաւ ,
Այո՛ , իմ Տէրս , կրեց զիշտերս ,
Եւ զիս ժառանգ ըրաւ :
Ալէլուեա , Փրկիչըս է նա ,
Նաեւ կենաց ջուր ու մանանա ,
Պիտի տեսնեմ զինք դէմ առ դէմ ,
Երբոր իջնէ իր փառքովն լսեմ :
2. Դու թող ահառն մեր ամէնուն ,
Պատիժն իւր վրան առաւ ,
՛Ի փրկութիւն թափեց արիւն ,
Ո՛հ , Տէրս իմ տեղս մեռաւ :
Ալէլուեա , փառք , ըիւր փառք Փրկչիս ,
Ահառն շնորհքովն փրկեց մինչ իսկ զիս ,
Պիտի տեսնեմ զինք դէմ առ դէմ ,
Երբոր իջնէ իր թաղովն լսեմ :
3. Ողջո՞յն Քեզ այգ , սուրբ , յաղթական ,
Յորում մեր Տէրն յարեաւ .
Դաժան մահուան , փշրեց շղթան ,
Եւ փառք համրարձաւ :
Ալէլուեա , վեհ Սրբայն է նա ,
Եւ յաւիտեան միջնորդ Քահանայ ,
Պիտի տեսնեմ զինք դէմ առ դէմ ,
Երբոր իջնէ նոր երուսաղէմ :

396 (13) ԱՍՏՈՒԾՈՅ ՀՐԱԽԻՐԸ Էսայ , 1, 18

Tho' your sins be as scarlet. S. S. S. 1173

1. Թէ որ ձեր մեղքերն ըլլան , կրկնակի կարմրի
նրման ,
Արդ կ'ըսէ Տէր Եհովան , ձիւնի պէս պիտ' ճեր-
մըկնան :

Որդան կարմրի թէ նըման, ասրի պէս կ'ըլլան
 Թէ որ ձեր մեղքերն ըլլան, կրկնակի կարմրի
 Զիւնի պէս պիտ' ճերմըկնան, [նըման
 Զիւնի պէս պիտ ճերմըկնան:

2. Աղերսող ձայնի՜ն անսա, ո՛հ դարձիր քու Աս-
 տուծոյդ
 Աղերսող ձայնին անսա, ո՛հ դարձիր քու Աս-
 տուծոյդ
 Ինք է քեզ խիստ կարեկից, և դորովագութ,
 Աղերսող ձայնին անսա աղերսող ձայնին ան-
 ո՛հ դարձիր քու Աստուծոյդ, [սա,
 ո՛հ դարձիր քու Աստուծոյդ:

3. Յանցանքներդ պիտի ներէ, և զանոնք պիտ'
 չը յիշէ:
 Յանցանքներդ պիտի ներէ, և զանոն պիտ'
 չը յիշէ
 Լսեցէք ով ժողովուրդք, Տէր Աստուած կ'ըսէ,
 Յանցանքներդ պիտի ներէ, յանցանքներդ պի-
 եւ զանոնք պիտ' չը յիշէ, [տի ներէ,
 եւ զանոնք պիտ' չը յիշէ:

397 (33) ԶԻՆԵԼՆ, ՃԵՐՄԱԿ Սաղմ. 51, 7.

Blessed be the fountain of blood. S. S. S. 113

1. Տէր բացիր աղբիւր փրկարար,
 Մեղաւորք կոչեն քեզ օրհնեալ.
 Զի քու վէրքերովդ ով արդար,
 Կ'ազատինք մեղքէն անիծեալ.
 Թէև մեղաւոր և անզօր,
 Թէև ապստամբ անպիտան.
 Տէր լուա մաքրէ զիս այսօր,
 Ըլլամ սուրբ անրիժ ձեան նըման:

Սուրբ անբիծ մաքուր,
 Սուրբ անբիծ մաքուր,
 Տէր լուա, մաքրէ զիս այսօր,
 Ըլլամ սուրբ անբիծ ձեան նման:

2. Ո՛հ, փրշտ էր իւր սուրբ պրսակ,
 Անդարման վէրքերն զօր կրրից,
 Ո՛հ, ի՞նչ անիրաւ այն ապաակ,
 Զօր կրրից երբ մեզ ապաակց,
 Ո՛հ, ի՞նչ սէր անդին և հրզօր,
 Սէր հըրաշալի աննրման,
 Տէր լուա, մաքրէ զիս այսօր,
 Ըլլամ սուրբ անբիծ ձեան նման:
 Սուրբ անբիծ մաքուր . . .

3. Ո՛հ, փրկիչ սիրուն զիս լուա,
 Զիս պահէ շատ մօտ ազրիւրին,
 Սեղքն ալ չըտիրէ իմ վրայ,
 Աիրտս բլլայ մի գահն Յիսուսի,
 Քու խոստմանդ վրայ օրէ օր,
 Տէր վստահելով պիտ' երթամ,
 Ես մի մեղաւոր խեղճ անզօր
 Մաքուր սուրբ անբիծ պիտ' ըլլամ:
 Սուրբ անբիծ մաքուր . . .

398 (49) ՊԻՏ' ԱՆՅՆԻՄ ՎՐԱՅԵԴ Ելից. 12.13.

Christ our Redeemer died on the Cross. S: H. C. 168

1. Յիսուս փրկիչդ խաչին վրայ մեռաւ,
 Վըճարել պարաքըդ սիրովն անբաւ:

Սրտիկ Գառին արիւնն յորայ հողւոյդ,
 Եւ պիտ' անցնիմ անցնիմ ղըրայէդ,
 Երբ տեսնեմ արիւնն,
 Երբ տեսնեմ արիւնն,
 Երբ տեսնեմ արիւնն,
 Պիտ' անցնիմ. պիտ' անցնիմ ղըրայէդ.

2. Դու ին մեղաւորաց Տէրն կը փրկէ,
 Ինք խոստացած է, պիտ' կատարէ.
 Այն ազրիւրին մէջ լուա քու մեղքերդ,
 Եւ պիտ' անցնիմ անցնիմ ղըրայէդ.
 Երբ տեսնեմ արիւնն . . .

3. Դատաստան կայ ամէնուն համար,
 Ամէնն առնէ հատուցումն արդար.
 Խաղուէ արեան մէջ որ լուա մեղքերդ,
 Եւ պիտ' անցնիմ, անցնիմ ղըրայէդ.
 Երբ տեսնեմ արիւնն . . .

4. Ո՛հ, գութ անճառ, ո՛հ. սէր անսահման,
 Կ'ըզմայլիմ իւր հաւատարմութեան.
 Ե՛կ, ապաստանէ սուրբ արեան տակ,
 Եւ պիտ' անցնիմ, անցնիմ ղըրայէդ.
 Երբ տեսնեմ արիւնն . . .

399 (41) ԴԱՌՆՈՒԿԻՆ ԱՐԻՒՆՐ Ա. ՅԱՂՆ. 1, 7.

Would you be free from your burden? S. S. S. 145

1. Կ'ուզե՞ս ազատ ըլլալ մեղքին բռնէն,
 Մեծ զօրութիւն կայ սուրբ արեան մէջ.
 Կ'ուզե՞ս յաղթող ըլլալ չարին ամէն,
 Մեծ զօրութիւն կայ արեան մէջ.

Զօրութիւն կայ մեծ եւ հրաշալի,
Կառնուկին արեան մէջ.
Զօրութիւն կայ մեծ եւ հրաշալի,
Կառնուկին անդին արեան մէջ.

2. Կուզե՞ս աղատ ըլլալ չար կիրքերէն.
Մեծ զօրութիւն կայ սուրբ արեան մէջ.
Ե՛կ. լուացուէ Դոզգոթա աղբիւրէն,
Մեծ զօրութիւն կայ արեան մէջ.
Զօրութիւն կայ մեծ եւ հրաշալի. . . .

3. Կ՛ուզե՞ս ըլլալ քան զձիւն սոյիտակ,
Մեծ զօրութիւն կայ սուրբ արեան մէջ.
Մեղքիդ բիծերն անհետին արեան մէջ,
Մեծ զօրութիւն կայ արեան մէջ.
Զօրութիւն կայ մեծ եւ հրաշալի. . . .

4. Կ՛ուզե՞ս Տէրօջ Զիսուսին ծառայել,
Մեծ զօրութիւն կայ սուրբ արեան մէջ,
Միշտ իր անուան օրհնութիւն ալ երգել.
Մեծ զօրութիւն կայ արեան մէջ.
Զօրութիւն կայ մեծ եւ հրաշալի. . . .

400 ԽՄ ԱՆՈՒՆՍ ԳԻՈՒԱԾ ԿԱՅ ՂԱԼ. 10, 20.

Lord I care not for riches.

1. Ձեմ փնտռեր արծաթ, ոսկի, աշխարհի փառ-
քերն սին,
Սյլ կ'ըզձամ ես՝ երկնի սուրբ՝ միանալ փարա-
խին,
Ո՛հ, կենաց զբքիդ մէջը՝ այն մաքուր էջին
վրայ՝
Ըսէ՛ ինձ, ո՛վ Փրկիչ իմ, իմ անունս գրուած
կա՞յ,
Իմ անունս գրուած կա՞յ այն մաքուր էջին վրայ,
Ո՛հ, կենաց զբքիդ մէջը իմ անունս գրուած կա՞յ.

2. Իմ մեղքերս, Տէր, խիտ շատ են՝ ձողու աւա-
զին նման,
Բայց արիւնդ՝ ո՞նք փրկիչ իմ է ինծի բաւական
Քու շնորհքդ անսահման է, ու խոստումդ հաս-
տատուն,
Թէ մեղքերն որդան կարմիր՝ ճերմկեան իրրե-
ւմ անունս զբուսած կա՞յ . . . [ձիւն,
3. Այն չքնաղ սուրբ քաղաքը, պալատներն ոսկե-
զէն,
Ուր անթիւ փրկեալներն միշտ Դաւնուկին երգն
կ'երգեն,
Ուր բնաւ մեղք չիմաներ, ուր կ'ապրին սուրբ
անմահ,
Հո՛ն կենաց գրքիդ մէջը իմ անունս գրուած
Իմ անունս զբուսած կա՞յ . . . [կա՞յ,

401 (44) ԱՄԷՆՆ ԷՐ ԻՆՁ ՀԱՄԱՐ Յովն.19 17.

My saviour, oh, what glories shine. (S. S. S. 613)

1. Փառաց աթոռն ու երկինքը,
Ինծի համար իրեն փառքը.
Իմ Փրկիչը թողուց եկաւ,
Ինծի համար մի Ան մեռաւ.
Այո՛, ամէնն էր ինձ համար,
Իր սէրն է անհուն, անհամար.
Միշտ թող այս ըլլայ իմ երգըս,
Մեռա՞ւ ինծի համար իմ Տէրս:

2. Յուզիչ երգը սուրբ հրեշտակաց,
Հրէառտանը, ամբողջ սարսեց.
Ինձ համար նախախնամութիւն,
Է՞ր այսպէս իր կարգադրութիւն.
Այո՛, ամէնն էր ինձ համար . . .

3. Փրկիչս կ'ըսէ, «Իմ բազկաց մէջ.
Քեզի միշտ կայ Հանդիսս անվերջ».
Թէ զընեմ հոն յոգնած գրչուսս,
Հանդիսս պիտի գտնէ հոգիս.
Այո, ամէնն էր ինձ համար . . .

4. Աղօթելով ի Դեթսեման,
Արիւն քրտինք թափեց զիշերն.
Ո՛հ զայրս պատիմն ու անէծք,
Ինձի համար ինքք կրքեց.
Այո, ամէնն էր ինձ համար . . .

5. Ինձի համար խաչին վրայ,
Դըլուին ձեռք ուսին վրայ.
Անգին արիւնք ո՛հ թափեց,
Ինձ համար կեանքը նուիրեց.
Այո, ամէնն էր ինձ համար . . .

402 (39) ՍԷՐՆ ՎԵՐՅՈՒՅ ԶԻՍ Սաղմ. 40, 2.

I was sinking deep in sin. Sl. Sl. S. 3!

1. Ո՛րնչ կ'իջնէի զինն մեղքի,
Որէ օր աւելի.
Շատ հեռի եզրէն պայծառ,
Յոյս չըկար ինձ համար.
Բայց լըսեց Փրկիչն իմ ձայն,
Ինձ եկաւ օգնութեան.
Վեր բարձրացուց զիս ջուրէն,
Ա՛լ եմ իրենն,
Սէրն վերցուց զիս, սէրն վերցուց զիս,
Երբ չըկար ոչ մի հար, սէրն վերցուց զիս:

2. Ինձ պարզեւեց սիրա մը նոր,
 Զայն կուտամ ես Սնոր,
 Սիւտ ներկայ է հետս է Ան,
 Սէրն հրդօր ինձ պաշտպան,
 Այ ինքն է Տէրն իմ կեանքին,
 Ես՝ ծառան իւր փառքին,
 Իմ երգս ալ նոր՝ մինչ ի մահ՝
 Իւր սէրն ըլլայ,
 Սէրն վերցնց զիս . . .

3. Դու խոր ծովէն կատաղի՝
 Վե՛ր նայէ Յիսուսի,
 Տէրն է ծովուն, տայ հրաման,
 Բռնուն ալիք տեղի տան,
 Տայ քեզ լըման փրկութիւն,
 Քեզ սըրբէ սուրբ արիւն,
 Նոր կեանք օրհնեալ՝ սէրն հրդօր,
 Տայ քեզ այսօր,
 Սէրն վերցնց զիս . . .

403 ԱՐԻԻՆՐ ՓՐԿԵՅ ԶԻՍ Կող. 1, 20.

S. G. G. 109

1. Ալ չեմ գերի ես Սատանին,
 Ոչ ալ մեղաց ծառայ,
 Ազատ եղայ այն վայրկեանին,
 Երբ իմ փրկիչս գտայ,
 Արիւնն արիւնն մահուանէ փրկեց զիս,
 Արիւնն փրկչիս ազատ ըրաւ հոգիս.
2. Գառնուկն մեռաւ խաչին վըրայ,
 Ո՛հ, փրկիչ պատուական.

Իր մահուան մէջ ես կեանք զտայ,
Ենվերջ փառք իր Անուան:

Արիւնն, արիւնն մանուանէ վրկեց զիս . . .

3. Հեղեալ արեամբն ի Դողգոթա,

Խաղաղութիւն եղաւ,

Էս շօրքս հետ հաշտուեցայ:

Թշնամութիւն զերցաւ:

Արիւնն արիւնն մանուանէ վրկեց զիս . . .

4. Սրիւնն կ'ընէ հողւոյն տաճար զիս,

Քառութեամբ ձրի:

Յնծում ունիմ արդ անսպառ,

Չի ալլ ես չեմ գերի:

Արիւնն արիւնն մանուանէ վրկեց զիս . . .

404 (55) ՊԵՏԻ ԵՐԴԵՄ ԵՍ ԸԵՂ. 87, 1:

I will sing the wondrous story. S. S. S. 875

1. Պիտ' երգեմ ես սէրն իմ փրկչիս,

Որ մեռաւ մեղքիս համար:

Թողուց իր վեհ փառք երկնային,

Խաչն առաւ սիրայօժար:

Պիտ' երգեմ ես զէպքն աննրման,

Ձոր ցոյց տայ ինձ Դողգոթան:

Երգէ հեալն սրբոց անմահ,

Որք պատեն ծովն բիւրեղեայ:

2. Երբ էի մի ոչխար մոլար,

Ձիս շինառեր Տէրս ամէն օր:

Ան գրտաւ զիս, ըսաւ «մի' լար,

Կը սրբրեմ արցունքդ բոլոր»:

Պիտ' երգեմ ես զէպքն աննման . . .

3. Վրչտակոծ իմ հիւանդ հոգին,
Կերուած ժանտ մեղքի համէն՝
Տէրն սիրով մը սուրբ կաթոգին,
Թուժեց զբուռն զախս ամէն:
Պիտ' երբեք եւ զեպմն տննման . . .

4. Դեռ կուգան մութ խաւար օրեր,
Կը քալեմ վրչտաց շաւղէն:
Բայց միշտ հետս է Փրկիչ իմ Տէր,
Իր քայլերն շաւղս կ'ուղղեն:
Պիտ' երբեմ ես զեպմն տննման . . .

5. Թաւային երբ ոտքերուս քով,
Յորդանոս ջուրերն գետին:
Պիտ' անցնէ զիս՝ Տէրն ապահով,
Միանալ սրբոց խումբին:
Պիտ' երբեմ ես զեպմն տննման . . .

405 (54) Ն Ա Կ Ա Ր Ո Ղ Է եր. 7, 25.

Such a wonderful Redeemer I have found. Alex. 1:0

1. Ըսքանչեւի Փրկիչ մ'ունիմ մէջն հոգւոյս,
Ան է միայն խաղաղութիւնս, լոյս և յոյս:
Ազատած եմ օրէնքէն, աղատ մեղքի անէծքէն
Կարող է վրբիել քեզ ալ, միայն եահլէն:
Կարող է, Ան յաւիտեան,
Փրկիելու մեղքէ համայն:
Ե՛կ մեղաւորը ըտապէ, բոլոր մեղքէդ կ'ազատէ:
Զի կարող է վրբիելու քեզ Ան միայն:

2. Ոչինչ ունիմ զոհելու սիրոյդ փոխան,
Միակ յոյսըս Դու ես, ով սիրոյ ովկեան:

Միշտ յարեւոյժ սուրբ խաչիդ, կ'եղգեմ ուրախ
 Ան է կարող փրկելու մեզքէ միայն: յաւիտեան
 Կարող է, Ան յաւիտեան . . .

3. Ո՛հ, ինչ շքեղք փրկարար ե կատարեալ,
 Շքեղք անհուն աստար հոգւոյս, դու խաչեալ
 երբ փոթորիկն սպառնայ, կը յենում քեզ ան-
 ջի կարող ես փրկելու, զիս դու միայն: չաղար
 Կարող է, Ան յաւիտեան . . .

4. Քեզի համար պատրաստուած է ճոխ սեղան,
 Մորթեաւ գառնուկն է քու համադամ:
 Քեզ կը սիրէ յաւիտեան, բարեկամ է իրական,
 Ձի կարող է փրկելու, քեզ Ան միայն:
 Կարող է Ան յաւիտեան . . .

406 ՆԱ. ԳԱՄՈՒԵՅԱԻ ԻՆՁ ՀԱՄԱՐ Գաղ 2, 20:

What a wonderful, wonderful Saviour. S. H. C. 105

1. Ի՛նչ հիանալի Փրկիչ մը ունիմ,
 Ձի մեռաւ խաչին վրայ վասն իմ,
 Թափելով իր անգին սուրբ արիւնն,
 Որ փրկէ ինձ նման մեղաւորն:
 Նա զամուսկաւ խաչին, ինձ համար,
 Նա զամուսկաւ խաչին, քեզ համար,
 Խաչին վրայ բարձրացաւ, վասն իմ մեռաւ
 Նա զամուսկաւ խաչին, ինձ համար:

2. Ան թողուց իր երկնային փառքը,
 Կատարելու հօրը կամքը:
 Ծընանելով կոյս Մարիամէն,
 Առաւ Նա մարդու կերպարան:
 Նա զամուսկաւ Խաչին ինձ համար . . .

3. Վերաւորուեցաւ մեզի համար,
եւ կրեց նաեւ մեր պաւեր,
ինք բժիշկ է մեր հիւանդութեանց,
Մըխիթարիչն է մեր վշտաց,
Նա զամուեցաւ խաչին ինձ համար . . .
- 4 Ոյսպէս տըւաւ իր կեանքն վասն աշխույ,
Փրկելու աշխարհ իր մեղաց,
Արդ կ'ստորաստէ պալատներ մեզի,
Օր մը մեզ իր քովն պիտ' տանի,
Նա զամուեցաւ խաչին, ինձ համար . . .

407 (67) ԿԸ ՍԻՐԵՄ ՓՐԿԻՉՍ ԱՅՈՒՆ.4.19.

Gene from my heart the world. F. S. 38

1. Որպէս եղան հրապոյրներ եւ աշխարհ,
երբ խաչին տակ ծուներ իջայ ես խոնարհ,
Հոն իր արեան մաքրող զօրութեան տակ,
Յիսուս լուաց զիս, եւ բաւ ձիւնէն ճերմակ,
Կր սիրեմ փրկիչըս, զի նախ ինք զիս սիրեց,
Եւ զառն խաչին մահուամբ բոլոր մեղքերս
քաւեցի:
2. Երբեմն մեղքով դատապարտուած էի,
Երբեմն կրօնի եւ մոլութեանց գերի-
երբեմն, իմ Հօր, որդի մը ապստամբ,
Բայց արդ շքնորհք զըտած եմ Յիսուսի արեամբ
Կր սիրեմ փրկիչս . . .
3. Կապուած էի, զիս արձակեց Յիսուս,
Ես կոյր էի, աչքերս բացաւ ի լոյս,
Մեռած էի ինք զիս կենդանացուց,
Որ պատմեմ ամէնուն այն ոէրն, զոր ինձ ցու-
կր սիրեմ փրկիչս . . . [ցուցի

ՀՈԳԵԻՈՐ ԿԵԱՆՔ

408

1^o և 2^o ՊԵՏԻ ԸԼԼԱՐ ԱՅՍ ԱՇԽԱՐՀ

ԵԹԷ ԶԴԱՐ ՅԻՍՈՒՍ ՂԱԼԿ. 19. 10.

1. Ո՛հ, կորսուած. կորսուած էր այս աշխարհ,
Փա՛ռք, եկաւ Յիսուս:
Մեծ Իշխան յաղթութեան,
Մեծ Իշխան յաղթութեան,
Մեծ Իշխան յաղթութեան.
Ալէլուեա, ալէլուեա, ալէլուեա,
Ալէլուեա, ալէլուեա, ալէլուեա:
2. Նա խաչին վրայ մեռաւ քեզ ու ինձ համար.
Փա՛ռք, փառք քեզ Յիսուս.
Մեծ Իշխան յաղթութեան . . .
3. Արդ, երջանիկ եմ ես, ուրախ Տէրօջմովս.
Փա՛ռք, փառք քեզ Յիսուս.
Մեծ Իշխան յաղթութեան . . .
4. Շուտ պիտի դայ ահաւոր մեծ օրն զերջին.
Եւ նաեւ Յիսուս:
Մեծ Իշխան յաղթութեան . . .
5. Այն ատեն մինք պիտի ելլենք այն տեղը,
Ուր որ է Յիսուս:
Փա՛ռք. Անոր սուրբ անուան,
Փա՛ռք, Անոր սուրբ անուան,
Փա՛ռք, Անոր սուրբ անուան:
Ալէլուեա, ալէլուեա, ալէլուեա,
Ալէլուեա, ալէլուեա, ալէլուեա,

409

Ս Լ Բ Ա Ս Տ Ո Ի Ն Ո Յ

1. Սէր Աստուծոյ արեւ անշէջ,
 Խեղճ սըրտերու համար,
 Թէ յոյսդ ծաղի իմ հոգւոյս մէջ,
 Կ'անուշնան ցաւք զըմբար,
 Դիչերն կ'անցնի սըրտէս տըրտում,
 Փարատի մէզն հոգւոյս,
 Կ'ըզգամ հրճուանք կեանք անպատում,
 Ալ չեմ բլլար անյոյս:
 Սէրն Աստուծոյ զեզուն ձրի,
 Փայլի շողայ զարէ ի դար,
 Ինծի համար, քեզի համար,
 Քաջէ Իրեն թուրք աշխարհ:
2. Երբ թափանցեց իմ սիրտս խաւար,
 Խաչէն մի ճառագայթ.
 Էս արթընցայ Տէրոջս համար,
 Եւ մեղքս եղաւ անյայտ:
 Ալ ես զխտեմ անկէ իվեր,
 Ով զիս սիրեց մինչ մահ,
 Իմ սիրտս տուի Փրկչիս նուէր,
 Որ ինձ համար մեռաւ:
 Սէրն Աստուծոյ զեղուն ձրի . . .
3. Սէրն Աստուծոյ արեւ սիրոյ,
 Որ շողաց աննման,
 Է Յիսուս Տէր Էմմանուէլ,
 Հիմա ու յաւիտեան:
 Հոս ձորին մէջ ես արտասուաց,
 Դողեմ իր սէրն անմահ,
 Վերն ալ երգեմ հետ հրեշտակաց,
 Երբ աչքս Քնդ տեսնայ:
 Սէրն Աստուծոյ զեղուն ձրի . . .

410 (61) ՓԱԹՔ ԱՆՈՐ ԱՆՈՒԱՆ Զաւ. 12, 1.

Down at the cross where my saviour die¹, S. V. 3:4

1. Տէր Յիսուսի եկայ ի Դողդոթա,
եւ մեղքերուս թողութիւն խնդրեցի.
Ոռատ սրտեց արիւնք սրբտիս վրայ,
Փառք Անոր սուրբ անուան,
 Փառք Անոր սուրբ անուան,
 Փառք Անոր սուրբ անուան.
Ոռատ սրտեց արիւնք սրբտիս վրայ,
Փառք Անոր սուրբ անուան,
2. Տես իւր կողէն կը հոսի ջինջ աղբիւր,
Ի՞նչ պապակով ես առատ ըմպեցի.
Անով Յիսուս կը պահէ զիս մաքուր,
Փառք Անոր սուրբ անուան,
 Փառք Անոր սուրբ անուան . . .
3. Հոս խաչին քով մեծ շքնորհք բստացայ,
Բաքանչելի ազատում մեղքերէս.
Եւ արդ Յիսուս սրտիս մէջ կը կենայ,
Փառք Անոր սուրբ անուան,
 Փառք Անոր սուրբ անուան . . .
4. Եկ մեղաւոր, զու ալ եկ Յիսուսի,
Անով զըտնես փրկութիւն կատարեալ,
Ան սրբութիւն պիտ' ըլլայ և քեզի,
Փառք Անոր սուրբ անուան,
 Փառք Անոր սուրբ անուան . . .

411 (61) Փ Ր Կ Ո Ւ Ա Մ Ե Մ Sps. 3,2—7.

I have a song I love to sing. S. V. 94

1. Ունիմ մի երգ սիրեմ երգել,
 Փրկանքս տալէն հետէ.

Փրկչիս անունն պատուել, յարգել.

Փրկանքս տալէն հետէ,

Փրկանքս տալէն հետէ,

Փրկանքս տալէ հետէ,

Պիտ' զովեմ իւր սուրբ անուն,

Փրկանքս տալէն հետէ,

Պիտ' զովեմ իմ Փրկչիս սէրն անհուն,

2. Գրիստոս կուտայ պէտքերս կ'ըսեմ,

Փրկանքս տալէն հետէ,

Իւր կամքն ընել փափաքս վըսեմ,

Փրկանքս տալէն հետէ,

Փրկանքս տալէն հետէ

3. Ունիմ վրկայ պարզ ու մէկին,

Փրկանքս տալէն հետէ,

Յրուէ վախերս կասկածք կրկին,

Փրկանքս տալէն հետէ,

Փրկանքս տալէն հետէ

4. Ժըպիտ մ'ունիմ խինդ անպատում,

Փրկանքս տալէն հետէ,

Արեան պարտ եմ այս իմ ցնծում,

Փրկանքս տալէն հետէ,

Փրկանքս տալէն հետէ

5. Ունիմ ո՛հ, ես պատրաստ մի վայր,

Փրկանքս տալէն հետէ,

Ուր պիտ' ընակիմ յաւերժաբար,

Փրկանքս տալէն հետէ,

Փրկանքս տալէն հետէ

412 Փ Ա Ռ Ք Ք Ե Զ Սալմ. 103, 1.

1. Դու մեծ Աստուած, երբ զննեմ այս աշխարհ,
Զոր ըստեղծած ես խօսքով քու հզօր.

Երբ միաքս բերեմ կեանքերն այն անհամար,
Զորս կը պահեա՝ կը հողատս ամէն օր:

Յայնժամ գոչեմ վառք քեզ, ամէն, իշխան,
Ի՛նչ մեծ ես Դու, ի՛նչ մեծ ես Դու:

Յայնժամ կոչեմ վառք քեզ, ամէն, իշխան,
Ի՛նչ մեծ ես Դու, ի՛նչ մեծ ես Դու:

2. Երբ վեր նայիմ լուսինին ու արեուն,
Երբ երկնից մէջ շողալով թառալին:
Երբ զիտեմ հոյն անհամար աստղերուն,
Որք լոյս սփռեն մութ, մռայլ գիշերին:

Յայնժամ գոչեմ փառք քեզ . . .

3. Երբ Տէրս ինձի իր խօսքով հանդիպի,
Երբ տեսնեմ եւ մեծ գործերն իր շնորհաց:
Երբ ես ճանչնամ իմ մեղքերս ահուկի,
Որոնք ծովուն անդունդն է թաղուած:

Յայնժամ գոչեմ փառք քեզ . . .

4. Երբ տեսնեմ եւ Տէրն Յիսուս երկրի վրայ,
Որ կերպարանք առած է ծառայի:
Երբ տեսնեմ Զինքն բարձրացած խաչին վրայ,
Որ վերցնէ մեղքն ամբողջ աշխարհի:

Յայնժամ գոչեմ փառք քեզ . . .

5. Երբ կենացս բռն ծանրապէս զիս ճնշէ,
Երբ իմ հոգիս մինչեւ մահ վըշտանայ:
Բայց երբ Տէրն զիս անդունդէն ապառէ,
Մխիթարէ ու վախերս չքանայ:

Յայնժամ գոչեմ փառք քեզ . . .

6. Երբ վերջապէս Տէրն իջնէ ամպերով,
Ուրբ հրեշտակաց խումբերով փառաւոր:
Երբ իրեններն վեր առնէ նա իր քով,
Երբ յայտնուի մեր Տէրն իբր թաղաւոր:

Յայնժամ գոչեմ փառք քեզ . . .

413 (63) Ա Ջ Ա Տ Ե Մ Pod. G. 22:

G. C. 173

1. Թիսուս ներած է իմ մեղքերս,
Ազատ եմ, ազատ եմ.
Ջոհած է կեանքն ինձ համար Տէրս,
Ազատ եմ, ազատ եմ.
Ալէլուիա, ալէլուիա,
Թիսուս մեռաւ ինձ համար.
Ալէլուիա, ալէլուիա,
Ազատ եմ, ազատ եմ.
2. Վըստահելով ես իմ փրկչիս,
Եղայ ազատ, ալ ազատ.
Սուրբ Հոգւոյն ուժն կը պահէ զիս,
Ալ եմ ազատ, միշտ ազատ.
Ալէլուեա, ալէլուեա . . .
3. Մեղքի բոլոր չըզթաներէս,
Ազատ եմ, ազատ եմ.
Ալ Աստուծոյ սրդի եմ ես,
Ազատ եմ, ազատ եմ.
Ալէլուեա, ալէլուեա . . .
4. Դերեւարող չար կիրքերէս,
Ազատ եմ, ազատ եմ.
Եւ յուսահատ իմ վիճակէս,
Ազատ եմ, ազատ եմ.
Ալէլուեա, ալէլուեա . . .

414 Ե Ս Պ Ի Տ Ի Ե Ր Պ Ե Մ Յովն. 14, 27.

1. Թող պատեն զիս վիշտեր ու ցաւ,
Թող բաղղն կրկնէ իւր բիւր հարուած.

Էս վախ չունիմ . սարսափ մի բնաւ ,
 Զի հոգւոյս մէջ կայ լոյս Աստուած :
 Եւ բոլորէն վեր ես պիտ' երգեմ ,
 Ես պիտ' երգեմ , ես պիտ' երգեմ .
 Եւ բոլորէն վեր ես պիտ' երգեմ ,
 Յիսուսի կեանքն ու սէրն վրսեմ :

2. Ի՞նչ ալ ըլլայ կեանքիս բաժին ,
 Որչափ ունին շունչ իմ թոքեր .
 Ես պիտ' երգեմ իմ մեծ Փրկչիս ,
 Տըխուր մահն ու իւր անհուն սէր :
 Եւ բոլորէն վեր ես պիտ' երգեմ . . .

3. Ի՞նչ , վախ չունին շիրիմն ու մահ ,
 Ալ ցուրտ հոգէն ես չեմ զոգար .
 Շիրմէն անդին ինձ կեանք մը կայ ,
 Անդունդին մէջ լոյս փրկարար :
 Եւ բոլորէն վեր ես պիտ' երգեմ . . .

415 (75) ՅԻՍՈՒՍ ՍՐՏԻՍ ՄԷՋ 3աՊՖ.14.23. 15,9.

What a wonderful change. G. M. 472

1. Ի՞նչ զարմանալի կերպով իմ կեանքս փոխուե-
 ցրբ Յիսուս եկաւ սրբտիս մէջ . [ցաւ
 Շատոնց փնտռած լոյսըս հոգւոյս մէջ ծաղկեցաւ
 Երբ Յիսուս եկաւ սրբտիս մէջ ,
 Երբ Յիսուս եկաւ սրբտիս մէջ ,
 Երբ Յիսուս եկաւ սրբտիս մէջ .
 Սիրոյ ցնձման գետեր հոգիս ողողեցին
 Երբ Յիսուս եկաւ սրբտիս մէջ :

2. Թողուցի իմ մոլար կեանքըս թափառական ,
 Երբ Յիսուս եկաւ սրբտիս մէջ .

Եւ անթիւ անհամար մեղքերս մաքրուեցան,
Երբ Յիսուս եկաւ սրբախ մէջ,
Երբ Յիսուս եկաւ սրբախ մէջ. . . .

3. Լեցուեցայ յոչսով մը հաստատուն, անվեհեր,
Երբ Յիսուս եկաւ սրբախ մէջ,
Կասկածի սեւ ամպեր ճամբաս չեն մըթաղներ,
Երբ Յիսուս եկաւ սրբախ մէջ,
Երբ Յիսուս եկաւ սրբախ մէջ. . . .

4. Մահուան ձորին մէջ ինձ համար լոյս ծագեցաւ
Երբ Յիսուս եկաւ սրբախ մէջ,
Եւ սուրբ քաղքին դռներն ինձի բաց են հար-
Երբ Յիսուս եկաւ սրբախ մէջ, [կաւ
Երբ Յիսուս եկաւ սրբախ մէջ. . . .

5. Խոստում կայ թէ օր մը հոն բնակիլ պիտ' եր-
Երբ Յիսուս եկաւ սրբախ մէջ, [թամ,
Եւ չընորհք կ'ընդունիմ ամէն օր, ամէն ժամ,
Երբ Յիսուս եկաւ սրբախ մէջ,
Երբ Յիսուս եկաւ սրբախ մէջ. . . .

416 (70) ԿԱՅ ԼՈՅՍ ՊԱՅՅԱՌ. ԲԹԱՊ. 23. 4

There is sunshine in my soul to day. S. S. S. 872

1. Կայ լոյս պայծառ և աննըման,
Փայլի մեր վրայ անշէջ.
Պայծառ քան մեր արև զարնան,
Փայլի աշխարհի մէջ.
Զի Փըրկիչ մեր, Տէր Յիսուս մեր,
Սրեպակ սիրոյ արդարութեան.
Դու ես արև, Դու ես մեր յոյս,
Դու աղբիւր ևս բերկըութեան.

2. Երբ Տէրն արև. արդարութեան,
 Ուրտին վրայ մեր փայլի.
 Ծաղկունք շնորհաց կենդանութեան,
 Ամէն օր հոն ծաղկի:
 Զի Փրկիչ մեր, Տէր Յիսուս մեր,

3. Խաւարն ու մեղք անյայտ կ'ըլլան,
 Երբ Տէրն լոյս տայ Վերէն.
 Սէր, յոյս, հաւատք շատ գօրանան,
 Ահին բարիք ամէն.
 Զի Փրկիչ մեր Տէր Յիսուս մեր . . .

4. Այսօր թող երգ ուրախութեան,
 Ամէն սրբաէն զդիւ.
 Հրեշտակք լըսեն մեր հրգ ցնծման,
 Աշխարհ համայն բերկրի:
 Զի Փրկիչ մեր, Տէր Յիսուս մեր . . .

ՀԱԻԱՏԱՑԵԱԼԻՆ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆԸ

417 Ո՛ւ, Խե՛ն ԱՍՏՈՒԱՆ ՀՐԱՇԱԼԷԱՑ Սաղմ. 86.10.

1. Ո՛ւ մեծ Աստուած, հրաշքներ հրգօր,
Յուցնես դու միշտ մարդոց բոլոր.
Բայց սէրդ անհուն՝ որ մեղքս ներէ,
է վեր ամէն հրաշքներէ.
Ո՛ւ է ներող Աստուած քեզ պէս,
Յուցնող ձըրի, ճոխ շնորհք պէսպէս.

2 Ո՛հ երանի աշխարհ համայն,
Բղգար, վայլեր սէրդ աննրման.
Ո՛հ թէ երկիր՝ վեհ երկինքին,
Տար արձագանգ՝ շնորհաց երգին.
Ո՛ւ է ներող Աստուած քեզ պէս,
Յուցնող ձըրի, ճոխ շնորհք պէսպէս.

418 Տ Է Ր Ն Օ Ր Հ Ն Է Սաղմ. 103

1. Տէրն օրհնէ, Տէրն օրհնէ, Տէրը՝ փառաց Թա-
գաւորը.
Տէրն օրհնէ, ո՛ւ իմ անձս, Տէրը երկնից տի-
0ն, քընարով. [բապետը.
Քաղցրը հրգով, դաշն նրազով,
Օրհնէ Անոր Սուրբ անունը.

2. Տէրն օրհնէ, Տէրը՝ որ երկնի, երկրի կառա-
վարն է,
Որ արծուի պէս քեզ իւր հրգօր թեւոց վրայ
Քեզ կը պահէ. [կ'առնէ,
կ'աղատէ մահէ, ահէ,
Սե՛ծ թշնամին վար կը զարնէ.

3. Տէ՛րն օրհնէ, Տէրը որ ասողք մարմին կուտայ
 քեզի,
 Կը հողայ քու կեանքիդ բոլոր պէտքերն միշտ
 Տէրն ողորմած, [լիուլի,
 Ո՛հ, ո՛րչափ է քեզ օգնած.
 Թեւերն կ'ընէ քեզ հովանի:
4. Տէ՛րն օրհնէ, ո՛վ իմ անձս, զի քեզ պատէ ծովն
 իր շնորհաց
 Որ սիրոյ հեղեղներ երկնից՝ քու վրայ է ան-
 իհնչ չէ կարող, օրհած
 Մերն Տէրն ամենակարող.
 Որ քեզ սիրովն է հանդիպած:
5. Տէ՛րն օրհնէ, ո՛վ իմ անձս, իր Սուրբ անուն
 ամէն ասին,
 Թող իր փառքն հռչակեն բոլոր երկրի բրնա-
 թումբն հրեշտակաց, [կիշներն:
 Թող գովեն մեր Տէրն Աստուած,
 Բոլոր երկիրն ըսէ, Ամէն:

419

Յ Ի Ս Ո Ւ Ս Ի Ա Ն Ո Ւ Ն Ը Գործք. 4-12.

The name of Jesus. S. Sv. 78

1. Անոյ է անունն Յիսուսին,
 Որքան քաղցր հնչէ ահանջին.
 Ո՛հ, կը բերկրէ սիրտս լիովին,
 Սիրուն անունն իմ Փրկչին:
 Յիսու՛ս, ի՛նչ անոյ անուն,
 Յիսու՛ս, ամէն օր կս նոյն.
 Յիսու՛ս, թող սուրբներն երգեն,
 Արժանի կս գոհութեան:

2. Սիրեմ անունը իմ փրկչին,
 Զի կը բուժէ վէրքեր իմին,
 Բոլոր վախերս կը փարատէ,
 Սիրեմ անունն Յիսուսին.
 Յիսուս ի՞նչ անոյց անում . . .
3. Սիրեմ լսել անունն փրկչիս,
 Որ յարատե հրճուէ հոգիս,
 Հնչումն Անոր սրբէ արցունքս.
 Գովեցէք անունն Յիսուսի.
 Յիսուս ի՞նչ անոյց անում . . .
4. Տկար շունչս կարող չէ երգել,
 Փրկչիս անոյշ անունն սրհնել,
 Ո՛հ, թէ համայն աշխարհ երգէր,
 Գովէր անունն Յիսուսի.
 Յիսուս, ի՞նչ անոյց անում . . .

420 ՏԷՐ ՅԻՍՈՒՍ ՍԷՐ Է Սաղմ. 116. 13

1. Տէր Յիսուս սէր է,
 Նա զիս կը սիրէ.
 Փըրկիչըս սէր է,
 Նա զիս կը փրկէ.
 Ուստի նորէն կ'երգեմ,
 Իմ տէրըս սէր է.
 Փըրկիչըս սէր է,
 Նա զիս կը սիրէ.
2. Մեղքի բեռան տակ,
 Ճնշուած մնացի,
 Մեղքի բեռան տակ,
 Ես շատ հեծեցի.
 Ուստի նորէն կ'երգեմ . . .

3. Աստուած իբր Որդին,
 Ղրբկեց երկինքէն,
 Եւ նա զոհուեցաւ,
 Իմ սիրոյս համար,
 Ուսի նորէն կ'երգեմ
4. Ո՛վ հաւատարիւ,
 Փրկիչ իմ Յիսուս,
 Որեւի Յիսուս,
 Դուն զիս կը սիրես,
 Ուսի նորէն կ'երգեմ
5. Դուն խաչը ելար,
 Իմ սիրոյս համար,
 Դուն խաչը ելար,
 Եւ չարչարուեցար,
 Ուսի նորէն կ'երգեմ
6. Բարձրագոյն սէրը,
 Խորթուած Գառնուկին,
 Բարձրագոյն սէրը,
 Խոցուած կողերուն,
 Ուսի նորէն կ'երգեմ
7. Փառք ի բարձունքս,
 Քանի որ կ'ապրիմ,
 Փառք ի բարձունքս,
 Յաւիտեան Քեզի,
 Ուսի նորէն կ'երգեմ

421 ՅԻՍՈՒՍԻ ԱՆՈՒՆՐ ԱՊԵՏ. 1, 8.

There is a name I love to hear.

1. Յիսուս անունն, ո՞րքան սիրուն,
 Սիրելուն՝ հոգւոյս յնձման.

Ինձի կ'ըլլայ երգ օրն ի բուն,

Անունն ա՛յն պատուական.

Ա՛հ կը սիրեմ Յիսուս, ա՛հ, ա՛րքան կը սիրեմ,

Ա՛հ կը սիրեմ Յիսուս, զի նախ ինք զիս սիրեց.

2. Այն անուն պատմէ սէրն Փրկչին,

Որ ինձ համար մեռաւ,

Այն կը յայտնէ արիւն անցին,

Որ ինձ փրկանք եղաւ.

Ա՛հ, կը սիրեմ Յիսուս . . .

3. Այն կ'ըսէ ինձ, «Հայրն երկնաւոր,

Անի գանձ անսպաս».

Կը կերակրէ զիս օրէ օր,

Ապրիլ իրեն համար.

Ա՛հ, կը սիրեմ Յիսուս . . .

4. Կ'ըսեմ թէ սիրտ մը վեհօրէն,

Կ'ըզգայ իմ խոր վիշտերս.

Անկէ բաժին կ'առնէ իրեն,

Կը սրբէ արցունքներս.

Ա՛հ կը սիրեմ Յիսուս . . .

422 (97) ՇԱՏ ՍԻՐԵՄ ՔԵՉ Յովն. 21, 15.

More love to Thee O Christ. S. S. S. 632

1. Շատ սիրեմ Քեզ Յիսուս, շատ աւելի,

Այս է սրտիս ժամաք Տէր պաշտելէ,

Լքսէ արդ. պաղատանքս Տէր շատ սիրեմ ըզՔեզ,

Տէր սիրեմ Քեզ, շատ աւելի.

2. Շատ զօրութիւնս առաւ հաճոյք ունայն,

Բոլոր վշտիս ցաւոյս Դու ես զարման.

Այս է սրբոտիս փափաք, թէ շատ սիրեմ ըզՔեզ,
Տէր սիրեմ Քեզ, շատ աւելի:

3. Թող յարձակի փորձանք, վիշտ, տառապանք,
Դու կուտաս ինձ Յիսուս միշտ սփոփանք:
Ուստի սիրեմ Փրկիչս պիտ՝ շատ սիրեմ ըզՔեզ
Շատ սիրեմ Քեզ, շատ աւելի:
4. Յայնժամ վերջին շունչիս, երբ վեր թռչիմ,
Ասողէն ու արեւն, երբոր անցնիմ,
Ո՛հ ինչ բերկրանք է ինձ, Տէր հոն սիրել ըզՔեզ
Հոն սիրեմ Քեզ, շատ աւելի:

423 ՔԱՂՅՐ Է ԻՆՅԻ Ուազմ. 34.

He is so precious to me. E. P. 38

1. Ո՛հ, ի՞նչ քաղցր է Յիսուս Փրկիչս և Տէրս,
Իր սէրն երգելով կ'անցնին բոլոր օրերս:
Տկաք վայրկեանիս Իրեն կը փարիմ ես,
Ձի նա խիստ քաղցր է ինձի,
 Ձի նա խիստ քաղցր է ինձի,
 Ձի նա խիստ քաղցր է ինձի:
Երկինք է հողույս, վայլել Փրկիչս Յիսուս,
 Ձի նա խիստ քաղցր է ինձի:
2. Սրտիս զուռն կը բախէր նա երկար ատեն,
Ներս մտնել կ'աղերսէր, այն մեղմօրէն:
Եղուկ ինձ որ սիրտըս ուշ բացի Իրեն,
 Ձի նա խիստ քաղցր է ինձի:
 Ձի նա խիստ քաղցր է ինձի . . .
3. Որդ կը կանգնիմ օրհնութան վրայ,
Անամայ են երկինք, և ալ նշովք չըկայ:

Փրկչիս զէմքին լոյսն հոգւոյս վրայ կը ցոլայ,
Զի նա խիստ քաղցրը է ինձի:

Զի նա խիստ բաղյրը է ինձի . . .

4. Իմ Տէրս ինձ մի վայր խոստացաւ իրեն քով,
Ոյո՛ւ՝ Զինք պիտ' տեսնեմ հոն իր մեծ փառքով,
Եւ սիրուն զէմքին նայիմ հիացումով:

Զի նա խիստ քաղցրը է ինձի:

Զի նա խիստ բաղյրը է ինձի . . .

424 (Է5) ՅԻՍՈՒՍԻ ԲԱՐԵՆԱՍՈ ՔԵՒՆԸ

Հ. Ե. 212

1. Դու ես սիրեցեալս, պաշտելիս, ո՛վ Յիսուս,
Քեզ կը պաշտեմ յար խորերէն իմ հոգւոյս,
Եթէ այս ճամբուս հետեանքն մահ ըլլայ,
Նորէն չեմ թողուր, շընորհքովդ Քեզ Յիսուս:
2. Դիտեմ, այս աշխարհ խաղաղութիւն չիտար,
Արդ ուսկի՞ց է, այս ցընձումը անդադար,
Որ կը լեցընէ սիրտս, հոգիս շարունակ,
Եւ կը յարէ «Տէր՛, է խնդութիւն միակ»:
3. Քու մէկ նայուածքդ, կը հալեցնէ հոգիս,
Եւ մէկ ժրպիտըդ կ'ալլակերպէ մարմինս,
Յայնժամ երկնային փառքով կըլեցուիմ ես,
Կրկնելով— «Դու ես իմ բամինս իսկապէս»:
4. Ո՛հ, ի՞նչ ըսքանչելի եւ սուրբ տեսարան,
Հոգիս կը նուազի այս զիւթիչ հրապոյրքէն,
Իրաւ աշխարհ եմ, բայց այս ի՞նչ է սակայն,
Հրեշտակներ կ'եղեղեն, ո՛հ, երկինքէն:

Զրգըտայ, ո՛վ Տէր Յիսուս,

Քեզմէ ի զատ սիրող հոգւոյս,

Քեզմէ ի զատ, Քեզմէ ի զատ,

Զըզըտայ սիրող հոգւոյս:

5. Երբ կ'զգամ թերութիւններս բաղձատեսակ,
Երբ յիշեմ մեղքերս անկող ու անառակ,
Խըզճահար ու բեռնաւոր կը թափառիմ,
Կը գոչեմ սրտանձմիկ որս[՞] փաւիմ:

Զրգըտայ, ո՛վ Տէր Յիսուս,

Քեզմէ ի զատ Փրկիչ հոգւոյս,

Քեզմէ ի զատ, Քեզմէ ի զատ,

Զըզըտայ Փրկիչ հոգւոյս:

426

ԿՈՒՁԵՄ ՅԻՍՈՒՍ ՄԵՆՅՆ ՂԱԿ, 5, 11.

1. Պանդուխտ եմ հոս օտարական,

Կ'ուզեմ Յիսուս միայն.

Պրտանդէ զերծ կը պահէ ին,

Կ'ուզեմ Յիսուս միայն.

Կ'ուզեմ Յիսուս միայն,

Կ'ուզեմ Յիսուս միայն.

Վշտիս, ցաւոյս կ'ըլլայ դարման,

Ամէն տեղ և ամէն վայրկեան,

Փառք, պարծանք է խաչն ինձ համար,

Կ'ուզեմ Յիսուս միայն,

Բաժինս ժըպիտ և կամ արցունք,

Մինչեւ այս կեանքս գտնէ վախճան,

Կ'ուզեմ Յիսուս միայն:

2. Զարին ոյժերն երբ զիս պատեն,

Կ'ուզեմ Յիսուս միայն.

Բարեկամներս երբ զիս ատեն,

Կ'ուզեմ Յիսուս միայն:

Կ'ուզեմ Յիսուս միայն . . .

425

Մ Ի Ա Յ Ն Յ Ի Յ Ո Ւ Ս Կղ. 3, 11:

1. Շրջեցայ Տէր իմ Աստուած ծով ու ցամաք,
Փորձեցի լեռ ձոր ու զաշտ ա՛հ շարունակ.
Կիտեցի լուսին արեւ աստղերն ի ոգիւս,
Արարեցայ կոհակներու կոծումէն բիւր:
Զրդբտայ, ո՛վ Տէր Յիսուս,
Քեզմէ ի զատ խօսող հոգւոյս.
Քեզմէ ի զատ, Քեզմէ ի զատ,
Զրդբտայ, խօսող հոգւոյս:
2. Երգիկներ բուրումնալից հովիտներ զեղ,
Պարզեցին եղեմային տեսիլք շքեղ.
Հալեցան մեղմ մեղեկո՛ք թռչնոց երգին,
Անգմեցին շատեր իմ ձեռք եռանդաւորն:
Զրդբտայ, ո՛վ Տէր Յիսուս,
Քեզմէ ի զատ զպէսող հոգւոյս.
Քեզմէ ի զատ, Քեզմէ ի զատ,
Զրդբտայ զպէսող հոգւոյս:
3. Երգեցին բանաստեղծներ զարերու մէջ,
Շարեցին ըզմայլումի կամ սոսկման վէճ.
Ճառեցին Տէր զիտուններ լսի երեսոյթ,
Կրքեցին կարգ ու օրէնք առանց սիրոյդ:
Զրդբտայ, ո՛վ Տէր Յիսուս,
Քեզմէ ի զատ, յուզիչ հոգւոյս.
Քեզմէ ի զատ, Քեզմէ ի զատ,
Զրդբտայ, յուզիչ հոգւոյս:
4. Հայր և մայր որդի եղբայր քոյր թանկագին,
Ազգական մարդ մրտերիմ կամ այր ու կին.
Ոչ երբեք մօտ են ինձի, Տէր Քեզ նըման,
Ոչ երբեք հոգիս հոգւոյ սիրելի կրնան:

3. Թէ խոտաւանայ փառք ինձ աշխարհ,
 Կ'ուզեմ Յիսուս միայն.
 Իր նախատինքն կ'ընտրեմ յոժար,
 Կ'ուզեմ Յիսուս միայն.
 Կ'ուզեմ Յիսուս միայն
4. Երբ հոգիս երգ ունի ցնծուն,
 Կ'ուզեմ Յիսուս միայն.
 Կամ դառն վշտէ կ'ըլլամ նրկուն,
 Կ'ուզեմ Յիսուս միայն.
 Կ'ուզեմ Յիսուս միայն
5. Կ'անցնի՞մ կեանքի գոլտրիկ շաւղէն,
 Կ'ուզեմ Յիսուս միայն.
 Եւ կամ մահուան տխուր շուքէն,
 Կ'ուզեմ Յիսուս միայն.
 Կ'ուզեմ Յիսուս միայն

427 Փ Ր Կ Ձ Ի Ն Հ Ե Տ Ե Ի Ի Լ Մատթ. 10, 24.

I can hear my saviour calling. S. H. 132

1. Կարող եմ լրսել ձայնն Փրկիչիս,
 Շատ անոյշ կուգայ ահանջիս.
 Իր շեշտերն մեզմ կը յուզեն զիս,
 Առ քու խաչըդ. եկուր, ետե՛կս:
 Ո՛հ, անշուշտ առնեմ պիտ' խաչն իմ,
 Ու սիրուն Փրկիչիս հետեի իմ.
 Ուր որ նա զըրկել ուզէ զիս,
 Պիտի երթամ, առած խաչն ուսիս:
2. Ճամբաներս թէ՛ւ մութ ըլլան,
 Ոտքերըս յոգնին զոլգոլան.

Որտապէս գուարթ է, թող աչքերս լսն,
Միշտ ետեւէդ, ընդ միշտ, պիտ' քալեմ:
Ան, անեուես առնեմ . . .

3. Ո՛հ փրկիչ միշտ առաջնորդէ,
Երկնից լոյսն աչքիս թող ազդէ:
Զօրացուր սիրտս երբ տըկար է,
Մինչ ետեւէդ, ընդ միշտ, պիտ' քալեմ:
Ան, անեուես առնեմ . . .

4. Ապահով անցուր մութ ձորէն,
Երկնի հաց տուր թէ շիք ցորեն:
Քեզ կարօտ եմ ճիշդ այս օրէն,
Մինչ ետեւէդ, ընդ միշտ, պիտ' քալեմ:
Ան, անեուես առնեմ . . .

5. Ո՛հ, սըրտիդ սիրովն բըռնէ զիս,
Քու սուրբ սէրդ ցուցուր տըկարիս:
Շընորհքիդ մէջ Տէր թաղէ զիս,
Մինչ ետեւէդ, ընդ միշտ, պիտ' քալեմ:
Ան, անեուես առնեմ . . .

6. Բնաւ քեզմէ պիտի չը զատուիմ,
Միայն քեզ մընամ հաւ' տարիմ:
Օգնէ ինձ որ չը խոտորիմ,
Միայն քեզի, քեզի հետեւիմ:
Ան, անեուես առնեմ . . .

7. Մահուան մութ տխուր փոսին մէջ,
Թողեւոյ մարմինս սընամէջ:
Դէպ' երկնի փայլուն լոյսն անշէջ,
Միայն քեզի, պիտի հետեւիմ:
Ան, անեուես առնեմ . . .

428

Ե Ր Դ . Մ Ր . Ա Ն Ո Յ Ե

Սալմ. 104. 33:

Այն. 181

1. Երգ մ'առնիմ, երգ անոյշ ե. քաղցրունակ,
 Ոյր մեղեդին ի՞նչ ներդաշնակ.
 Հողւոյս խորերն միշտ կը թրթռայ,
 Ի՞նչ երգ անոյշ սիրահրմայ.
 Դու, ո՞վ Փրկիչ իմ Յիսուս,
 Ուէրդ է իմ կեանքիս յանկերգը.
 Դու ինձ համար շատ շարչարուեցար,
 Դու ես հողւոյս միակ երգը:
2. Ի՞նչ, այս երգ ըզմայլմամբ ե. բերկրութեամբ
 ինչպէս իմ սիրտս կը լեցընէ.
 Քաղցրադաշնակ իր գեղգեղմամբ,
 Անոյշ կը հընչէ աղանջիս.
 Դու, ով Փրկիչ իմ Յիսուս . . .
3. Տէր Յիսուս ինչ որ ըլլայ իմ վիճակ,
 Այլոց պիտ' պատմեմ ես Գուսէր.
 Ծանօթ անծանօթ միայնակ,
 Յըմահ պիտ' երգեմ Գուսէր.
 Դու, ով Փրկիչ իմ Յիսուս . . .
4. Երբ հասնիմ, ո՞նչ իմ կեանքի վախճանին,
 Խընդութեամբ ցընծութեամբ առ Գեղ դամ,
 Հոն ալ սրբբոց հետ միասին,
 Երգեմ յաւիտեան այս երգը.
 Դու, ով Փրկիչ իմ Յիսուս . . .

429

ՅԻՍՈՒՍԻ ՀԵՏԵՒԻԼ

Դուկ. 9. 61.

1. Միշտ պիտի հետեւիմ Գեղ.
 Պաշտելիդ իմ Յիսուս,

Աւելին կ'արժես կեանքիս .

Պաշտելիդ իմ Յիսուս :

Հաւատամ Տէր մանկան պէս ,

Որ շունի գեռ կասկածներ ,

Թող մայլեմ հոս միշտ քու սէր ,

Պաշտելիդ իմ Յիսուս :

2. Քու խօսքով կ'ուրախանամ ,

Պաշտելիդ իմ Յիսուս :

Ամէն օր և ամէն ժամ ,

Պաշտելիդ իմ Յիսուս :

Ուր դրկես պիտի երթամ ,

Ուր երթաս քեզի պիտ' դամ ,

Ըլլայ մութ կամ ապամամ ,

Պաշտելիդ իմ Յիսուս :

3. Ինձ տուիր կեանքդ անհրժան ,

Պաշտելիդ իմ Յիսուս :

Այլ քուկդ եմ Տէր յաւիտեան ,

Պաշտելիդ իմ Յիսուս :

Թող կտրի կեանքիս նուրբ թել ,

Պատրաստ եմ միշտ անարգել ,

Աշխատիլ և զառքդ երգել ,

Պաշտելիդ իմ Յիսուս :

430 (94) ՍԻՐԵՄ ՔԵԶ ՅԻՍՈՒՍ Ա ՊԵՏ. 1, 8.

My Jesus I love Thee. Տ. Տ. Տ. 659

1. Սիրեմ քեզ Յիսուս , դի գիտեմ Դու իմա ես ,

Աշխարհ եմ ձգած կը դիմեմ միայն քեզ .

Փրկիչ իմ հոգւոյս , ո՛հ , Յիսուս Դու իմա ես ,

Եթէ քեզ սիրեմ ճիշտ հիմա պիտ' սիրեմ :

2. Սիրեմ Գեղ Յիսուս, զի նախ Դուն սիրեցիր,
Սիրոյդ խաչին վրայ իմ մեղքերս քաւեցիր.
Սիրեմ գըլուխդ որ վռնչեցով պատեցիր,
Եթէ Գեղ սիրեմ ա՜ն հիմա պիտ' սիրեմ:
3. Սիրեմ Գեղ Յիսուս, թէ՛ ապրիմ, թէ՛ մեռնիմ,
Քանի որ Հետս ես, Գեղ գովիկ կը պարտիմ.
Մինչև ցուրտ մահուամբ այս կեանքէս ազատիմ
Եթէ Գեղ սիրեմ, այժմ և միշտ պիտ' սիրեմ:
4. Անվերջ ցնծումով երկնային սրբոց քով,
Պիտի պաշտեմ քեզ. ո՞վ Յիսուս, մեծ փառքով.
Գըլուխ թաղ զըրած պիտ' հրճուիմ քոյդ սիրով
Եթէ Գեղ սիրեմ, պիտ' սիրեմ յաւիտեան:

431 ՅԻՍՈՒՍ ԱՄԷՆ ԲԱՆՍ Է Ա Կորն. 1, 30.

Jesus is all the world to me. G. M. 136

1. Յիսուս իմ յոյս և ամէն բան,
Իմ կեանքս, ցնծումս է Ան.
Զօրութիւնս է նա ամէն ժամ,
Առանց շնորհքին կ'իյնամ.
Երբ տխուր եմ, Իրեն կ'երթամ,
Չունիմ Իրմէ լաւ բարեկամ.
Յիսուս, ազրիւրն ուրախութեան,
Իմս է Ան:

2. Յիսուս իմ կեանք, և ամէն բան,
Փորձանքի մէջ պաշտպան,
Որհնութիւններ ամէն վայրկեան,
Իրմէ վրաս կը տեղան.
Արև, անձրև Ինք կը զրկէ,
Դաշտերն հունձքով կը լեցնէ:

Յիսուս աղբիւր է բարութեան ,
իմս է Ան :

3. Յիսուս իմ լոյս ե փրկանք իմ ,
Սուրբ կեանքս իրեն պարտիմ .
Ինչպէ՞ս մոռնամ այն բարեկամ ,
Միշտ ինձ հաւատարիմ .
Իր խոստումն չի՛ զրմեր երբեք :
Կը հսկէ վրաս գիշեր ցորեկ ,
Նա բարեկամ է աններման ,
իմս է Ան :

432 ՊԱՅՐԱՌ ԴՈՒ ԱՍՏԴ, Յայտ. 22, 16.

1. Պայծառ դու աստղ առաւօտեան՝
Փայլ տաս, շողաս ի՞նչ աններման ,
Լուսովդ խաւարն կ'անհետի .
Լեցուն շնորհքով, ճշմարտութեամբ ,
Լեցուն զթով ու քաղցրութեամբ .
Սիրովդ կեանք տաս աշխարհի ,
Որդի Դաւթի՝
Ուխտանա, երկնի մաննա, օրհնեալ Աստուած
Ամէնուն վրայ խիստ բարձրացած :
2. Լոյս երկնային՝ սուրբ, անապակ ,
Սիրոյդ կըրակ սըրտիս յատակ՝
Թող յար վառի, բորբոքի ,
Զօրացուր զիս որ ես մընամ ,
Քու մարմնոյդ վրայ իբրեւ անդամ ,
Քեզի համար կենդանի ,
Յիսուս, իմ յոյս :

Գու խօսքդ, Հոգիդ ու Սուրբ արիւնդ մաքրեն
Որ ես միայն Գե'ղ հետե իմ, [սիրտն իմ,

3. Դու' ես Ալֆան ու Յիզան,
Դու' ես սկիզբն, Դու' ես վախճան,
Մեր փեսան ու Թագաւորը,
Ինչպէս ամպով վերն համբարձած,
Նո'յնպէս պիտ' գաս փառքով պսակուած,
Հրեշտակներով բւարաւոր,
Ա՛մէն, ամէն,
Եկո՛ւր Յիսուս, դարերու յոյս, Հուտով եկուր,
Եկեղեցւոյդ փառք հազուեցուր:

433 ԱՍՏՆ ՈՐՈՒՆ ՅԱՌԻՄ ԵՍ Մասք. 2. 2.

1. Աստուծոյն որուն յառիմ ես,
Ժայռն ուր կանգնած եմ,
Տէրն որուն կառչիմ ես,
Յուպն որով քալեմ,
Հացն որով կ'ապրիմ ես,
Սկն ուր խլմեմ ես,
Կեանքն որուն ձրկտիմ ես,
Դու' Յիսուս, Դու' ես:
2. Ուժ՝ ուրկէ՞ պիտ' ինձ գար,
Ինձ՝ հաւատք, սէր, յոյս,
Չար աշխարհն պարտել յար,
Է Գեղմով Յիսուս,
Դուն առիր մեղաց բոս,
Բուժեցիր վէրքերս,
Ա՛հ, իմ յոյս, հաւատքս, սէրս,
Դու ես, ո՛վ իմ Տէրս:

3. Ուստի ելլեմ միշտ վեր,
 վեր ախարհէն այս.
 Մինչ հընչեն զանգակներ,
 Սուրբ հրեշտակաց զաւ.
 Տէր՝ առաջնորդս Դու ես,
 Այլ չունիմ վախ ես.
 Կեանքն որուն ձրկտիմ ես,
 Դու՛ փրկիչ, Դու՛ ես:

434 Հ Ե Տ Ե Ի Ի Մ Յ Ի Ս Ո Ւ Ս Ի Յովն. 12, 26

Down in the valley with my Saviour. S. S. S. 529

1. Խոր ձորերու մէջ, փրկիչովքս ես կ'երթամ,
 Ուր ծաղկունք բացուեր են և անոյշ ջուրեր կան,
 Ուր որ առաջնորդէ ես պիտ' հետեւիմ Անոր,
 Հետքիդ հետեւիմ առնեմ պսակ փառաւոր,
 Հետեւիմ ես, հետեւիմ Յիսուսի,
 Ուր որ ալ զիս զրկէ, ես պիտ' հետեւիմ,
 Հետեւիմ ես, հետեւիմ Յիսուսի,
 Ուր որ ալ զիս զրկէ ես պիտ' հետեւիմ:
2. Խոր ձորերու մէջ փրկիչովքս ես կ'երթամ,
 Ուր մրրիկ և արաղահոս սի. ջուրեր կան,
 Երբ Ան զիս առաջնորդէ ես երբէք չեմ վախնար
 Եթէ Տէրս հետս ըլլայ վտանգէ չեմ սոսկար:
 Հետեւիմ ես, հետեւիմ Յիսուսի . . .
3. Խոր ձորերու մէջ կամ գահավէժներու վրայ,
 Հոգիս յաւիտեան փրկչիս խիստ մօտ պիտ' մնայ
 Նա զիս պիտի առաջնորդէ իր քալած ճամբով,
 Հոն ուր սուրբերն են Տէրոջ քով ապահով:
 Հետեւիմ ես, հետեւիմ Յիսուսի . . .

435 Տ Է Ր Ո Ջ Ս Հ Ե Տ Բաղմ. 73 24.

I walk and I talk with the king. R. G. S. 87

1. Տրտում թափառէի մեղքով ճնշուած,
 Բայց հիմա եմ ուրախ, լիովին հանգչած.
 Ո՛հ օրն ի բուն ես միշտ ցնծութեամբ կ'երգեմ,
 Եւ այս է պատճառը, Տէրոջս հետ կ'քալեմ.
 Տէրոջս հետ կ'քալեմ, ալէլուիա,
 Տէրոջս հետ կ'քալեմ, փառք անուան.
 Ալ ոչ թափառիմ միշտ վեր կը նայիմ,
 Տէրոջս հետ կ'քալեմ և կ'խօսիմ.
2. Տաքիներ կապուած էի, մեղաց կապերով,
 Աշխարհս ոչ կ'օգնէր ինձ իր հաճոյքներով.
 Հիմա թռչնիկի ու ճառագայթի պէս,
 Ազատ եմ և ուրախ Տէրոջս հետ կ'քալեմ.
 Տէրոջս հետ կ'քալեմ, ալէլուիա.
 Տէրոջս հետ կ'քալեմ, փառք անուան,
 Ալ ոչ թափառիմ միշտ վեր կը նայիմ.
 Տէրոջս հետ կ'քալեմ և կ'խօսիմ.
3. Ո՛վ հոգի որ կ'ապրիս մեղաց տիղմին մէջ,
 Վեր նայէ և Յիսուս թող դայ սրտիդ մէջ.
 Փրկութեան ցնծութիւնն նա քեզ կը բերէ,
 Եկուր դու այն լոյսին Տէրոջդ հետ քալէ,
 Տէրոջս հետ կ'քալեմ, ալէլուիա,
 Տէրոջս հետ կ'քալեմ, փառք անուան.
 Ալ ոչ թափառիմ միշտ վեր կը նայիմ,
 Տէրոջս հետ կ'քալեմ և կ'խօսիմ.

436 Հ Ո Դ Ի Ս Կ Ը Ծ Ա Ծ Կ Է Եսայ. 4. 6.

1. Հիանալի Փրկիչ մ'է Յիսուս իմ Տէրս,
Հիանալի Փրկիչ մ'ինծի.
Հոգիս կը ծածկէ լէմին հովանոյն տակ,
Ուր հրճուանք իրը գետ կը բղխի.
Հոգիս կը ծածկէ նա լէմին շուքին տակ,
Այս չոր ծարաւուտ երկրին մէջ.
Իմ կեանքս կը պահէ իր սիրոյն խորքին մէջ,
Եւ թեւորոյն զիս կը ծածկէ.
Եւ թեւորոյն զիս կը ծածկէ.
2. Հիանալի Փրկիչ մ'է Յիսուս իմ Տէրս,
Իմ բեռս կը թեթեւցնէ.
Ինք զիս կը բռնէ որ հաստատ կայնիմ,
Օրուանս համար ոյժ կ'հալթայթէ.
Հոգիս կը ծածկէ նա վէմին . . .
3. Անթիւ օրհնութեամբ նա ժամերս կը լեցնէ.
Իր շնորհաց ճոխութեան չափովն.
Սիրտս հրճուանքով կը յորդէ երբ փառք կու-
Այսպէս մեծ Փրկչի մը համար. [տամ,
Հոգիս կը ծածկէ նա վէմին . . .
4. Փառաւորեալ մարմնով երբ ես վեր ելլեմ,
Օղին մէջ Զինք ողջունելու.
Կատարեալ փրկութիւնս և սէրն հիանալի,
Բիւր սրբոց հետ պիտի երգեմ.
Հոգիս կը ծածկէ նա վէմին . . .

437 ՍՈՒՐԲ ՀՈԴԻ ԱՄԷՆԱԿԱԼ Սաղմ. 25. 5.

Holy Spirit Faithful guide. S. S. S. 194

1. Սուրբ Հոգի Ամենակալ,
Ռահվիրայ մեր անսըխալ.

Առաջնորդէ քաղցրօրէն,
 Պանդուխտներս վշտաց հովտէն.
 Խոնջ հողիք մեր թող ցնծան,
 Երբ յըսեն Գու քաղցր ձայն.
 «Ե՛վ պանդուխտ յոգնած, նըկու՛ն,
 Հետեւէ Ինձ գէպ ի տուն»:

2. Միշտ ներկայ, միշտ իրական,
 Բարեկամ մեր աննրման.
 Մի՛ թողուր անմըխիթար,
 Մեզ՝ ցաւոց մէջ անհամար.
 Երբ վշտաց ալիք բաղխին,
 Եւ սրտերն մեր նըւաղին.
 Խօսէ ձայնովդ մեզմ սիրուն,
 «Պանդուխտներ, եկէ՛ք ի տուն»:

3. Գործն ու կռիւն այս սուրբ մարտին,
 Տէրօջմով երբ աւարտին.
 Եւ կաւէ նաւն այս կհանքին,
 Խորտակուի մօտ եղերքին.
 Մինչ հրաժեշտ տանք այս երկրին,
 Մերկ հողիք մեր թող բերկրին.
 'Ի լուր ձայնիդ մեզմ սիրուն,
 «Պա՛նդուխտներ, ա՛լ եկէք տուն»:

438 (104) ՄԽԹԵՂԻՍԵՆ ԵԿԱԼԻ Յովն. 14, 16.

Oh, spread the tidings round wherever. S. S. S. 198

1. Հըռչակէ լուրն բարի, ուր որ մարդ գտնուի,
 Ուր որ ցաւ վիշտ յորդէ մարդկային սիրտերէ
 Փրկեալք միարեան, հնչեցընեն այս ձայն.
 Մըխիթարիչն եկաւ:

Մըխիթարիչն եկաւ, մըխիթարիչն եկաւ,
Որ. չոգին երկինքէն, օրուեցաւ մեր շօրմէն.
Հըռչակէ լուրն բարի, յամենայն աշխարհի,
Մըխիթարիչն եկաւ:

2. Երկար գիշերն անցաւ, առաւօտ ձագեցաւ,
Լրուեց ոգր սոսկալի, զայրոյթ փոթորկի.
Յրուան լոյսն բարձրանայ, սակի բլրան վըրայ
Մըխիթարիչն եկաւ:
Մըխիթարիչն եկաւ . . .

3. Թաղաւորաց արքայ, զարման թե, երուն վրայ,
Բերաւ գերի հոգւոյն, կատարեալ փորկոթիւն.
Փրկեալ բերաններէ, երգ յաղթութեան հընչէ
Մըխիթարիչն եկաւ:
Մըխիթարիչն եկաւ . . .

4. Ո՞վ սէր Աստուածային, ի՞նչպէս լեզու իմին
Պատմէ շընորհքն անհուն, սմէն կարօտներուն
Որ բնակիմ ես իր քով, փայլիմ զէմքին լոյսով
Մըխիթարիչն եկաւ:
Մըխիթարիչն եկաւ . . .

5. Թող շուտ արձագանդէն, երկնից գմբեթներէն,
Բոլոր սուրբեր վերէն ի վար պատասխանեն.
Անվերջ սիրոյ շնչոով, և անմահ երգերով,
Մըխիթարիչն եկաւ:
Մըխիթարիչն եկաւ . . .

439 (106) Ա Լ Է Լ Ո Ւ Ե Ա Սաղմ. 150.

1. Ալէլուեա, փա՛ռք, փա՛ռք ալէլուեա,
Ալէլուեա, փա՛ռք, փա՛ռք ալէլուեա.
Փառաց պատուոյ յաւէտ արժան,
Դու ես միայն ո՞վ կենաց Բան:

- Ալէլուիա, ալէլուիա,
 Փառք, փառք, ալէլուիա:
2. Ալէլուիա, փառք, փառք, ալէլուիա,
 Ալէլուիա, փառք, փառք, ալէլուիա.
 Ուրիշ ցուցուցիր շնորհք անհուն,
 Փառք ի բարձունս երգէ լեզուն.
 Ալէլուիա, ալէլուիա,
 Փառք, փառք, ալէլուիա:
3. Ալէլուիա, փառք, փառք, ալէլուիա,
 Ալէլուիա, փառք, փառք, ալէլուիա.
 Անհուն դարեր մէջ երկինքի.
 Փառք, պիտ' ըլլայ մեր նիւթն երգի,
 Ալէլուիա, ալէլուիա.
 Փառք, փառք, ալէլուիա:
4. Ալէլուիա, փառք, փառք, ալէլուիա,
 Ալէլուիա, փառք, փառք, ալէլուիա.
 Բոլոր աշխարհ փառքով յաւէտ,
 Փառարանենք, օհ, սիրաւէտ,
 Ալէլուիա, ալէլուիա,
 Փառք, փառք, ալէլուիա:

440 ՕՆ ՅԱՌԱՋ ԲՕՐԻՄ. 31, 6.

Onward, christian soldiers. S. S. S. 706

1. Օհ Փրկչին զինուորներ, օն յառաջ ի մարտ,
 Խաչանիշ զրօշը ձեր, թող ծածանի յաղթ.
 Գրիստոս մեր Տէր Արքան, առաջնորդ է մեզ,
 Օն կռուինք յաղթական, բռնենք գրօշն ի վեր:
 Օն Փրկչին զինուորներ, օն յառաջ ի մարտ,
 Խաչանիշ զրօշը ձեր թող ծածանի յաղթ:

2. Տէրօջ եկեղեցին շարժի զերթ բանակ,
Մեզ ալ պահուած է հին սրբոց յաղթանակ,
Մընանք միշտ անբաժան մէկ սիրտ մէկ հոգի,
Սիրովն եզրայրութեան, յոյսովն հաւատքի:
Օն փրկչին զինուորներ
3. Դահեր կը կործանին ու պետութիւններ,
Տէրօջ եկեղեցին կը մնայ աներեր,
Դրժոխքին սեւ զըռներ յաղթել չին կարող,
Զայն խոստացած է Տէրն անսուտ խոստումով:
Օն փրկչին զինուորներ
4. Ոն դուք ժողովուրդներ միացիք մեր խումբին,
Խառնեցէք ձայն ալ ձեր յաղթութեան երդին,
Փառք պատիւ մեր փրկչին, թաղաւորին մեր,
Թող միշտ մեզ ձայնակցին մարդիկ հրեշտակներ
Օն փրկչին զինուորներ

441 ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՁ ՄԱՏԵՍՆ ԲՏԻՄ. 3, 16.

1. Ո՛հ, որչափ քաղցր է իմ հոգւոյս,
Ստատւածաշունչ մատեան.
Որ ներշնչեց ինձ կեանք և յոյս,
Յուցուց կենաց ճամբան:
2. Իր սուրբ շողերն կ'արձակէ,
Իբրեւ ճրրագ պայծառ.
Լուսոյ աշխարհն ինձ կը յայտնէ,
Կ'ուղղէ քայլերս մոլար:
3. Տաւապանաց այս ձորին մէջ,
Հոգւոյս է մխիթար.
Կ'առաջնորդէ լոյսովն անշէջ,
Կուտայ բերկրանք անճառ:

4. Պիտ' փայլի ան մինչև մըթին,
Գիշերն անցնի իսպառ.
Մինչև ծագի փառաց երկրին,
Արևը մըշտավառ:

442 ՕՐՀՆԵԱԼ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ Յովն. 20, 19, 21.

Far away in the depths of my Spirit. S. S. S. 6 8

1. Աստուծոյ Սուրբ Խօսքէն իմ սրբախ ձայն կու-
Որպէս երգ հոգեշունչ ոգեղմայլ, [զայ
կը բուժէ իմ ցաւեր և ինձի ոյժ կուտայ,
Զիս կ'ընէ միշտ խաղաղ անայլայլ,
Օրհնեալ խաղաղութիւն,
Երկնաւոր արքայէս մեծ շքնորհ,
Քան ըզծով է խորունկ մընայուն աննըման
Աստուծմէ իմ հոգւոյս միշտ դարման:
2. Աստուծոյ Սր. խօսքին մէջ դտայ այս մեծ գանձ
Սէր անճառ թանկագին պատուական,
Հաւատքով ներս առի, սրախ մէջ ուր պահ-
Անաւեր կը մնայ յաւիտեան: [ուամ,
Օրհնեալ խաղաղութիւն . . .
3. Յիսուսէն ըստացայ ևս այս խաղաղութիւն,
Զի փրկեց Ան զիս իմ մեղքերէս,
Թող Անոր վստահիմ հաւատքով ալ լեցուն,
Զի Ան միշտ կ'աղատէ փորձանքէն:
Օրհնեալ խաղաղութիւն . . .
4. Ոհ ի՞նչ քաղցր է հիմա և ի՞նչ մեծ բերկրու-
Փրկչիս սէրը քեզի հաղորդել: [թիւն

Որ Դուք ալ ունենաս առ Սատուած հաշտու-
եւ Անոր մօտենաս անարգել։ [թիւն
Օրհնեալ խաղաղութիւն . . .

5. Երբ հասնինք ոյլ բնիկեր քեզի հետ ամպերը,
եւ տեսնենք մեր Փրկիչն դէմ առ դէմ.
Միասին հոն երգենք սրբոց հետ իր սէրը,
Այս անոյշ եւ անվերջ երգ վըսեմ.
Օրհնեալ խաղաղութիւն . . .

443 ՄԵՐ ՀԱՐՑ ՀԱՒԱՏԻՐ Յոյ 19, 25

Faith of our fathers! living still. S. S. B. 145

1. Մեր հարց հաւատքը կ'ապրի դեռ,
Բանտի, սուրի, հուրի հանդէպ.
Ո՛րքան կը բերկրին մեր սրտեր,
Երբ կը յիշենք զայս անվրէպ.
Մեր հարց հաւատք, Դու Սրբազան,
Պիտ' չը թողունք Բեզ յաւիտեան:
2. Մեր հարք բանտին մէջ չլթայուած,
Սրտով արի, խղճով ազատ.
Երբ հետեւինք մենք նոյն շաւղայ,
Կ'ըլլանք որդիքն մենք հարազատ.
Մեր հարց հաւատք, Դու կենաց ջախ,
Պիտ' չը թողունք Բեզ մինչ 'ի մահ:
3. Մեր հարց հաւատք, ոյժ երկնային,
Ազգերն պիտ' դան, Բեզ խոնարհին.
Երբ մարդկուծիւն կ'ընդունի Բեզ,
«Կ'ըլլայ ազատ ճշմարտապէս»:

Մեր հարց հաւատք. 'ի Տէր վստահ,
Պիտի պահենք քեզ մինչ 'ի մահ:

4. Աս պայքարին մէջ պիտ' սիրենք,
Մեր բարեկամն ու թշնամին.
Եւ վեհութիւնդ պիտ' հռչակենք,
Բանիւ, կեանքով, սուրբ երկնային:
Մեր հարց հաւատք, անվերապահ
Պիտ' քարոզենք քեզ, մինչ 'ի մահ:

444 (123) ԱՒԵԼԻ ՄՕՏ ՔԱՇԷ Յովն. 12 23.

I am Thine o Lord. S. S. S. 6(7

1. Լըսեցի հրաւերդ և եկայ քեզի,
Գիտեմ արդ քուկդ եմ ու Տէր.
Բայց կ'ըզգամ թռչիլ թևովս հաւատքի,
Ալ աւելի մօտ քեզի:
Զիս քաշէ մօտ, մօտ օրհնեալ Փրկիչ,
Այն խաչին ուր որ մեռար.
Զիս քաշէ մօտ, ալ մօտ, մօտ օրհնեալ Փրկիչ,
Կողիդ արեան սրբարար:
2. Սրբազործէ զիս քոյդ ծառայութեան,
Հոգւոյդ շնորհքովն անգին.
Թող քեզի նայիմ յոյսով մ'անվարան.
Կամքս հըլու միշտ քու կամքին:
Զիս fawet մօտ, մօտ օրհնեալ Փրկիչ . . .
3. Ոհ ինչ քաղցր հրճուանք կուտայ ինձ այն ժամն
Շնորհաց գահին առջև.
Ծնրադիր քեզ հետ մինչ հաղորդակցիմ,
Իբր որդւոյ և Հօր միջև:
Զիս fawet մօտ, մօտ օրհնեալ Փրկիչ . . .

4. Ընժ կարող գիտնալ սիրոյդ խորութիւն,
 Մինչ անցնիմ ցուրտ Յորդանան,
 Յնձմանց վեհ ըստձունք կը մընան հեռուն,
 Մինչև հասնիմ սուրբ Քանան,
 Զիս Լաւէ՛ մօս, մօս օրհնեալ Փեղիչ . . .

445

Գ Է Պ Ի Ք Ե Զ Երբ. 12 1.

1. Մթամած ամպեր երբ դան զիս պատեն,
 Բարեկամս հանուր խոյս սալու առեն,
 Թող նայուածքդ Յիսուս չը պատուի աչքէս,
 Որ յաւէտ խիղախ թռչիմ դէպ ի քեզ,
 Յիսուսի շեշտն ի քեզ,
 Զերթ տատրակ նետի պէս,
 Ուանամ այս կեանքէս,
 Դէպ ի վեր, դէպ ի քեզ:
2. Թէ սև ապազայ ու թոյնախառն հաց,
 Եւ կեանքըս բլլայ անվերջ ողբ ու լաց,
 Թող քու սէրդ անուշ զգամ սաստկապէս,
 Որ զիս յաւիտեան քաշէ դէպ ի քեզ,
 Յիսուսի շեշտն ի քեզ . . .
3. Երբ աւելո՞ծի նաւակը կեանքիս,
 Ու մահուան դէմքէն տխրի թոյլ հողիս,
 Թող քու աչքը Յիսուս բըռնէ ձեռքերէս,
 Որ ազատ անվախ սուրամ դէպ ի քեզ,
 Յիսուսի շեշտն ի քեզ . . .
4. Ու երբ յեղակարծ հրեշտակը մահու,
 Խըլէ կեանքն հէքիս ո՛հ քու ձայնդ սուռ . .
 Հնչէ ախանջիս քաղցրիկ սիրակէզ,
 Որ շիրմէն ալ վեր նետուիմ դէպ ի քեզ,
 Յիսուսի շեշտն ի քեզ . . .

446

Հ Ա Յ Ր Մ Ե Ր Գ Թ Ա Ն Ր Մատ. 6, 9.

1. Հայր մեր գթած, բարեխնամ,
 Հոգւոյ եւ բարեկամ,
 Երկնից Տէրն եւ եւ սրտից հիւր,
 Ընկալ աղօթք մեր բիւր:
 Ձեռ սպասեր մարդ ծնրադրէ,
 Քեզմէ միշտ շնորհք խնդրէ.
 Թող մեր կեանք, գործ, երազ ու խօսք
 Ըլլան յար իբր աղօթք:
2. Սրտից խորը իղձեր տենչեր,
 Թաղուած կան հոն ինչեր.
 Բարի կամ չար, բայց կամ զաղանի,
 Ամէն ինչ քեզ յայտնի:
 Մաքրէ աղօթք ու կեանք մեր սին,
 Հաւասարէ քուկին,
 Մինչև մեզ տասայս շնորհք ու փառք.
 Ի ծունկ պիտի մնանք:
3. Մեզի համար լաւագոյն բան,
 Դուռն եւ փու կամքդ է ան:
 Ահ, տուր մեզ սէր, լուր միայն,
 Որպէս լսենք քու ձայն:
 Կամք քո մեր կամքին չի հակի.
 Ոյլ ձուլուի, ըլլայ մի.
 Երկնից գուռը սիր, լաց ի զուր,
 Մեր մէջ բռնկի քո հուր:
4. Դու մեզ փնտռես ի սէր գորով,
 Բայց մենք լոկ մեր մտքով.
 Բայց դռներէն ներս ուժդ ահեղ,
 Թող խուժէ իբր հեղեղ:
 Այլ հեռուէն քեզ չենք փնտռեր,
 Հրաչք նշան չենք խնդրեր.
 Սէր, ջանք, աղօթք բաւ է, ի՞նչ փոյլծ
 Մինչ բոլորն ըլլայ քոյդ:

ՀԱՒԱՏԱՑԵԱԼԻՆ ՊԱՅՔԱՐԸ

447 (127) ԽԱՁԻ ՃԱՄԲԱՆ ԳԱՍՔ. 16, 24

1. Ճամբորդներ ենք մենք երկիրքի,
Կ'առաջնորդէ մեզ Ոսկր Շողի,
Պէտք չէ մեզի արձաթ ոսկի,
Գանձը ձեզոյն թող գայ մեզի:
2. Տէր Յիսուսի հետևող ենք,
Իւր շաւղին մէջ կը բալենք մենք,
Պանդուխտներ ենք, օտարական,
Պանդուխտ եղողներն չուտ թող գան:
3. Խաչակիրներ ենք շարունակ,
Մեր պարծանքն է խաչը անարգ,
Կը կենանք միշտ սուրբ խաչին տակ,
Խաչ կըրողներն թող գան համակ:
4. Փրկուած ենք սուրբ արիւնով,
Նընորհք գտած ենք լէնոր քով,
Վկաներ ենք քաւիչ արեան,
Փրկուածներն թող մեզ միանան:
5. Ձի հրապուրեր մեզ սուտ աշխարհ,
Իւր փառքն ալ մեզ հրճուանք չի տար,
Լիխարհէն մենք զատուած ենք յար,
Փառք ձեզեւր ո՞վ է յօժար:

448 ԽԱՁԻՆ ՁԻՆՈՒՈՐԸ ԲՏԻՄ. 2, 3:

Am I a soldier of the cross? S. S. S. 672

1. Եթէ զինուոր եմ ես խաչին,
Խաչէն ալ ամբշնամ:

Թէ հետեւող եւմ Դառնուելին,

2. Ինք զաւանիւ վախճա՞մ:

Սնուամբ Քրիստոս Արքային,

Որ կեանք զնեց ինձ համար:

Շնորհքովն պիտ' հասնիմ պըսակին,

Կըռուելով անդադար:

2. Ես ծաղկաղարդ մահճի մը վրայ,

Երկինք կրնա՞մ տարուիլ:

Արդեօք ինձ թշնամի չիկա՞յ,

Ինձ հարկ չըկա՞յ կոռուիլ:

Անուամբ Քրիստոս Արքայի . . .

3. Արեան չափ կոռուելով առին,

Շատերը մըցանակ:

Ծառայելով ես մարմինին,

Կ'առնե՞մ փառաց պըսակ:

Անուամբ Քրիստոս Արքայի . . .

4. Եթէ Երրեք կ'ուզեմ յաղթել,

Պէտք է պատերազմիմ:

Հաճէ, Տէր', զիս շնորհքովդ ընել,

Քաջ եւ հաւատարիմ:

Անուամբ Քրիստոս Արքայի . . .

5. Այս փառաւոր մարտին մէջ, Տէր',

Սուրբերդ պիտի յաղթեն:

Հեռուանց ալ հաւատոյ աչքեր,

Պսակը կը տեսնեն:

Անուամբ Քրիստոս Արքայի . . .

449 (131) ՓՐԿԶԻՆ ԱՊՈՒԻՆԻԼ ՓԻՂ. 4. 6

1. Փրկչիս պիտ' պատմեմ փորձութիւնս ամէն,
Սը չեմ կրնար այս բեռներս տանիլ:

Անկուսմանը մէջ հրդօր ապաւէն .

Փրկիչս կարող է հոգերս վանել .

Փրկչիս պիտ' պատմեմ , Փրկչիս պիտ' պատմեմ
Այլ չեմ կրնար ես բեռներս տանիլ . [մեմ .

Պիտ' պատմեմ Փրկչիս , պիտ' պատմեմ Փրկչի-
Փրկիչս կարող է հոգերս տանիլ . [չիս ,

2. Փրկչիս պիտ' պատմեմ տաղնապներս ամէն ,
Բարեկամս ու բարերարս է Այն .

Ձի Ան կ'ազատէ մեղքերուս ցաւէն ,

Տաղնապներուս ալ կ'ուտայ վախճան .

Փրկչիս պիտ' պատմեմ

3. Փորձութեան մէջ իմ Փրկչիս պէտք ունիմ ,
Ոգնական է Այն , բեռներ տանող .

Փրկչիս պիտ' երթամ բեռներըս տանիմ ,

Այն վշտակիրս է սուրբ ու կարող .

Փրկչիս պիտ' պատմեմ

4. Ո՛հ որչափ դառն է կեանքն այս աշխարհիս ,
Ո՛հ որչափ խորին մեղաց լէրքեր .

Փրկչիս պիտ' պատմեմ ցաւերս նոր ու հին ,

Անով պիտ' յաղթեմ ամէն մեղքի .

Փրկչիս պիտ' պատմեմ

450 Զ Պ Ո Ւ Շ Ո Ւ Թ Ի Ի Ն Ղուկ. 21. 36.

1. Հո՛գիս , զգոյշ կեցիր ,

Թշնամիներդ չատ են .

Մեղաց զօրքն ալ զժողք , երկիր ,

Գեղ կործանել կ'ուզեն .

2. Աղօթքը մի՛ ձգեր ,

Արթուն կեցիր միշտ դուն .

Պատերազմէն ետ մի՛ քաշուիր ,

Խնդրէ Տէառն օգնութիւն .

3. Զաղթող քեզ չըկարծես,
 Ձենքերբդ մի՛ ձրգեր,
 Ձի գործդ պիտի չ'հատցունես.
 Ս'ինչեւ հասնիս զուն պեր.

451 ՏԷՐՆ ՔԵՉ ՊԵՏԻ ՀՈԳԱՅ Ա. ՊԵՏ. 5, 7:

Do not dismay whatever be tide.

1. Մի՛ վախնար ինչ որ պատահի,
 Տէրն պիտի քեզ հոգայ.
 Իւր թեոց տակ առ հովանի,
 Տէրն պիտի քեզ հոգայ.
 Տէրն պիտի քեզ հոգայ,
 Ուր որ ըլլաս ինք հանապազ,
 Այո՛ պիտի հոգայ.
 Տէրն պիտի քեզ հոգայ.
2. Յոգնած ժարմինդ երբ նուազի,
 Տէրն պիտի քեզ հոգայ.
 Եւ կամ փորձանք զայ կատաղի՛
 Տէրն պիտի քեզ հոգայ.
 Տէրն պիտի քեզ հոգայ . . .
3. Կը լեցընէ պէտքերդ բոլոր,
 Տէրն պիտի քեզ հոգայ.
 Եւ չընորհք տայ քեզ օրէ օր,
 Տէրն պիտի քեզ հոգայ.
 Տէրն պիտի քեզ հոգայ . . .
4. Թող թշնամիք չանթեր տնդան,
 Տէրն պիտի քեզ հոգայ.
 Իւր կուրծքն ըրէ՛ քեզ ապաստան.
 Տէրն պիտի քեզ հոգայ.
 Տէրն պիտի քեզ հոգայ . . .

452

Կ Ր Հ Ո Գ Ա Յ Ա Ն Խառ. 46. 4:

1. Արթուռն աչքեր, Հօրս երկնային,
Վերէն վրաս կը նային.
Գիշեր ցորեկ ու հաճապապ,
Ան կը հսկէ իմ վրաս.
Սիրով մ'անխառն, սիրով մ'անհուն,
Կը հսկէ Հայրս օրն ի բուն,
Այո. այո կը հսկէ (Ան),
Կը հսկէ Հայրս Աստուած.
Այո իր խոստումն է աննըման,
Ու իմ վայելքս է Ան.

2. Արթուռն աչքեր, Հօրս երկնային,
Վերէն վրաս կը նային.
Մութ է ճամբաս, վրտանգներ կան,
Ան է ընկերս պատուական.
Կասկած չունիմ ու ոչ վախեր,
Ան առաջնորդս է անվերջ.
Այո, այո կը հսկէ . . .

3. Արթուռն աչքեր, Հօրս երկնային,
Վերէն վրաս կը նային.
Անտուն անտէր թափառական,
Սիրոյն եմ առարկան.
Աշխարհս կ'անցնի, կ'անցնին ցաւեր,
Հօրս բազկաց մէջ հանգչիմ ես վեր,
Այո, այո կը հսկէ . . .

453

(145) ԼԻՈՎԻՆ ՎՍՏԱՀԻԼ Սող. 55, 22:

1. Կը բերեմ ես Տէր Յիսուսի,
Ամէն հոգս. կապածներըս.

Լըսած եմ խօսքը սիրելի,
 2. Լըքերդ դիտ բնաւ իմ Տէրս,
 Վստահած եմ եւ լիովին,
 Իր խոստումն է անասան.
 Վստահած եմ եւ լիովին,
 Ան ինչ հետ է յաւիտեան:

2. Կը բերեմ ես իմն փրկչիս,
 Իմ ամէն մեղքս. վէրքերս բիւր,
 Իր արեամբ սուրբ կը լուս դիտ,
 Կ'ընէ սիրտս անրիծ, մաքուր,
 Վստահած եմ եւ լիովին . . .

3. Կը բերեմ ես Տէր Յիսուսի,
 Իմ ամէն վիշտս, ամէն վախ.
 Իր սիրովը վախս կ'անհետի,
 Սիրտս կ'ըլլայ խաղաղ, ուրախ,
 Վստահած եմ եւ լիովին . . .

454 (148) ՅԵՆՈՒՄ ԲՕՐԻՆ. 33, 27.

What a fellowship, what a joy divine. Alex. 48

1. Ո՛հ, ի՛նչ բերկրութիւն վայելք երկնային,
 Յենում յաւիտենական բազկաց.
 Ի՛նչ մեծ օրհնութիւն եւ խաղաղութիւն,
 Յենում յաւիտենական բազկաց:
 Յենում, յենում,
 Ապահով, անվախ, անկասկած,
 Յենում, յենում,
 Յենում յաւիտենական բազկաց:

2. Ո՛հ, ի՛նչ քաղցր է այս երկնային համբան
 Յենում յաւիտենական բազկաց:

Լոյս պայծառ ծագի միշտ ճամբուս վրայ,
Յենում յաւիտենական բազկաց:

Յենում, յենում . . .

3. Բրնաւ վախ չունիմ, ոչ ալ հոգ ճնշող,
Յենում յաւիտենական բազկաց:

Իմ Տէրս միշտ է մօտ և ինք է կարող,
Յենում յաւիտենական բազկաց:

Յենում, յենում . . .

4. Թող զիք յարձակին, չարին զօրքն անթիւ,
Յենում յաւիտենական բազկաց:

Սատանան ոտքիս տակ պիտ' խորտակուի,
Յենում յաւիտենական բազկաց:

Յենում, յենում . . .

455 ԴՈՒՆ ԵՈՒԹ ՎԷԴՍ Ոսովմ. 31, 3:

Thou art my rock O blessed Redeemer. S. S. S. 525

1. Դուն ես իմ վէմբս, Յրհնեալ Փրկիչ իմ,
Ապաստանարանս պաշտպանուելիք:

Դուն ես իմ վէմբս, ուր պատըսպարուիմ,

Յաւն ու վիշտերէն ինծի գալիք:

Դուն ես իմ վէմս, ո՞վ օրհնեալ Փրկիչ իմ,
Բարեկամբս, և առաջնորդս:

Դուն ես յոյսըս, և Դուն ես Փրկիչըս:

Վըստահութիւնս ես, մէջդ պահպանուիմ:

- 2 Դուն ես իմ վէմբս երբ մեղքն հրապուրէ,
Դուն ես իմ վէմբս երբ փորձանք գայ:

Դուն ես իմ վէմբս երբ վիշտը սուր է,

Դուն ես իմ վէմբս ալ վախ չի կայ:

Դուն ես իմ վէմս . . .

3. Դուն ես իմ վէմբս երբ փորձանք գրդոէ,
Բարեկամբս մօտ ե հարազատ.
Հոգիս Գու վրբադ յոյսը կը զընէ,
Պահելու համար զիս անաբատ:
Դուն ես իմ վէմբս . . .
4. Դուն ես իմ վէմբս երբ իշխանութեանց,
Եւ ազդերու դօրութիւնք իյնան.
Դուն պիտի մընաս վէմբ փրկութեանս,
Ո՛վ անչարժ վէմ. մէջդ մընամ յաւիտեան.
Դուն ես իմ վէմբս . . .

456 (150) ՄԻՆՅՆ ՔԵՁԴՈՎ. Մատ. 17, 8:
2 Alex. 29

1. Միայն Քեզմով, ո՛վ իմ Փրկիչս,
Խաղաղութիւն ունի հոգիս.
Զոր ոչ մի ոյժ այս աշխարհիս,
Կարէ խըլել ինծմէ.
Հաճոյք երկրիս՝ ըլլան որքան քաղցր,
Իմ փափաքներս բընաւ չեն լեցուած.
Քեզմով միայն եմ ես յագեցած,
Տէր իմ միայն Քեզմով.
2. Միայն Քեզմով ո՛վ լոյս փայլուն,
Յրութիւն ամպեր ե մըթութիւն.
Իբր մի փարոս կենաց ծովուն,
Մէջ Դուն կ'առաջնորդես.
Եւ երբ յարձակի խիստ փորձութիւն,
Քեզմով ունիմ ես միշտ յաղթութիւն.
Եւ երկնային սուրբ խաղաղութիւն,
Տէր իմ միայն Քեզմով.

3. Միայն Գեղմով. երբ օրն մթին,
 Որին աստուկին ալ խաւարին.
 Վախ չէ կարող կաւել իմին,
 Երգը վստահութեան:
 Ինչ որ բլլայ միշտ Գեղմով միայն,
 Լեցուին իմ կենացս պէտքերն համայն,
 Դու ես միայն ինծի միշտ պաշտպան,
 Տէր իմ միայն Գեղմով:
4. Միայն Գեղմով որ տեղս մեռար,
 Գու սուրբ արեամբ ըզդ քաւչարար,
 Մեղքէս մաքրուած եմ ես արդար,
 Գեղմով, միայն Գեղմով:
 Դու ես միայն իմ օւրախութիւնս,
 Մինչեւ հասնիմ ես երկիրն փայլուն.
 Ուր իմ հաւատքս բլլայ տեսութիւն,
 Տէր իմ միայն Գեղմով:

457 Ա Պ Ա Հ Ո Վ, Ե Մ Սաղմ. 27, 5:

As a tree beside the water.

1. Զուրեքու քով ծառի նըման,
 Տէրը զիս կ'աճեցընէ.
 Որ արտադրեմ պտուղ լըման,
 Եւ ապրիմ վեր յաւիտեան:
 Ես եմ ապահով,
 Ես եմ ապահով.
 Անչարժ վեմին վըրայ հաստատ,
 Ես եմ ապահով:
2. Կատաղի այս ալեաց մէջէն,
 Դէպ ի վեր Գեղ կը նայիմ.

Ձի չունիմ ես այլ ապաւէն,
Թոյլ տուր, Գեղ զիմեմ Տէր իմ,
Ես եմ ապանով . . .

3. Թէ տառ' պանք շուրջըս պատեն,
Ըլլան բաժինս դառն ցաւեր,
Երբ իր շնորհքը փայլի վերէն,
Լոյս ծագի մերձի գիշեր:
Ես եմ ապանով . . .

4. Ո՛հ, հոն կայ ցնծութիւն անհուն,
Երբ միանամ սուրբ Գառին,
Եւ ժառանգեմ պրտակ փայլուն,
Սրեամբ փրկուած հետ խումբին:
Ես եմ ապանով . . .

458

Խ Ա Ձ Ի Ն Պ Ր Օ Շ Ը Եսա. 59, 19,

1. Պարզենք մեր դրօշն մեր սիրած խաչին,
Երգելով ժողովունք շուրջն Անոր.
Փառք դովիստ տալով Աստուծոյ Գառին,
Որ Տէրն է մեր թագաւոր:
Ողջոյն քեզ դրօշն սիրած խաչին,
Պիտ' երգենք մենք ձրի փրկութիւն.
Քանի որ ենք հոս մէջ վշտաց ձորին,
Տէրն ըլլայ երգ մեր հողւոյն:
2. Վեր բռնենք դրօշն մեր սիրած խաչին,
Հռչակենք միշտ Անոր յաղթութիւն.
Մինչև որ լսեն ազգեր աշխարհի,
Վրայով Տէառն խաչելոյն:
Ողջոյն Էեզ դրօշն սիրած խաչին . . .
3. Թաղեր և գահեր երբոր դառնան հող,
Զքանայ անոնց փառքն ու սկրհանք:

Արիւնաների դրօշն փրկչին խաչեալ ,

Պիտ' բլլայ միշտ մեր պարծանք :

Աղջոյն էեզ դրօշն սիրած խաչին . . .

459 ՅԱՂԹՈՒԹՒԻՆԸ ՄԵՐՆ Է Ա Կարճ. 15. 57:

The victory is mine. Sl. H. 126

1. Մերն է յաղթանակ մերն է յաղթանակ ,
 Մինչ մեր զօրապետ Յիսուս է միակ ,
 Յաղթենք թշնամեաց , Իւր բաղկին յենած ,
 Արթով զեղուն քալենք ներդաշնակ ,
 Միշտ վստահ 'ի Տէր , միշտ վստահ 'ի Տէր ,
 Միշտ վստահ 'ի Տէր , Իմամեռէլն , Վեհն Ար-
 քայն մեր :
2. Մերն է յաղթանակ , մերն է յաղթանակ ,
 Իոստմանց բովանդակ , առնենք մեր ճաշակ ,
 Յարուցեալք 'ի Տէր , քալենք անվեհեր ,
 Չենք ըզպար միեակ , կայ յերկնից բանակ ,
 Մի՛ս վստահ 'ի Տէր . . .
3. Մերն է յաղթանակ , մերն է յաղթանակ ,
 Իւր խօսքերն շիտակ մեր ոտից ճրագ ,
 Դայլերնուս գիտակ քալենք անսալթաք ,
 Յառաջ չարունակ կա'յ փառաց պսակ ,
 Մի՛ս վստահ 'ի Տէր . . .

460 ԲՐԻՍՏՈՍԻ ԶԻՆՈՒՈՐԸ Եփես. 6. 10—18

1. Այս կեանքս պատերազմ է և մենք զինուորներ
 Մեղաց ու դեւին դէմ պիտի մարտընչինք .

Իբաւ խորամանկ են մեր թշնամիներ,
Բայց մենք ըզՔրիստոս զօրապետ մերն ունինք
Կանգնէ Յիսուսի համար ով քրիստոնեայ,
Քեզի համար ինք կախուեցաւ խաչին վրայ,
Դուն ալ մի վախնար՝ Տէրոջդ համար,
Կանգնէ եւ եղիբ քաջ վրկայ:

2. Աստուած կը բանայ քեզ իրեն դինարան,
կը հագուեցընէ ըզքեզ արդարութեամբ,
Դըլխուդ սաղաւարտ կուտայ յոյս փրկութեան,
Եւ մէջքըդ կ'ընէ ամուր ճշմարտութեամբ:
Կանգնէ Յիսուսի համար . . .

3. Իր խօսքը մեր ձեռքն ունինք սուր երկսայրի,
Վահան հաւատոյ մեզ կ'ընէ անվրտանդ,
Մեր շաւիղներուն վրայ սուրբ լոյս կը փայլի,
Աստի Տէրոջմով զօրաւոր միշտ կ'ըլլանք:
Կանգնէ Յիսուսի համար . . .

4. Արթուն կենալով եւ ազօթք ընելով,
Իոլոր մեր զէնքերն կը մընան միշտ փայլուն,
Եւ մենք Յիսուսի օգնութեամբ ապահով,
Կ'ըլլանք եւ Անոր շնորհքովը հաստատուն:
Կանգնէ Յիսուսի համար . . .

5. Անթիւ փորձութեանց պիտի հոս հանգիպինք,
Սակայն Դրիստոսով ամէնուն կը յաղթենք:
Եւ Յորդանանու ջուրերէն երբ անցնինք,
Մեզի համար Զինք հոն կանգնած կը տեսնենք:
Կանգնէ Յիսուսի համար . . .

461 Յ Ա Ղ Թ Ո Ի Թ Ի Ի Ն Յովն. 16, 33.

Hallelujah, what a thought. S. H. C. 168

1. Փա՛ռք Դսոին, ի՜նչ խորհուրդ վեհ,
Փրկութիւն մեզ բերած է:

Յաղթութիւն, յաղթութիւն,
 Մեղքն ոյժով թող յարձակի,
 Երկնից սէրն պիտ' չը մարի.
 Յաղթութիւն, յաղթութիւն,
 Յաղթութիւն, այո', յաղթութիւն,
 Ալէլուեա՛, աղատուա՛ծ,
 Յիսուսով յաղթող եղած,
 Ալէլուեա՛, փառք Իր անուան,
 Տէրն է ինծի ամէն ըան:

2. Վստահած ես, իմ Տէրոջ,
 Ամրապնդուած խօսքին մէջ.
 Յաղթութիւն, յաղթութիւն,
 Մեղքերս ներուելէն հետէ.
 Յնձում խնդ միշտ իմ հետ է:
 Յաղթութիւն, յաղթութիւն . . .

3. Հռչակէ աղատութիւնդ,
 Մնայուն խաղաղութիւնդ,
 Եւ գոչէ յաղթութիւն,
 Երգէ, ո՛հ, միշտ յաղթութիւն,
 Դիմադրելով թշնամոյն.
 Յաղթութիւն, յաղթութիւն . . .

4. Երբ այս կեանքը վերջանայ,
 Այս դեհ երգն զեռ պիտ' մընայ.
 Յաղթութիւն, յաղթութիւն,
 Փրկեալ խումբ հոռ Երգեցէք.
 Երկնից երգն սկսեցէք:
 Յաղթութիւն, յաղթութիւն,
 Յաղթութիւն, այո', յաղթութիւն,
 Ալէլուեա՛, աղատուա՛ծ,
 Յիսուսով յաղթող եղած,
 Ալէլուեա՛, փառք Իր անուան,
 Տէրն է ինծի ամէն ըան:

462 Կ Ա Յ Մ Օ Տ Խ Ա Չ Ի Ն

Stand by the cross soldier. Sl. H. 38

1. Կայ մօտ խաչին զու զինուոր արի,
Մինչ վալլի արեղակ.
Կայ մօտ խաչին, երբ շուքն երկարի,
Շուտ պիտ' հասնի մեզ յերկնից բանակ,
Կայ մօտ խաչին զինուոր կայ,
Յայթանակը չէ հեռուն.
Կայ մօտ խաչին զինուոր կայ,
Մահուան մէջ կայ յաղթութիւն.
- 2 Կա'յ մօտ խաչին մինչ օրն վախճանի,
Կա'յ անյողգողգ մինչ վերջ.
Կա'յ, պատերազմը երբ մոլեկնի,
Զի կ'ըստասէ քեզ պսակ մը պերճ.
Կաց մօտ խաչին զինուոր կայ . . .
3. Կայ մօտ խաչին իբր անյա'ղթ և քաջ,
Պահէ՛ զիրքդ անսասան.
Ոյմն խաւարին շուտ կ'ընէ նահանջ,
Յաղթահարուած և ոտից կոխան.
Կաց մօտ խաչին զինուոր կաց . . .
4. Կա'յ մօտ խաչին, մինչ գայ Տէր Արքայն,
Կա'յ կեանքով մ'անբասիր.
Յորժամ պիտ' լըսես իւր քաղցրը ձայն,
«Վա'ր դիր զէնքերդ և հանգիստդ մտիր»,
Կա'յ մօտ խաչին զինուոր կայ,
Յաղթանակը չէ հեռուն.
Կայ մօտ խաչին զինուոր կայ,
Մահուան մէջ կայ յաղթութիւն,

463 (160) Բ Ե Ր Դ Ը Պ Ա Հ Ե Ց Ի Ք ՆԱՄԱԿ 2, 1.

Ho, my comrades! see the signal. S. S. S. (69)

1. Քաջ եղէք ո՛վ եղբայրներս,
Մօտ է սգնութիւն,
Վերը կ'երեւնայ նշանը,
Ստոյգ է յաղթութիւն:
«Նուտ կուգամ» կ'ըսէ մեր Տէրը,
«Բերդը պահեցէք»,
Կը պահենք Տէր քու շնորհքովդ,
Պատասխան տուէք:

2. Մեր յանդուգն թշնամիները,
Բազմութեամբ կուգան
Եւ անսնյ չար զօրապետը,
Ինքն է Սատանան:
«Նուտ կուգամ» կ'ըսէ մեր Տէրը. . .

3. Պանծալի է մեր դրօշակը,
Փողը կը լըսենք.
Մեր զօրապետին անուամբը,
Պիտ' անշուշտ յաղթենք:
«Նուտ կուգամ» կ'ըսէ մեր Տէրը. . .

4. Պատն երկար է պատերազմը,
Սահայն զիմացէք.
Մեր անյաղթ զօրագլուխը,
Մօտ է քաջ եղէք:
«Նուտ կուգամ», կ'ըսէ մեր Տէրը,
«Բերդը պահեցէք»,
Կը պահենք Տէր քու շնորհքովդ,
Պատասխան տուէք:

464 (176) ԳԵՉ ՁԵՄ ԹՈՂՈՒՐ ԵՐԻ. 13, 5:

Sweet is the promise. 2 Alex. 118 F. H. 5

1. Գաղցր է այս խոստում «Գեղ պիտի չըմոռնամ»,
իմ հոգիս չարչարել ալ ի՞նչ բան կրնայ.
Մահուան ձորին մէջ իսկ պիտի չըվախնամ,
Զի լոյս փայլի հոն, ոսկեղէն եզրին վրայ.
«Ես քեզ չեմ մոռնար, քեզ չեմ թողուր,
ես ձեռքէդ կը բռնեմ քաղկացըս մէջ կ'առ-
ես քեզ չեմ մոռնար, քեզ չեմ թողուր, ինեմ.
ես քու փրկիչըդ եմ, քեզ կը խընամեմ».
2. «Գեղ չեմ թողուր, խոսքիդ վստահելով միշտ,
Տէ՛ր, յառաջ կ'երթամ երգով ու ցնծումով.
Աշխարհ ե. բարեկամք թէպէտ տան ինձ վիշտ,
Հոգիս կ'սփռփի Գու անոյշ խոստումով.
«Ես քեզ չեմ մոռնար . . .
3. Ա՛հ, երբ ոսկեղէն դրան առջիւ ես կ'այնիմ,
Պիտի չքանան բոլոր վիշտ ու ցաւերս.
Հոն հրճուանօք լսեմ ձայն վեհ Տէրոջն իմ,
«Ապրի՛ս, բարի ծառայ ներս մտիւր առ իս».
«Ես քեզ չեմ մոռնար . . .

Ա Ի Ե Լ Ի Կ Ե Ա Ն Ք

465 (182) ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆ ԵՍ Սաղմ. 51, 2—7.

Have you been to Jesus for...? S. S. S. 379

1. Յիսուսի գացա՞ծ ես որ սրբէ քեզ նա,
Լուացուա՞ծ ես Գառնուկին սուրբ արեամբ.
Վասա՞հ ես իւր շնորհաց լիողին հիմայ,
Լուացուա՞ծ ես Գառնուկին սուրբ արեամբ,
Լուացուա՞ծ ես սուրբ մաքուր,
Գառնուկին զուտ արեամբ պատուական
Լաթերդ չե՞ն ազատումուր, ճերմակ աննրման
Լուացուած ես Գառնուկին սուրբ արեամբ:
2. Փրկչին հետ կը քալե՞ս ամէն օր արդեօք,
Լուացուա՞ծ ես Գառնուկին սուրբ արեամբ.
Կը հանգչի՞ս Խաչու ողին մէջ դու միշտ անհոգ.
Լուացուած ես Գառնուկին սուրբ արեամբ,
Լուացուա՞ծ ես սուրբ մաքուր . . .
3. Երբ փեսան գայ պիտ' գտնե՞հ հանդերձդ յարմար
Լուացուա՞ծ ես Գառնուկին սուրբ արեամբ.
Հոգիդ պատրաստուած է պայծառ, զուէն յար -
մար,
Լուացուա՞ծ ես Գառնուկին սուրբ արեամբ,
Լուացուա՞ծ ես սուրբ մաքուր . . .
4. Դիր մէկդի մեղքերէդ ազատտած լաթերդ,
Լուացուա՞ծ ես Գառնուկին սուրբ արեամբ.
Մշտահոս աղբիւր մը կը հոսի մօտէն,
Լուացուա՞ծ ես Գառնուկին սուրբ արեամբ,
Լուացուա՞ծ ես սուրբ մաքուր . . .

466

Խ Ո Ն Ա Ր Հ Ե Յ Ո Ի Ր

Աստվ. 10, 17.

(How can a weary heart find rest.) S. V. 406

1. Խոնարհեցուր Գու զիս ո՛վ Տէր,
Առաւօտուն ինչպէս շունչովդ.
Խոնարհեցնես ցորնի հասկեր,
Այնպէս զիս ալ ծըռէ Հոգւովդ.
2. Եւ երբ չար սիրտս է հակառակ,
Հոգւովդ գործին իմ ներսիցին.
Տէր զօրութեանց իրբեւ կրբակ,
Եկ ըսպառէ թաղուն մեղքերս:
3. Ալիքն ինչպէս փոթորիկին,
Տեղի կուտայ խոնարհարար.
Եւ խորտակի վրայ եղերքին,
Այնպէս կուտրէ, օրհնէ, զիս Հայր:
4. Եւ որթին ճիւղն ինչպէս լլժան,
Կը յանձնուի այգեպանին.
Ես ալ փնտռեմ ինձ ոչ մի բան,
Այլ խոնարհիմ միշտ Քու առջին:
5. Տէր զիս ծըռէ զի ես կաւ եմ,
Եւ անարժէք, ո՛հ, ֆեղ համար.
Շինէ անօթ մը այս կաւէդ,
Որ Քեզ պատուեմ հեզ և խոնարհ:

467

(187) ՇԵՆՈՐՀԲԸ ՀԵՐՈՒՔ Է Բ Կորն.12,9.

His grace was sufficient for me. Alex. 101

1. Քու շնորհքըդ հերիք է ինձի,
Երբ վախով մօտենամ կողիդ արիւնլըւայ,

Դու մեղքէս կը մաքրեա նոր սիրտ կը պարգեւս
Քու շնորհքըդ հերիք է ինծի:

Ինծի, ինծի, Քու շնորհքըդ հերիք է ինծի,
Ինծի, ինծի, Քու շնորհքըդ հերիք է ինծի:

2. Քու շնորհքըդ հերիք է ինծի,

Ինչ որ ալ պատահի, դու զիս պահես պիտի,
Ես միշտ եմ ապահով, որչափ մընամ քու քով
Քու շնորհքըդ հերիք է ինծի:
Ինծի ինծի . . .

3. Քու շնորհքըդ հերիք է ինծի,

Դուն կը հոգաս պէտքերս, յերկին կ'ուղղես
քայլերս,
Երբ անցնիմ ձորն մահուան, ինձ կ'ըլլաս ա-
Քու շնորհքըդ հերիք է ինծի: [պաստան,
Ինծի, ինծի . . .

4. Քու շնորհքըդ հերիք է ինծի,

Վերին առնես երբ հասնիմ, այս թող ըլլայ
երդնիմ,
Եւ փառք տամ յաւիտեան, իմ Տէրոջ սուրբ
Քու շնորհքըդ հերիք է ինծի: [անուան
Ինծի ինծի . . .

468 ԱՆՑԱՒՈՐ ՊԱՆԴՈՒԽՏ Ա ՊԵՏ. 2, 11:

1. Ես անցաւոր պանդուխտ մըն եմ,

Ինչո՞ւ մեղաց քունով նիրհեմ.

Միայն Փրկիչ Տէրըս սիրեմ,

Զի անցաւոր պանդուխտ մըն եմ.

2. Որ մը կեանքըս կը վերջանայ,

Տեսածներըս կ'ոչնչանայ.

- Մարմնոյս ուժը կը փրճանայ,
Զի անցաւոր պանդուխտ մըն եմ:
3. Ես չեմ ուզեր փառք մեծութիւն,
Կամ աշխարհիս իշխանութիւն.
Դառն կենաց ուրախութիւն,
Զի անցաւոր պանդուխտ մըն եմ:
4. Ոսկի արծաթ հարըստութիւն,
Չեն տար մարդուս երջանկութիւն.
Կ'ուզեմ երկնից արքայութիւն,
Զի անցաւոր պանդուխտ մըն եմ:
5. Պէտք չէ խարուիմ այս բաներուն,
Որ չունենար հոքը նորէն.
Շընորհք կ'ուզեմ երկնից շորմէն,
Զի անցաւոր պանդուխտ մըն եմ:
6. Անցաւոր է բոլոր աշխարհ,
Իւր անուն է ունայն աշխարհ.
Ես իմ Փրկչիս հօտին ոչխար,
Զի անցաւոր պանդուխտ մըն եմ:
7. Բոլոր մարդիկ կը թափառին,
Հաստատուն կեանք չունի ոչ մին,
Պէտք չէ ցանկամ այս բաներուն,
Զի անցաւոր պանդուխտ մըն եմ:
8. Աշխարհի մէջ չունիմ տուն տեղ,
Իեղճ մնացի քանիցըս հեղ.
Աւետարան է հոգւոյս դեղ,
Զի անցաւոր պանդուխտ մըն եմ:

469 (193) Հ Ի Ն Տ Գ Ե Ղ, Խ Ա Ձ Գ աղ. 6. 14:

On a lill far away stood an old. Sl. Str. S. 51

1. Հեռուն յեռան վրայ, կայ մի հին տըգեղ խաչ,
 Իրը նշան ամօթի ու չարչարանաց,
 Կը սիրեմ այն հին խաչն, ուր իմ Տէրս սիրելի,
 Խաչուեցաւ փրկութեան աշխարհի.
 Ուստի սիրեմ այն հին տըգեղ խաչն,
 Մինչ կեանքի փորձութիւնք վերջանան,
 Պիտ' յարեմ ես այն հին, տղեղ խաչի,
 Եւ մի օր փոխեմ զայն պըսակի:
2. Ո՛հ այն հին տըգեղ խաչն, մերժուած աշխար-
 Ունի ինձ մի քաջող գօրութիւն. [հէն
 Զի Գառնուկն Աստուծոյ, թողլով վերն իր փառ-
 Կըրեց զայն գէպ ի սև Գողգոթա: [թը,
 Ուստի սիրեմ այն հին տըգեղ խաչն . . .
3. Սուրբ արեամբ ներկուած, մէջ այդ տըգեղ
 Տեսնեմ հիանալի գեղեցկութիւն, [խաչին,
 Զի այն հին խաչին վրայ, չարչարուեցաւ Յի-
 Փրկելու զիս իմ մեծ մեղքերէս: [սուս,
 Ուստի սիրեմ այն հին տըգեղ խաչն . . .
4. Այն հին տըգեղ խաչին մընամ հաւատարիմ,
 Իր ամօթն ուրախութեամբ կըրեմ.
 Երբ նա օր մը կանչէ զիս հեռուն վերին տունն
 Ուր յաւէրժ պիտի երգեմ իր սէրն:
 Ուստի սիրեմ այն հին տըգեղ խաչն . . .

470 (195) Մ Ի Ա Յ Ն Ա Յ Ա Օ Ր Մար. 6. 34.

Lord, for to marrow and its needs. S. S. S. (38

1. Վաղուայ հոգերուն համար Տէր,

Ձեմ աղաչեր.

Պահէ զիս Տէր մեղաց թոյնէն,

Այսօր միայն.

Այսօր միայն, այսօր միայն,

Պահէ զիս Տէր մեղաց թոյնէն,

Այսօր միայն.

2. Տէր ժրաջան ալ զործելով,

Միշտ աղօթքով.

Դործերուս մէջ միշտ քաղցր բլլամ,

Այսօր միայն.

Այսօր միայն, այսօր միայն,

Դործերուս մէջ միշտ քաղցր բլլամ,

Այսօր միայն.

3. Ձընեմ պարապ. սխալ գործ մը,

Անհոգ խօսք մը.

Դիր կնիքդ շուրթներուս վրայ,

Այսօր միայն.

Այսօր միայն այսօր միայն,

Դիր կնիքդ շուրթներուս վրայ,

Այսօր միայն.

4. Վաղուան հոգերուն համար Տէր.

Ձեմ աղաչեր.

Սիրովդ Տէր հսկէ իմ վրաս,

Այսօր միայն.

Այսօր միայն, այսօր միայն,

Սիրովդ Տէր հսկէ իմ վրաս,

Այսօր միայն.

471 Ք Ե Ձ Ի Հ Ա Մ Ա Ր Բ Կ ՐՃ. 5. 15.

My life my love, I give to Thee. N. H. 182

1. Իմ կեանք, իմ սէրս կուտամ Գեղի,
Գառն Աստուծոյ Դոյզոթայի.
Որ մահուամբդ կեանք տըւիր ինձի,
Փրկիչս եւ իմ Աստուած,
Պիտի ապրիմ Գեղի համար,
Որ խաչին վրայ վասն իմ մեռար.
Եւ քաւեցիր մեզքս անհամար,
Փրկիչս եւ իմ Աստուած,

2. Անմեղ էիր եւ անարատ,
Մեզքիս պատիժն առիր վըրադ.
Ձոհ եղար Դու, եւ ես ապատ,
Փրկիչս եւ իմ Աստուած.
Պիտի ապրիմ Գեղի համար . . .

3. Բիւր վառք Գեղի ո՛վ Փրկիչ իմ,
Ձի Դու մեռար որ ես ապրիմ.
Դու Դայլերուդ պիտ' հետեւիմ,
Փրկիչս եւ իմ Աստուած,
Պիտի ապրիմ Գեղի համար . . .

472 ԲՈԼՈՐ ՍՐՏՈՎ ԿՈՒԴԱՄ ԵՐԵՄ. 29. 13.

C. H. 256

1. Ինչպէս որ եմ, ըլլալ Գուկին,
Ով բարեկամ զեռահասին.
Կը նուիրեմ քեզի անձն իմ,
Ով Տէր Յիսուս կուգամ:

2. Կեանքիս առտուն Գեղի տալու,
Ուխտերս լըման կատարելու.
Առանց կատկած առանց վախու,
Բոլոր սրտով կուզամ:
3. Կ'ուզեմ լուսոյ մէջ միշտ ապրիլ,
Որդարութեան ալ աշխատիլ.
Բոլոր ուժովքս ձառայել,
Ուստի Գեղի կուզամ:
4. Ինչպէս որ եմ քաջ եւ զուարթ,
Ձանալ նշմարտութեան համար.
Ըլլալ զիւցազն Գեղի համար,
Կեանքիս փրկիչ, կուզամ:
5. Սիրոյդ համար կեանքիս յաղթել,
Քու ձեռքերէդ պսակս առնել.
Եւ քու ոտիցդ առջեւ ձգուիլ,
Յիսուս Տէր իմ, կուզամ:

473 (201) ԱՄԷՆ ԻՆՁ ԿՈՒՑԱՄ Մարկ. 10 28՝

All to Jesus I surrender. S. S. S. 601

1. Ամէն բանքս, Տէր ամէն բան,
Կը նուիրեմ շարունակ.
Սիրտըս, սէրս եւ կամքս թող ըլլան,
Մի միայն Գեղ հըպատակ:
Ամէն ինչ կուտամ,
Ամէն ինչ կուտամ,
Ձիս յաւէտ սիրող փրկիչըս,
Ամէն ինչ կուտամ:

2. Ամէն բանբա, Տէ՛ր, ամէն բան,
 Փառք, պատիւ, հաճոյք բոլոր,
 Կ'ընեմ յաւէտ քեզ պատուանդան.
 Որ ըլլամ զո՞ւ օր է օր:
 Ամէն ինչ կուտամ . . .

3. Ամէն բանբա, Տէր, ամէն բան,
 Քուկդ բրէ, քեզ քաշէ մօտ,
 Դուն իմա եղիբ, զիս քեզ արժան,
 Ծառայ մ'ըրէ, յաւիտեան:
 Ամէն ինչ կուտամ . . .

4. Ամէն բանբա, Տէր, ամէն բան,
 Իրաւցրնէ Քուկդ ըլլան.
 Որ կարենամ ես միշտ հրդեհ,
 «Կը նուիրեմ, ամէն բան»:
 Ամէն ինչ կուտամ . . .

5. Ամէն բանբա, Տէր, ամէն բան,
 Ո՞վ սիրոյ մեծ ուղիէան.
 Կը նուիրեմ քեզ յաւիտեան,
 Սէբբա, սիրտս և ամէն բան:
 Ամէն ինչ կուտամ . . .

474 (203) ԼԻՈՎԻՆ ՔԵՋԻ Հոսով. 12, 1.

My Spirit, soul and body. S. S. S. 637, S. V. 499

1. Հոգիս, շունչըս և մարմինս,
 Քեզի ես կ'ընծայեմ.
 Կենդանի զոհ հաճելի,
 Բոլոր քեզ նուիրեմ:

Սուրբ սեղանիդ վրայ դրուած,
 Ահա Բեզ կ'ըստպանեմ,
 Որ կրակով մաքրուած,
 Բլլամ քուկդ յաւիտեան:

2. Ի՞նչ մեծ փրկիչ եւ հրշոյր,
 Քեզի եմ հընադանդ
 Եւ կրթակիդ անձնատուր,
 Նայիմ Բեզ անդադար:
 Սուրբ սեղանիդ վրայ դրուած . . .

3. Ի՞նչ, անմաքուր իմ սրտիս,
 Հիմա կրակ դրկէ.
 Որ այրելով իմ ընծաս,
 Անբիծ մաքուր ընէ:
 Սուրբ սեղանիդ վրայ դրուած . . .

4. Յիսուս գըլթած Գուկդ եմ ես,
 Լուս' զիս արիւնովդ.
 Քեզ հաճելի ողջակէզ,
 Բրէ զիս Սուրբ Հողւովդ:
 Սուրբ սեղանիդ վրայ դրուած . . .

475

Ի Մ Մ Ե Ն Փ Ա Փ Ա Ք Ս Յովն. 17, 3.

1. Յիսուս փրկիչ, Գրիստոս Աստուած,
 Կեանք յաւիտեանական.
 Դու ես Հօրմէն աշխարհ դրկուած,
 Որ Բեզ ամէնն ճանչնան:
 Ի՞նչ, ես փափաք աս այս ունիմ,
 Յիսուս, որ Բեզ ճանչնամ.
 Այլոց նաեւ ճանչըցրեմ,
 Որ շուտ կեանք ունենան:

2. Որչա՞փ կուտայ սրտիս մեծ ցաւ,
 Յիսուս իմ պատուական
 Ձճանչնայով Քու սէրդ անրաւ,
 Ո՞րպիկ կորուստ կերթան,
 Ո՞հ ես փափաք առ այս ունիմ . . . ,
 Որ շուտ սէրդ հասկնան:
3. Ճանչնամ, Յիսուս, ա՞հ, թող ճանչնամ,
 Ոյժը Քու յարութեան,
 Չարչարանացդ հաղորդ ըլլամ.
 Կերպակից Քու մահուան,
 Ո՞հ, ես փափաք առ այս ունիմ . . . ,
 Քու զօրութիւնդ ճանչնան:
4. Այս, յիրաւի, այս է ինծի,
 Գիտութիւն զերպանից.
 Երկրիս վերայ, և թէ յերկնի.
 Ձրկայ ուրիշ վիճ անձ,
 Ո՞հ, ես փափաք առ այս ունիմ . . . ,
 Քու վեհութիւնդ տեսնան:
5. Դիտեմ Յիսուս Քեզ ճանչնալով,
 Կուենեամ ամէն բան,
 Առատ շնորհք, խաղաղութիւն,
 Խոստումունքներ պատուական,
 Ո՞հ, ես փափաք առ այս ունիմ . . . ,
 Որ Քեզ ժառանգ ըլլան:
6. Ձիս, անեցո՛ւր, թող միշտ աճիմ,
 Յիսուս Քու գիտութեամբ,
 Քեզ ճանչնալու մէջ. ո՞հ չըլլամ.
 Պարապ և անպըտուղ,
 Ո՞հ ես փափաք առ այս ունիմ . . . ,
 Արքայութիւնդ մտնան:

476 Հ Ո Գ Ի Ի Ս Ի Ղ, 2 Ը Սաղմ. 42. 1.

1. Հայածական հղնիկն ինչպէս,
 Զով ջուրի պապակի,
 Ծառած հոգիս ով Տէր այնպէս,
 Միշտ փեղ կը փափաքի.
 Զով ջուրերու, հղնիկն ինչպէս,
 Նոյնպէս հոգիս կը ցանկայ փեղ.
2. Հին օրերու վերջի շումով,
 Հառաչեմ փեղ ո՞վ Տէր.
 Գու սրբաբանդ մեծ հանդէսով,
 Մտնէ սիրտ կարեւոր.
 Զով ջուրերու, եղնիկն ինչպէս
3. Հզօր Աստուած իմ փեղ համար,
 Ծառած անձս կը հալի.
 Ե՞րբ պիտի գամ ու տեսնեմ յար.
 Երեսդ սըխրալի.
 Զով ջուրերու, եղնիկն ինչպէս
4. Անձն իմ ինչո՞ւ ես միշտ տխուր,
 Թն ցնծա բերկրանքով.
 Փառարանէ կեանքի աղբիւր,
 Յարատեւ աղօթքով.
 Զով ջուրերու, եղնիկն ինչպէս

477 (214) ԱՄԷՆ ՕՐ, ԱՄԷՆ ԺԱՄ Սաղմ. 17, 8.

Saviour more than life to me. S. S. S. 670

1. Փրկիչ կեանքէս աւելի,
 Կ'ուզեմ փարիլ, միշտ փարիլ Քնչի.
 Թող թափած արիւնդ անդին,
 Պահէ զիս մօտ, միշտ մօտ Գու կողին.

Ումէն օր, ամէն ժամ,
 Մաքրող զօրութիւնդ ըզգամ.
 Թող Բու քաղցըր սէրդ ինծի,
 Պահէ զիս միշտ, պահէ մօտ քեզի:

2. Ոյս վաղանցիկ աշխարհէն,
 Ու հոգիւ զիս մեղմիւ առաջնորդէ.
 Երբ Բեզի ես վստահիմ,
 Ճամբէս ես բնաւ պիտ' բնաւ չը շեղիմ,
 Ամէն օր, ամէն ժամ

3. Թող սիրեմ Բեզ աւելի,
 Մինչև այս կարճ խիստ կարճ կեանքս անցնի,
 Մինչև թաղուիմ սիրոյդ մէջ,
 Վերն պայծառ աշխարհն, պայծառ, անվերջ.
 Ամէն օր, ամէն ժամ

478 ՏԷՐ ԻՄ ԿՊԻՁԵՄ ԱՊՐԻԼ ՓԻՂ. Յ. 7—10.

1. Շուտ պիտ' անցնի մէզն ու խաւար այս կեանքին
 Հոգ չեմ ընեմ բազմին անգութ քըմայքին.
 Զի գիտեմ թէ թըշուառ մարդոց ապաղան,
 Վայելքներով լի առ լըցուն կեանք մը կայ:
 Տէր իմ, կ'ուզեմ ապրիլ այն կեանք,
 Ուր չիք վախ ցաւ գիշեր տանջանք.
 Որուն արեւ Դու ես Յիսուս,
 Հոգւոյս Փըրկիչ միակ իմ յոյս:
2. Թաղ մը գըլխուս քընար մը իմ մատներուս,
 Հրեշտակային կեանք մը անվերջ ու սիրուն.
 Երազներ չեն սոսկ ոսկեհիւս օղային,
 Իմ հաւատքըս ու խոստումը Անմահին:
 Տէր իմ կ'ուզեմ ապրիլ այն կեանք

3. Ոչխարհն, ոսկի, արևն ամբողջ աղամանդ,
Իմս ըլլար եւ զիրք մը փայլուն անվըտանդ,
Ոյս ամէնը չէի փոխեր հոգեռոյս ու,
Ոյն կեանքին հետ զոր պիտ' ապրիմ յետ մահու
Տէր իմ կ'ուզեմ ապրիլ այն կեանք . . .
4. Երբոր մահուան պաղ քրտինքը ճակատէս,
Կր կաթկըթի, երբոր ինծի ալ անտես,
Կ'ըլլան զէմքերն իմ սիրելեաց ո՛հ, Հայր իմ.
Շնորհէ որ այդ սուրբ ապագայ կեանքն ապրիմ
Տէր իմ կ'ուզեմ ապրիլ այն կեանք . . .

479 Ո. Ի. Ղ. Ղ. Է. Զ. Ի. Ս. Սաղմ. 139, 21.

Lead me gently Home Father. S. S. S. 1178

1. Ուղղէ զիս մեղմիւ, Հայր իմ,
Ուղղէ զիս տունն իմ.
Երբ կենաց վիշտ հաանին.
Հրաժեշտի օրեր զան,
Մեղքն զիս պիտ' չը փորձէ.
Զգատուիմ ալ Գեղմէ,
Միայն թէ մեղմիւ ուղղէ զիս,
Հայր իմ, ուղղէ զիս:
Ուղղէ զիս մեղմիւ, Հայր իմ,
Ուղղէ զիս մեղմիւ, Հայր իմ.
Որ չիյնամ ոչ մէկ կողմ ճամբուն,
Ուղղէ զիս ի տուն:
2. Ուղղէ զիս մեղմիւ Հայր իմ,
Ուղղէ զիս տուն իմ.
Երբ անցնիմ խաւարէն,
Ու կենաց վիշտերէն.

Քայլերս դուն պահէ,
 Զարէն ազատէ,
 Որ ապահով երկինք հասնիմ,
 Ազդէ զիս Հայրիմ
 Ազդէ զիս մեզմիւ Հայր իմ . . .

480 (219) Տ.Ա.Ր. Զ.Ի.Ո. Սաղմ. 32 Ց.

1. Ո՛հ, առ դուն իմ ձեռքերս և տար դուն զիս,
 Մինչև իմ կեանքիս վերջը յաւիտեանս.
 Զեմ կրնար մինակ քալել քայլ մը բնաւ,
 Ուր դուն երթաս և կայնիս զիս հեռոց տար.
2. Շնորհացդ մէջ խաղէ Տէր տկար սիրտս,
 Ուրախ տրտում ատենս լուռ պահէ զիս,
 Հանդստացուր առջեւդ տկար զաւակդ,
 Կ'ուզէ աչքերը դոյնել հաւատացեալ կոյր.
3. Երբ քու մեծ զօրութիւնդ ալ չեմ զգար,
 Դուն գործդ գլուխ կը հանես ալ մութ ատեն,
 Ո՛հ, առ դուն իմ ձեռքերս և տար դուն զիս.
 Մինչև իմ կեանքիս վերջը յաւիտեանս.

481 (216) ՓՐԿԶԻՆ ԿՐԿՐՈՏԻՄ Յովհ. 10, 4.

I must have the saviour with me. Alex. 15, S. V. 1

1. Կարօտ եմ, Փրկիչ. Քեզ կարօտ,
 Զիս քաշէ, յաւէտ Քեզ մօտ.

Դիչերն եղիր, լոյս շարունակ,
 Յորեկն այ ամպի սիւնակ,
 Ձեմ սոսկար, ո՞հ յաւիտեան,
 Երբ շաւղիդ մէջ կ'ընթանամ.
 Քալիլոյ շատ մօտ հետքերուդ,
 Կ'ուենեմ հրճուանք անշուշտ:

2. Կարօտ եմ, փրկիչ իմ սիրուն,
 Որ հաւատքս ըլլայ կայուն.
 Առաջնորդ ըլլայ Սուրբ մատեան,
 Ուղղելով կեանքիս ճամբան:
 Ձեմ սոսկար, ո՞հ, յաւիտեան . . .

3. Կարօտ եմ փրկիչ, քեզ՝ աշօր,
 Փորձութեան մէջ նորանոր,
 Կենաց պայքարին մէջ մոլոր,
 Տէ՛ր ուղղէ ընթացքս բոլոր:
 Ձեմ սոսկար ո՞ն, յաւիտեան . . .

4. Կարօտ եմ, փրկիչ, մի միայն,
 Սուրբ հոգւոյդ միշտ ուղղութեան,
 Մինչ անցնիմ դեռէն Յորդանան,
 Երկնային բընակարան:
 Ձեմ սոսկար, ո՞ն, յաւիտեան . . .

482 (224) Փ Ր Կ Ձ Ի Ս Հ Ե Տ Սաղմ. 78.52.

Anywhere with Jesus I can safely go. S. S. S. 627

1. Ամէն տեղ կ'երթամ ես Տէր Յիսուսի հետ,
 Ամէն տեղ զիս կ'ապահովէ նա յաւէտ.
 Ոչ մէկտեղ առանց իրեն կ'ըլլամ ուրախ,
 Ամէն տեղ Յիսուսի հետ կ'երթամ անվախ:

Ամէն տեղ, ամէն տեղ, անվախ անվրդով,
Ամէն տեղ Փրկչիս հետ կ'երթամ ապահով:

2. Երբ Տէրոջ հետ եմ ես մէկու չե՛մ կարօտ,
Բարեկամք երբ գիտ լրքեն, Յիսուս է մօտ.
Երբ բաժինս ըլլայ վայր մը տառապանաց,
Յիսուսով այն տեղն իսկ կ'ըլլայ տուն փառաց
Ամէն տեղ, ամէն տեղ, անվախ անվրդով,
Ամէն տեղ Փրկչիս հետ կ'երթամ ապահով:

3. Ամէն տեղ ես տէրոջմով ննջել կրնամ,
Թէ ըլլայ որ հոս աչքերս ալ չը բանամ.
Բայց տէրոջ փողին ձայնէն երբ արթննամ,
Յիսուսի պայծառ զէմքէն պիտ' կշտանամ.
Ամէն տեղ, ամէն տեղ, անվախ անվրդով,
Ամէն տեղ Փրկչիս հետ կ'երթամ ապահով:

483 (230) ՕՐԵՐՆ ԿՈՆՀԵՏԻՆ Յադ. 9. 4.

There are lonely hearts to cherish. S. S. S. 802

1. Սրտեր կան խընամբի կարօտ.

Մինչ օրերն չուտ կ'անհետին,

Յողնածներ կորցնուան չառ մօտ.

Մինչ օրերն չուտ կ'անհետին,

ժպիտ մը հեղն կը փրկէ,

Անտարրեր մ'անցնիր անկէ,

Ոհ բարիք դորձել պարտք է.

Մինչ օրերն չուտ կ'անհետին,

կ'անհետին, կ'անհետին,

կ'անհետին, կ'անհետին.

Ոհ. բարիք դորձել պարտք է.

Մինչ օրերն չուտ կ'անհետին.

2. Մի ուղղեր նայուածք հեղնալի.

Մինչ օրերն չուտ կ'անհետին,

Յօրեկուան պէս թող դէմքդ փայլի,

Մինչ օրերն չուտ կ'անհետին,

Զի աշխարհն է փայր տխուր,

Հոս արցունք, հոն թուք ու մուր.

Դուն ինկած ընկերդ փրցո՛ւր,

Մինչ օրերն չուտ կ'անհետին,

կ'անհետին, կ'անհետին

3. Սիրոյ սուրբ կապերըն աւ՛աղ,

Մինչ օրերն չուտ կ'անհետին,

Պիտի հոս լուծուին ուշ կամ վաղ.

Մինչ օրերն չուտ կ'անհետին,

Գործըւած բարիք սակայն,

Դադտնի և կամ յայտնի այն,

Մարդուն հետ կ'ապրի երկայն.

Մինչ օրերն չուտ կ'անհետին,

կ'անհետին, կ'անհետին

484 (251) Ո Ն Ի Գ Ո Ր Ծ Wusp. 21, 23 .

To the work! to the work. S. S. S. 751

1. Ոն ի գործ, օն ի գործ, ո՛վ եղբարք օն յառաջ
 Հետեինք աշն շաւղաց յորս մեր Տէրն է քալած
 Սնդաղար աշխատինք տարածենք սէր և լոյս,
 Քաջասիրտ միշտ բլլանք Տէրն է մեզ խրախոյս:
 Ոն յառաջ, օն յառաջ, օն յառաջ, օն յառաջ,
 Ի մեծ յոյս սպասենք Տեառն զալըստեան ան-
 զուլ գործենք:
2. Ոն ի գործ, օն ի գործ բղթապցեալն յագիցնենք
 Եւ կենաց ագրիւրին ծարաւեալն մօտ բերենք
 Պարձենանք ի խաչ Տեառն աւետենք ամէնուն
 Կենսական այս մեծ լուրն է ձրի փրկութիւն:
 Օն յառաջ, օն յառաջ
3. Ոն ի գործ, օն ի գործ յարածամ կայ մեզ գործ
 Կործանենք Սատանին զօրութիւն ու ամբոյց,
 Յաւիտեան բարձրանայ Եհովայ մեծ անուն,
 Եւ գոչենք միաձայն է ձրի փրկութիւն:
 Օն յառաջ, օն յառաջ
4. Ոն ի գործ, օն ի գործ Տէրն է մեզ օգնական,
 Թէ գործենք եռանդուն կայ մեզ վարձք պատ-
 ուական:
 Երբ հասնինք ի յերկին փառաւոր տուն փայլուն,
 Եւ երգենք սրբրոյց հետ այս ձրի փրկութիւն:
 Օն յառաջ, օն յառաջ

485 Գ Ո Ր Ծ Է Ա Ն Դ Ա Դ Ա Ր Յակ. 5, 20:

1. Կայ դաշտ մը լայն գործ մը անհուն ամէնուն
 Թափենք մեր ջանք անձնուէր և եռանդուն:

Մի՛ ծուլանար օրն ի բուն զիզէ հասկեր ոսկեղոյն
Հունձքն է Տէրոջ. ուստի անդուլ գործէ դուն.

Մի բնաւ տնտնար, այլ գործէ անդադար,

Օրն քրտնաջան պիտի շուտ աւարտի.

Մի մնար դու ծոյլ, դանդաղ, այլ աշխատէ ան-
հապաղ,

Զի վարձքն անբաւ պիտ' ըստանաս ուշ կամ վաղ.

2. Ո՛վ ծոյլեր, մեծ հունձքն պատրաստ է ձեզ համար
Հոն կ'աշխատին մարդիկ անթիւ անհամար,

Տէրն կը կանչէ յարածամ հնձել ճոխ հունձքն իր
դաշտին,

Սե՛ծ վարձք կայ ձեզ թէ շուտ անսաք իր ձայնին.

Մի բնաւ ճնճնար այլ գործէ անդադար . . .

3. Եւ կ'սպասէ ու կը կանչէ դեռ Տէր մեր,

Երթալ իւր այգին աշխատիլ յօժար լիւր,

Թէ ուշ ըլլայ թէ կանուխ, դնա գործէ սրտա-
րուխ,

Արդար բաժինդ պիտ' չահիս դու մեծ թէ փոքր.

Մի բնաւ ճնճնար այլ գործէ անդադար . . .

486 ԴՈՐԹԵՆԹ ՄԻԱՍԻՆ ԲԿՐԸ. 6, 1.

(When upon life's billows you are.) S. S. S. 745

1. Յիսուս յաղթական կ'անցնի ծով ու ցամաք.
Սուրբ կըռիւ մըղենք իր հաւ'տարիմ բանակ.
Հոս հոն ո՛հ, որչափ հոգիներ կան պատրաստ,
Օն քաջ զինւորք փութանք անոնց փրկութեան,
Եղբայր քոյրեր, գործենք միասին,
Նոր հոգիներ բերենք Յիսուսին.

Եղբայ, քոյրեր, գործենք միասին,
Միշտ նոր հոգի մ'ալ բերենք Տէր Յիսուսին:

2. Եթէ լքանի մեր ումն պակսի քաջութիւն,
Սուրբ Հոգին տայ մեզ եռանդ ու զօրութիւն,
Նայինք Յիսուսի խաչին սուր զրօշակին,
Իր մեծ զօրութեամբ արգելքներ կ'անհետին:
Եղբայ, քոյրեր գործենք միասին . . .

3. Որդիք Աստուծոյ խմբովին միարան,
Սուրբ ձեռքերնիւ թող գէպ երկինք բարձրանան
Բնաւ մի խնայէք խօսք ջանք աղօթք հրաւէր
Շուտ Փրկչին բերենք ամէն կոյրեր կաղեր:
Եղբայ, քոյրեր գործենք միասին . . .

4. Ո՛հ, ինչ բերկրանք է ըլլալ ազատարար,
Արեամբ զնուած հոգիներու անհամար:
Ո՛հ, ինչ շքեղ է երբ հիւրերու թիւն լեցուի,
Եւ Արքային մեծ հարսանիքն ըսկսի:
Եղբայ, քոյրեր գործենք միասին . . .

487 (250) ԽՈՒԲՁԵՐՆ, ՆԵՐՍ ԲՆԲՆԵՐ Սաղ. 126, 6:

Sowing in the morning. S. S. S. 757

1. Յանենք խօսքն Աստուծոյ, առաւօտ կամ իրկուս
Տանք անօթի հոգւոց իր ճրշմարտութիւնն,
Եւ պատենք բերքին և հնձելու ժամուն,
Շուտ պիտի ցնծութեամբ խուրձերն ներս բերենք
Խուրձերն ներս բերենք, խուրձերն ներս բերենք,
Շուտ պիտի ցնծութեամբ խուրձերն ներս բերենք:
Խուրձերն ներս բերենք, խուրձերն ներս բերենք,
Շուտ պիտի ցնծութեամբ խուրձերն ներս բերենք:

2. Յանենք պայծառ կէսօրն կամ զիշերու ան մութին
Թէ երկինք մթնագնի, կամ հովերն զրտին,
Քիչ ատենէն հունձք կայ մեր էամբուն վախճանին
Երբ պիտի ցնծութեամբ խուրձերն ներս բերենք,
Խուրձերն ներս բերենք . . .
3. Ուստի գնա արցունքով, Տէրոջդ համար ցանէ,
Թէ վիշտ ըլլայ բաժինդ աշխարհ քեզ մերժէ,
Երբ վիշտերը անցնին Տէրն մեզ պիտ' ողջունէ,
Եւ պիտի ցնծութեամբ խուրձերն ներս բերենք,
Խուրձերն ներս բերենք . . .

488 (246) Ի՞նչպէս երթամ Երթաւ Դաւ. 12. 3.

Must I go and empty handed? S. S. S. 789

1. Ի՞նչպէս երթամ պարապ ձեռքով,
Տեսնել փրկիչս ո՞հ այսպէս,
Չունիմ ո՛հ ես իրեն տալու,
Պըտուղ օրհնեալ իմ կեանքէս,
Ի՞նչպէս երթամ պարապ ձեռքով,
Տեսնել փրկիչս ո՞հ այսպէս,
Ի՞նչպէս կրնամ ես համարձակ,
Դիմաւորել զինք ի տես:
2. Մահն ինձ երկիւղ չ'ազդեր երբէք,
Զի փրկիչս է զիս փրկած,
Ոայց ո՞հ ինչպէս կրնամ սիրով,
Փարիլ անոր գրկաբաց,
Ի՞նչպէս երթամ պարապ ձեռքով . . .
3. Ո՛հ թէ անցեալ մեղքի ժամերս,
Տէրս կանչել կարենայի,
Զանոնք ամբողջ Տէր Յիսուսի,
Կ'ընէի կարգին գերի:
Ի՞նչպէս երթամ պարապ ձեռքով . . .

4. Ո՛ր դուք սուրբեր քաջութիւնով,
Ասպարէզ ելէք գործի,
Դործեցէք քանի որ լոյս կայ,
Զի մահն է շատ մօտ մեզի:

Ինչպէս երբոմ պարագ ձեռնով . . .

489 Յ Ի Ս Ո Ւ Ս Ի Ա Ն Ո Ւ Ն Ո՞ Գարմ. 4. 12.

The sweetest name. Schl. H.

1. Ին քաղցրը Անունն զոր տըւաւ երկին,
Հրեշտակներ ցնծմամբ մեզ աւետեցին.
Այն քաղցրանունն է փրկանք ամենու,
Պատմենք բոլոր աշխարհ այն Անունը Յիսուս:
Յիսուս, Յիսուս, երկնի և երկրի քաղցրա-
նունն,
Յիսուս, Յիսուս, յաւիտեան իր արժէք նոյնն
Յիսուս անունն՝ ինձ վահան,
Երբ վրաս դեք նետեր տեղան,
Յիսուս, երկնի և երկրի քաղցր անունն.
2. Ին քաղցրը անունն վերն երկինք գովին,
Պաշտեն զԱյն երկրիս ազինք համօրէն.
Այն քաղցրանունն է պարծանք ամենու,
Պատմենք բոլոր աշխարհ այն անունը Յիսուս,
Յիսուս, Յիսուս երկնի եւ երկրի . . .
3. Յիսուս անունէն սարսափի Սատան,
Յերկնից վար կ'իյնայ կայծակի նըման,
Իսկ այն անունն է հրճուանք ամենու,
Պատմենք բոլոր աշխարհ այն անունը Յիսուս:
Յիսուս, Յիսուս երկնի եւ երկրի . . .
4. Ին այն քաղցրը անունն յարոյց Ղազարոս,
Տեսութիւն գտաւ կոյր Բարդիմէոս,
Այն քաղցրանունն է բժիշկ ամենու,
Պատմենք բոլոր աշխարհ այն անունը Յիսուս:
Յիսուս, Յիսուս երկնի եւ երկրի . . .

ՔՐԻՍՏՈՍԻ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՈՒՍՏԸ

490 ԼՍԷՅԼՔ ԻՆՁ ԿՐՍԷ Յայս. 2. 7.

(Hallelujah, what a thought) S. H. C. 1-8

1. Լսեցէ՛ք, ի՞նչ կ'ըսէ Տէր,
Որ մեռաւ կենդանացաւ,
Մեր Այֆան, Օմեղան.
Լսեցէ՛ք, ի՞նչ կ'ըսէ Տէր,
Զօրութեան աջ կողմ նըստած,
Հաւտարիմ մեծ վրկան.
«Միշտ արթուն դուք հըսկեցէք,
Զի ահա շուտով կուգամ,
Եւ իմ վարձքս իմ հետս է.
Հատուցանել ամէն մէկուն,
Համեմատ իր դորձերուն»:
2. Լսեցէ՛ք, ի՞նչ կ'ըսէ Ան,
Որ ունի եօթը աստղերն,
Իր սուրբ աջ ձեռքին մէջ.
Լսեցէ՛ք, ի՞նչ կ'ըսէ Ան,
Որ պըտտի եօթն ոսկեղէն,
Աշտանակներուն մէջ.
«Յաղթողին, այո, յաղթողին,
Պիտի տամ անոր ուտել,
Պըտղասու կենաց ծառէն.
Եւ խմել այն մաքուր գետէն,
Աստուծոյ գըրախտին մէջ»:
3. Լսեցէ՛ք, ի՞նչ կ'ըսէ Ան,
Աստուծոյ Որդին Յիսուս,
Ռոյաւառ աչքերով.

Լսեցէ՛ք, ի՞նչ կ'ըսէ Ան,
Արտազէտ հատուցանող,
Կործերու համեմատ:

«Յաղթողին, այո յաղթողին,
Արտին մէջ լոյս Արուսեակ,
Ողին մէջ ալ պայծառ աստղ,
Պիտի տամ և իշխանութիւն,
Ազգերու վրայ տիրել»:

4. Լսեցէ՛ք, ի՞նչ կ'ըսէ Ան,
Աստուծոյ հաւատարիմ,
Ճըշմարիտ սուրբ վրկան.
Լսեցէ՛ք, ի՞նչ կ'ըսէ Ան,
Առաջինը և վերջին,
Սկիզբը և վախճան:

«Յաղթողին, այո յաղթողին,
Պատուէրներս կատարողին.
Իր հանգերձը լուսնողին,
Պիտի տամ և իշխանութիւն,
Ի վերայ կենաց ծառին»:

5. Կը լըսենք ձայնդ, ով Յիսուս,
Որ սիրով մորթուեցար,
Մեզ արեամբ գընեցիր.
Կը լըսենք ձայնդ, ով Յիսուս,
Դու մեր լոյս, երջանիկ յոյս,
Բուկդ ենք արդ յաւիտեան:

Դու միայն ես արժանի,
Առնելու իմաստութիւն,
Զօրութիւն, կարողութիւն,
Փառք, պատիւ, ամէն օրհնութիւն.
Այժմ և միշտ և յաւիտեան:

491 (274) ԱՀԱ. ՇՈՒՏՈՎ, ԿՈՒԴԱՄ ԿԱՆ. 22 20:

1. Կ'ըսպասենք մենք Տէր Յիսուսին,
Անոր երկրորդ գալը տեան.
Առաւօտեան արշալոյսին,
Օղին մէջ ամպերուն վրան.
Դիչերուն խաւար պահերուն,
Լուսնի աղօտ լոյսին մէջ.
Կ'սպասենք ու կը նայինք մենք,
Յոյսով մը հաստատ անվերջ.
2. Անհամար ամբոխին մէջէն,
Պիտ' տեսնենք պառնուկն մորթուած,
Երբ սաւառնինք օղին մէջէն,
Պատմութեանով լուսադղեաց.
Պիտ' օրհնենք Փրկիչ Յիսուսը.
Հըրեշտակաց նոր երգով,
Եւ պիտի պըսակուինք փառքով,
Յաւիտեանըս Անոր քով.
3. Զօրաւոր փողին հնչումը,
Ահ ու սարսափ պիտ' ազդէ,
Կեանքի պայքարն վերջացնելով,
Մեռելներն յարուցանէ,
Եւ մէկ անգամ իս զօրաւոր,
Պիտ' հնչէ փողն ահաւոր,
«Մըտէ՛ք փառքը սուրբի աշտօր,
Ի կորուստ, ո՛վ մեղաւորք».
4. Տեսէ՛ք Ան կուգայ յիրաւի,
Իր խոստմունքին համեմատ,
Սարսափեցէք ծաղր ընողներ,
Ահա Ան կուգայ հաստատ,
Տէրը կուգայ, Տէրը կուգայ,
Դիմաւորելու ելլենք.
Շատոնց Անոր սպասած ենք,
Հիմա զինք կը տեսնենք մենք.

492 (275) ԱՍՏՈՒՄՈՅ ՓՈՂԸ Ա.Թ.Ես. 4, 15.

When the trumpet of the Lord. S. S. S. 183

1. Երբ հնչէ ժողո՛ւն հրեշտակին արձականդեն երկիր
 երբ հառնին բոգեք ժամերն ժամանակին. [երկին
 երբ ձագի մի արշայոյս, սուրբեր համայն համա-
 Ռ՛հ թէ հս ալ ըլլայի մէջն այն խումբին. [խմբին
 Ռ՛հ թէ հս ալ հոն ըլլայի,
 Ռ՛հ թէ հս ալ ըլլայի մէջն այն խումբին.
2. Լուսափայլ առաւօտուն երբ մեռեալն երն ամէն
 յարնեն,
 Սրբարք համօրէն մեծ վարձք պիտի առնեն.
 Երբ ընտրեալ անմահ հոգիք շրջապատեն դահն
 Արքային,
 Ռ՛հ թէ հս ալ ըլլայի մէջն այն խումբին.
 Ոն թէ ես ալ նոն ըլլայի . . .
3. Քեզ կուտամ իմ կեանքս բոլոր առ դայն փրկիչ
 [ըսքանչելի,
 Թող լեզուս պատմէ Գու սէրդ անպատմելի.
 Քեզ համար ապրիմ, խորհիմ, զործեմ, խօսիմ ես
 յարածամ,
 Եւ ապա սրբոց խումբին գամ միանամ:
 Եւ ապա սրբոց խումբին գամ,
 Եւ ապա սրբոց խումբին գամ միանամ.
- 4 Տէր Դու իմա ես յարածամ եւ ես ալ Գուկդ եմ
 անարժան,
 Ալ ընդ Քեզ կ'ուզեմ մընալ յոր անրածան.
 Յաւ, հաճոյք, հառաչ, ժըպիտ ինչ որ ըլլայ հոս իմ
 Գալ կ'ուզեմ ու միանալ ես այն խումբին: [ըսմին
 Գալ կ'ուզեմ ու միանալ ես,
 Գալ կ'ուզեմ ու միանալ ես այն խումբին.

493 ԴԱՌՆՈՒԿԻՆ ՀԱՐՍՆԻՔԸ Յայտ. 19, 7.

1. Պիտի երթանք քիչ մը լերջ փառաց երկիրը,
Եւ հոն պիտի տեսնենք Տէր Յիսուս Քրիստոսը,
Հոս կը տեսնենք հայելիին մէջէն զինքը,
Հոն դէմ առ դէմ պիտի տեսնենք զօրաց Տէրը:
2. Ուրախացէ՛ք ու ցնծացէ՛ք ո՛վ արգարներ,
Զի մօտեցաւ օրը որ փող պիտի հընչէր.
Այն ժամանակ պիտի հատնէ ցաւ ու լիշտեր.
Դէպ ի ամպը պիտի քաշուինք բոլոր սուրբեր:
3. Պատրաստ կզէք ըսպանցէք զուք ով սուրբեր
Եւ իւղ առէք ու շըտկեցէք ձեր լապտերներ.
Որ փեսան գայ յանկարծ կանչէ չըլլաք յիմար
Եւ զուրս մընաք փառաց հարսանիքէն կոյսեր:
4. Ո՛վ Տէր Աստուած յիշէ տրկար ծառաներդ,
Ըլլանք յաղթող սատանայի ու աշխարհին.
Շուտ պայծառ դէմքով դանք Գեղ զիմաւորելու
Եւ յաւիտեան հարսանիքիդ մէջ ցընծալու:

494 (277) ԴԷՄ ԱՌ ԴԷՄ Ա Կորն. 13, 12.

Face to face with Christ my saviour. Alex. 30

1. Դէմ առ դէմ Փրկիչ Տէրոջս հետ,
Դէմ առ դէմ ի՞նչ փառք անբաւ.
Երբ հիացումով տեսնեմ զԱյն,
Որ սիրով իմ տեղս մեռաւ:

Դէմ առ դէմ պիտի տեսնեմ զԱյն,
Ամպերէն հեռու շատ վեր:

Դէմ առ դէմ պիտի տեսնեմ զԱյն,
Իր փառաց մէջ զեր ի վեր:

2. Այժմ ընդ աղօտ կը տեսնեմ զԱյն,
Մութ քող մը մեզ կը բաժնէ,
Բայց կուգայ շուտ այն օրհնեալ օր,
Երբ պիտի Իր փառքն յայտնէ:
Դէմ առ դէմ պիտի տեսնեմ զԱյն . . .

3. Ո՛հ, ի՞նչ ցնծում Անոր առջին,
Երբ ցաւ ու վիշտ չքանան.
Ծուռ ճամբաներն ալ շտկուին.
Մութ բաներն պարզ լոյս րլլան:
Դէմ առ դէմ պիտի տեսնեմ զԱյն . . .

4. Դէմ առ դէմ պիտի ճանչնամ զԱյն,
Դէմ առ դէմ օրհնեալ վայրկեան.
Դէմ առ դէմ բնակիմ Անոր հետ,
Որ սիրեց զիս յաւիտեան:
Դէմ առ դէմ պիտի տեսնեմ զԱյն . . .

495 ՊԻՏԻ ԶԸԼԼԱՅ ՄՈՒԹ ԶՈՐ Ստղմ. 23, 4

There'll be no dark valley. S. S. S. 1026

1. Պիտի չըլլայ մութ ձոր երբ Յիսուս գայ,
Պիտի չըլլայ մութ ձոր երբ Յիսուս գայ,
Պիտի չըլլայ մութ ձոր երբ Յիսուս գայ,
Ժողովելու սիրելիներն:
Ժողովելու սիրելիներն,
Ժողովելու գանոնք վեր տուն.
Պիտի չըլլայ մութ ձոր երբ Յիսուս գայ,
Ժողովելու զանոնք վեր տուն:

2. Պիտի չլլայ ցաւեր երբ Յիսուս գայ,
 Պիտի չլլայ վիշտեր երբ Յիսուս գայ,
 Միշտ փառաւոր օրեր երբ Յիսուս գայ,
 Ժողովելու սիրելիներն,
 Ժողովելու սիրելիներն . . .
3. Պիտի չլլայ արցունք երբ Յիսուս գայ,
 Պիտի չլլայ արցունք երբ Յիսուս գայ,
 Պիտ' ըլլայ առատ հունձք երբ Յիսուս գայ,
 Ժողովելու սիրելիներն,
 Ժողովելու սիրելիներն . . .
4. Պիտ' ըլլայ ցնծութիւն երբ Յիսուս գայ,
 Պիտ' ըլլայ ցնծութիւն երբ Յիսուս գայ,
 Նաև ուրախութիւն երբ Յիսուս գայ,
 Ժողովելու սիրելիներն,
 Ժողովելու սիրելիներն . . .

496 ԵԿՈՒՐ ՏԷՐ ՅԻՍՈՒՍ Յայտ. 22 2Ճ.

1. Տեսքիդ կարօտովն ներսէս կը վառիմ,
 Ալ հերիք ով Տէր ամպերուն յառիմ,
 Դժնեայ դիւային աշխարհէն անլոյս,
 Ալ ազաաէ զիս, եկուր Տէր Յիսուս.
2. Զայնիդ, կարօտովն կ'ըսպառիմ ով Տէր,
 Ականջըս տարին աշխարհիս ձայներ,
 Ազդարարութեան ձայնովդ արտորա,
 Սիրտըս իր խորէն արձագանգ թող տայ:
3. Փառքիդ յայտնութեան տոնչաւք մ'ունիմ ես,
 Եկուր խորտակէ փառքեր սին ու վէժ,
 Ով մորթուած Գառնուկ, ուժովդ առիւծի,
 Երեւցիր, հոգիս ալ հերիք հիւծի:

4. Վարձքին պատուական, անաչառ՝ արդար,
«Ապրիտ» ի ձայնին սուրբերն դարէ դար.
Կ'ըստասեն, ով Տէր խոստմանդ մեծայայտ,
Խոստումդ կատարէ, եկուր Տէր Յիսուս:
5. Գառին հարսնիքին լաթեր բեհեզէ,
Սուրբ ձեռքովդ հագնել ո՞հ, իմ փափաքս է.
Գառին հարսնիքին ես ալ նախընտիր,
Մասնակցիլ կ'ուզեմ խումբին հետ բնտիր:
6. Խորտակուած խաչիդ բեկորներէն բիւր,
Գահիդ պատուանդան շինեցիր բարբիտ,
Աթոռիդ առջև օղային ճերմակ,
Երկրպագեմ քեզ հոգւովքս համակ:
7. Ո՞հ, հոն օղին մէջ երկրորդ պալատեան,
Քեզմով Քեզի հետ ապրիմ յաւիտեան.
Քեզի կ'ըստասեն սուրբերդ ամէն,
Եկուր, Տէր Յիսուս շուտ եկուր, Ամէն:

497

Պ Ա Տ Ր Ա Ս Տ ՈՒ Է Ամուս. 4. 12

ՏԼ. II. 11

1. Մեղաւոր, շնորհաց պատգամն լըսէ՝
Պատրաստէ՛ Տէրն կ'ուզայ,
«Ահա ես շուտով կուգամ» կ'ըսէ,
Պատրաստէ՛, Տէրն կուզայ,
Պատրաստէ՛, պատրաստէ,
Պատրաստէ՛ Տէրն կուզայ,
Պատրաստէ՛ պատրաստէ՛
Պատրաստէ՛, Տէրն կուզայ:

2. «Մեղաւոր, մեռնիլդ կ'ուղեմ միթէ»,
 Կ'ըսէ Տէրն, որ կուգայ.
 Դարձի եկո՛ւր սո՛հ. ապաշխարէ՛,
 Պատրաստէ՛, Տէրն կուգայ.
 Պատրաստէ՛, պատրաստէ՛ . . .

3. Ահռե՛լի վտանգ կայ մէջ յապաղման,
 Պատրաստէ՛, Տէրն կուգայ.
 «Յիմար կոյսեր» տակաւին կ'ողբան,
 Պատրաստէ՛, Տէրն կուգայ.
 Պատրաստէ՛, պատրաստէ՛ . . .

4. Զայս աղերսանքն իր պապատաղին,
 Մի՛ր մերժէր, Տէրն կուգայ.
 Դուցէ պատկհ ժամդ այս է վերջին,
 Պատրաստէ՛, Տէրն կուգայ.
 Պատրաստէ՛, պատրաստէ՛ . . .

5. Այս մեղմ հրաւերն ալ պիտ' չի լըսես,
 Իր փառքովն երբ Տէրն գայ.
 Փրկիչ մը չէ ալ, գթած ու հեղ,
 Իր փառքովն երբ Տէրն գայ.
 Պատրաստէ՛, պատրաստէ՛ . . .

498 (261) ԱԶԱ ՓԵՍՍՆ ԿՈՒԳԱՅ Մատթ. 23.6:

We shall hear a voice, an immortal voice. P. H. 162

1. Լսեցէք ահա ձայն մը սուր կուգայ,
 Յիսուս փեսան շուտ կուգայ.
 Կամ կէս գիշերուան խաւար պահերուն,
 Եւ կամ առտուան լոյս հաւախօսին.

Լսեցէք հիմա նոյն ձայնը կուգայ :

Ահա փեսան շուտ կուգայ :

Պատրաստ եղէք ո՞հ փեսան շուտ կուգայ :

Պատրաստ եղէք, ո՞հ փեսան շուտ կուգայ :

Կամ իրիկուն. կամ վաղ առտուն,

Դիշեր ատեն կեցէք արթուն :

Պատրաստ եղէք, պատրաստ եղէք :

Պատրաստ եղէք, ահա փեսան կուգայ :

2. Տասր կոյսերը շուտ պատրաստ կ'ըլլան :

Դիմաւորելու փեսան :

Բայց երբոր փեսան քիչ մը կ'ուշանայ :

Լմէնն ալ խորունկ քունի մէջ կ'իյնայ :

Յանկարծ ահագոյ մեծ ձայն մը կուգայ :

Շուտ ելէք, փեսան կուգայ :

Պատրաստ եղէք, ոհ . . .

3. Կապտերներն վառած կոյսերն իմաստուն :

Կը մտնեն շուտ հարսնետուն :

Ուկայն յիմարներն երբոր կ'ուշանան :

Դռներն կը գոցուին, ո՞հ, ինչ տեսարան :

Ի դուր աղաղակ, ի դուր աղաչանք :

«Ձէք կրնար մտնել երբէք» :

Պատրաստ եղէք, ոհ . . .

499 ՉԱՐՄԱՆԱՂԻ ԱԽՈՒ ԶԱՅՆ Մատ. 25, 6.

1. Չարմանալի պիտ' ձայն լըսենք :

«Ահա փեսան կուգայ» :

Երբ կոյսերը կէս գիշերին :

Փակ աչքերով կը քընանան :

Չարմանալի պիտ' ձայն լըսենք :

«Ահա փեսան կուգայ» :

Պատրաստ կեցէ՛ք. պատրաստ,
 Պատրաստ, պատրաստ,
 Պատրաստ. զի փեսան կուգայ.
 Կամ իրիկուն, կամ գիշերին.
 Հաւախօսին. կամ թէ անտուն,
 Պատրաստ կեցէ՛ք. զի փեսան կուգայ.

2. Այն սրտաչարժ պիտ' ձայն լըսենք,
 «Ահա փեսան կուգայ».
 Իրրի կորուստ երբ թուի կեանք,
 Եւ խաչն ծածկէ մեր վերին թագ.
 Այն սրտաչարժ պիտ' ձայն լըսենք,
 «Ահա փեսան կուգայ».

Պատրաստ կեցէ՛ք, պատրաստ . . .

3. Մենք պիտ' լըսենք այն ձայն հզօր,
 «Ահա փեսան կուգայ».
 Երբ վերջին փողն մեզ աւետէ,
 Թէ փրկութիւն մեզի մօտ է,
 Մենք պիտ' լըսենք այն ձայն հզօր,
 «Ահա փեսան կուգայ».

Պատրաստ կեցէ՛ք, պատրաստ . . .

4. Մենք պիտ' լըսենք ձայն կենդանի,
 «Ահա փեսան կուգայ».
 Երբ ննջողներ գերեզմանէն՝
 Ողջ սուրբերուն հետ վեր ելլեն,
 Մենք պիտ' լըսենք ձայն կենդանի,
 «Ահա փեսան կուգայ».

Պատրաստ կեցէ՛ք, պատրաստ . . .

500 (281) ՂՈՒ ԿՆԱՄ ԹԷ ԼԵՍ ԴԱՍԿ. 13. 24.

1. Մարգարիտ դոներէն պիտ' մանեն,
 Մի առ մի, մի առ մի
 Տէրոջը դէմքը պիտի տեսնեն,
 Ո՛հ արդեօք ո՞վ, դո՞ւ կամ թէ ե՞ս.
 Ոսկի փողոցներն կը պարտախն,
 Կառնուակին պայծառ դէմքն կը դիտեն.
 Անոր փառք ու գովուծիւն կ'երգեն,
 Ո՛հ արդեօք ո՞վ, դո՞ւ կամ թէ ե՞ս.
2. Իրենց խաչերը հոն կը ձգեն,
 Մի առ մի, մի առ մի.
 Փառաց թագերու կը տիրանան,
 Ո՛հ արդեօք ո՞վ, դո՞ւ կամ թէ ե՞ս.
 Երկնային անձին հետ միացողն,
 Զերծ է ամէն վիշտ ու ցաւերէն.
 Երջանիկ Անոր հետ յաւիտեան
 Ո՛հ արդեօք ո՞վ, դո՞ւ կամ թէ ե՞ս.
3. Ո՛հ չատեր դուռը պիտի դարնեն,
 Մի առ մի, մի առ մի.
 Չեմ ճանչնար ձայնը պիտի լըսեն,
 Ո՛հ արդեօք ո՞վ, դո՞ւ կամ թէ ե՞ս.
 Ո՛հ, անոնք ի դուր կ'ազազակեն,
 Զի գոյուած են մարգարիտ դոներն.
 Յայնմամ տրտում, տխուր կը մընան,
 Ո՛հ արդեօք ո՞վ, դո՞ւ կամ թէ ե՞ս.
4. Յայլթու թեան երգը կ'արձագանդեն,
 Մի առ մի, մի առ մի.
 Նուրբերուն հետ միաձայն կ'երգեն,
 Ո՛հ արդեօք ո՞վ, դո՞ւ կամ թէ ե՞ս.
 Պիտի տեսնենք այն սուրբ երկրին մէջ,
 Զատուածները այս աշխարհիս մէջ.
 Երջանիկ Տէրոջն հետ յաւիտեան,
 Ո՛հ արդեօք ո՞վ, դո՞ւ կամ թէ ե՞ս.

501 (279) ԴՈՒՆ ՊԱՏՐԱՍ ԵՄ Մատթ. 25 10.

There's a great day coming. S. V. 93

1. Ահա կուգայ, կուգայ մեծ օրը կուգայ,
Եւ մեզ կը մօտենայ օրէ օր.
Երբ սուրբերն ու մեղաւորներն,
Բաժնուին աջ ու ձախ,
Դու պատրա՞ստ ես գալիք մեծ օրուան.
Դու պատրա՞ստ ես, դու պատրաստ ես,
Դու պատրա՞ստ ես, մեծ դատաստանին.
2. Այն պայծառ օրն կուգայ պայծառ օրն կուգայ,
Եւ մեզ կը մօտենայ օրէ օր.
Բայց այն օր լոյս պիտի փայլի,
Միայն փրկեալներուն վրայ.
Դու պատրա՞ստ ես, գալիք մեծ օրուան.
Դու պատրա՞ստ ես . . .
3. Այն տխուր օրն կուգայ, տխուր օրն կուգայ,
Եւ մեզ կը մօտենայ օրէ օր.
Երբ մեր Տէրն արձակէ վճիռ,
Մէկդի ձեզ չեմ ճանչնար,
Դու պատրա՞ստ ես գալիք մեծ օրուան.
Դու պատրա՞ստ ես . . .

502 ՅԻՍՈՒՍ ԿՈՒԴԱՅ Յայն. 22, 20.

Lo ! Jesus comes.

(Մարթ. 107)

1. Ահա կուգայ, Յիսուս Քրիստոս խոստացեալ Տէ-
րն փառացի.
Յոյսն դարերու զոր մարգարէք վաղուց էին
մեզ պատմած.

կուգայ կապեալն արձակելու, կուգայ ռիս կըսիւ
 Վերջացնելու.
 կուգայ մեծ փառքով իշխելու ՅԻՍՈՒՍ կՈՒԳԱՅ .
 Բւստի երգեն խումբն փրկելոյ Ալէյուհա .
 եւ օրհնեն զԱՅՆ՝ որ պաշտեն հրեշտակք երկնից
 Ողջո՞յն, ողջոյն ով զու իշխանի խաղաղութեան
 Զի պիտ' տիրես յաւիտեանս յաւիտեանից
 Ողջո՞յն, ողջոյն ով զու իշխանի խաղաղութեան
 Զի պիտ' տիրես յաւիտեանս .

2. Եկեղեցի՛, զարթի՛ր, կանգնէ՛, մօտ է մեզ օրն
 յաղթութեան,
 նոր իւղ առէք ձեր լապտերին, որ զիմաւորէք
 փեռան,
 նա խրատէ մեզ ըլլալ պատրաստ, որ մասնակ-
 ցինք իրեն փառաց,
 եւ հռչակինք օրն մօտեցած, ՅԻՍՈՒՍ կՈՒԳԱՅ .
 Ուսի երգեն խումբն վերելոյ . . .

3. Արքայութիւնդ շուտով թող գայ Գուկամբդ
 ըլլայ ամէն տեղ,
 Ոյս փառաւոր օրուան փրկեալք, միշտ կ'սպա-
 սեն անհամբեր .
 Իր Դաւստեան նըշաններն շատնան, առ'ւօտն
 կ'աւետէ պահապանն .
 «Ամէն» մեր սիրտն տայ պատասխան, ՅԻՍՈՒՍ
 Ուսի երգեն խումբն վերելոյ . . . [կՈՒԳԱՅ

1. Տառնս երկինքն է ես չուտ հոն կ'ելլեմ,
ճամբան երկար է մինչ երուսաղեմ.
Հոն խաղաղութեամբ պիտի հանդչիմ ես,
Սրբոյ հետ ցնծմամբ երգեմ սէրն Փրկչիս.
Երկնից մէջ ո՞հ հոն տեղ կայ,
Շուտ եկուր, մի՛ ուշանար,
Սեպիին մութ ճամբան ձրգէ,
Տէրօջ քաղցր ձայն քեզ կը կանչէ:
2. Որչափ չուտ անցած է մեր ժամանակ,
Քիչ վերջ պիտ' հասնինք մենք Տէրօջ քաղաք
Այլ վերջացած է կռիւի ժամանակ,
Յաղթողին պատրաստ է կենաց պսակ.
Յոգնած պանտուխտ վեր նայէ՛,
Հանգիստը քեզ կ'ըստասէ:
Յիսուս իւր հարսն պիտ' կանչէ,
Որ Իրեն հետ Հօրն փառքն վայելէ:
3. Այն խաղաղ եղերք չի փչեր ցուրտ հով,
Հոն Դառնուկին երգ կ'երգեն նոր լեզուով,
Այն սուրբ երկրին մէջ լացն է վերջացած,
Հոն է լոյս անշէջ մահն է խափանուած.
Դուռն որ շատ անգամ կուլաս,
Հայրենիքն կը կարօտնաս.
Դուռն ալ երբոր արթննաս,
Տէրօջ զէմքէն պիտի կշտանաս:

504 (293) Ո Ո Ի Ր Բ Ե Ր Կ Ի Ր Երբ. 11. 16.

There is a land mine eye hath seen. S. S. S. 181

1. Կայ երկիր մը սուրբ և փայլուն,
կրնանք հաւատքով զայն տեսնել.
Պալատները են շողշողուն,
Սուրբեր միայն կրնան փայլել.
Ս'ի սուրբ երկիր, իմ սէր և յոյս,
Բնակարաններդ պատած է լոյս.
Իսկապէս կ'երթո՞ւ տեսնենք պիտի,
Երբ լոյս ծագի, խաւար մերձի:
- 2 Երկիր մը որ սրբավայր է.
Զիկայ հոն մեղք զաւ ու զիշտեր.
Որեւէլայ անբաժան տեղ է,
Կը միանան բաժնւոյներ.
Ով սուրբ երկիր . . .
3. Երկինքդ է միշտ լուսապայծառ,
Առանց արեւի և լուսնի.
Որնակիչներդ են ուղղափառ.
Կ'ապրին Տէրոջ հետ մէջ Դրախտի.
Ով սուրբ երկիր . . .

505 Տ Ո Ի Ն Մ Ը Ո Ի Ն Ի Մ Բ Կարճ. 5. 1.

I have a home. Sl. H. 359

1. Տուն մը ունիմ լոյսէ ձուլուած,
ձառագայթէ բիւրեղացած,
Ուր, երբ անցնիմ ցուրտ Յորդանան,
Ապրիմ Տէրոջ հետ յաւիտեան:

Այս փորձանքի կեանքն երբ անցնի,
 Զոյգ լոյս թեկը, պիտ' տան ինձի:
 Երգն յաղթական, չըթանցս վրան,
 Պիտ' սաւառնիմ զէսլ այն տուն իմ:

2. Տուն մը ունիմ սուրբ, զահուն մերձ,
 Արտասուքէ ե. վիշտէ զերձ:
 Հոն ծովն չ'ունի ալիքն եր խիստ,
 Սուրբ յաղթականք կ'ապրին հանգիստ:
 Սյս փորձանքի կեանքն երբ անցնի . . .

3. Տուն մը ունիմ աստղերէն վեր,
 Թագաւորէ հոն յաւէտ սէր:
 Տուն մը, ուր մութ չըկայ երբէք,
 Գառնուկ արեւն կ'ընէ ցորեկ
 Այս փորձանքի կեանքն երբ անցնի . . .

506

Ե Ր Կ Ի Ր Ս Ի Ր Ո Ւ Ն

Յայտ. 21, 1:

Beautiful. Sl. H. 3:1

1. Գեղեցիկ յերկինս վերն, զգեցնող զգեստներն,
 Գեղեցիկ տուն պայծառ, ուր չիք երբէք խաւար,
 Գեղեցիկ թագ փայլուն, աստղերով նկարուն,
 Գեղեցիկ բնազաւատ, Տէր, մեզ հոն տար:
 Զգեստ փայլուն, երկիր սիրուն,
 Հոյակապ տուն, ոսկեձեղուն:
 Գեղեցիկ թագ, գողտրիկ նուագ,
 Պալատներ լուսավառ, Տէր մեզ հոն տար:

2. Գեղեցիկ այս խորհուրդ մենք իր Սր. Ժողովուրդ,
 Փրկչին հետ յաւիտեան, պիտ' ապրինք անբաժան

Հողէ, զիշատ ազատ. իւր ժառանգն հարազատ,
կ'ապերսինք անդազար. Տէր մեզ հոն տար:

Զգես փայլուն երկիր սիրուն . . .

3. Գեղեցիկ ամէն ինչ, կը շողայ զերթ լոյս ջինջ,
եւլեն'ք այս ձորէն խոր. հոն են մեր գանձ բոլոր
Յարուցեալ Տէրն զկայ. հոն երբէք մահ չըկայ,
Պիտ' ապրինք դարէ դար. Տէր մեզ հոն տար:

Զգես փայլուն երկիր սիրուն . . .

507 Վ Ե Ր Ն Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Բայք. 21, 19:

1. Թողէք զիս, թողէք զիս,
Որ երթամ իմ զեհ Փրկչիս.
Ո՛հ, կ'այրիմ իւր կարոտովր,
կը բաղձամ շուտ ելլել քովը.
Ոսկեղէն գահին առաջ:

2. Քաղցր լոյս, քաղցր լոյս,
իմ հոգւոյս, կեանք եւ իմ լոյս.
Երբ սրբոյ ու հրեշտակաց հեա,
Բընակիմ պիտ' ես ալ յաւէտ.
Եւ քու սուրբ երեսդ տեսնեմ:

3. Ի՞նչ լսեմ, ի՞նչ լսեմ.
Այն երգը զոր կը լսեմ.
Ո՛հ, թէ թռչնոյ թևեր տրուէր,
Որ թռչէի աշխարհէս զեր,
Դէպ Սիօնի բարձունքը:

4. Սիրուն զրախտ, սիրուն զրախտ,
Ի՞նչ անոյշ են պտուղներդ.
Երբոր այդ քու ծառոյ տակ գամ,
Երազողի պէս պիտ' ըլլամ.
Ո՛հ, Տէր հասցուր զիս Դըրախտ:

5. Երնեկ օր, երնեկ օր,
Երբ մտնեմ այն քաղաք նոր,
Երուսաղէմ ոսկի փողոց,
Բընակութիւն յարմար սրբոց,
Մայրաքաղաքն Սրբային:

6. Օրհնեալ յոյս, օրհնեալ յոյս,
Ի՞նչ մեծ շնորհք եղկելոյս,
Փրկիչս պիտ' տեսնեմ զէմ առ զէմ,
Ու յաւիտեան Զինք վայլեմ,
Ի քաղաքն ոսկեղէն:

508 Ա Ե Ր Ի Ն Ե Ր Ո Ւ Ս Ս Ղ Է Մ Բայք. 21, 4.

1. Մայր քաղցր վերին երուսաղէմ,
Ե՞րբ պիտի գամ առ քեզ,
Երբ բերկրութեամբ լմնցնեմ,
Վըշտաց այս ասպարէզ:
2. Նաւահանգիստ երանելի,
Խաղաղ և անվրտանգ,
Քու մէջդ պիտի չը դըտնուի,
Հոգ, ջաւ կամ տառապանք:
3. Մութ ամպ բընաւ քեզ չըպատեր,
Զըկայ քու մէջըդ մէգ,
Զըկայ քու մէջդ աղօտ գիշեր,
Աստուած քեզ լոյս կուտայ:
4. Պատերդ գոհար են չողջողուն,
Բատակդ մաքուր ոսկի,
Դռներդ մարգարիտներ փայլուն,
Ո՛հ, թէ հոն ըլլայի:

509

ՔԱՌԱԿՈՒՍԻ ՔԱՂԱՔՆ

Յայտ. 21, 16.

The city Foursquare. A. C. H. 34

1. Երկնային փառաց երկիրն,
Կայ քաղաքն քառակուսի.
Որ երբէք պիտ' չանհետի,
Եւ չկայ գիշեր հոն.
Աստուած պիտ' արցունք սրբէ,
Բոլոր լացող աչքերէ,
Զի ոչ մահ, ջաւ, վիշտ կայ հոն,
Եւ չկայ գիշեր հոն.
2. Բոլոր դռներն մարգարիտ են,
Քառակուսի քաղաքին.
Փողոցներն զուտ ոսկի են,
Եւ չկայ գիշեր հոն.
Աստուած պիտ' արցունք սրբէ . . .
3. Դռներն ոչ երբէք գոցուին,
Քառակուսի քաղաքին.
Կը յորդէ կենաց գետն հոն,
Եւ չկայ գիշեր հոն.
Աստուած պիտ' արցունք սրբէ . . .
4. Պէտք չկայ արեւ ու լուսնի,
Քաղաքին մէջ քառակուսի.
Զի Դառնուկն է լոյս անչէջ,
Եւ չկայ գիշեր հոն.
Աստուած պիտ' սրբէ արցունք . . .

510

Ո Հ Տ Ե Ն Չ Ա Մ

Փիլ. 1, 23.

1. Երկնային հանդիստ, սէր, խնդում, պսակ,
Հաճոյքներ ըստ մատենակ.

Ողորդ Հոգւոց համար յերկինս պատրաստած,
Կ'ըստպատէ մեր Հայրն Աստուած:

Ո՛հ, տենչամ առնուլ թեւեր,

Ուանամ յերկինս ի վեր.

Անդ երգել փրկչիս անուն,

Եւ իւր սէրն անհուն.

Հայրենիք. հայրենիք,

Վայր սրբոց յաւէտ երջանիկ:

2. Հոն ամէնն է սէր խնդուծիւն պսակ.

Հրեշտակներն ալ մեզ ընկեր.

Ողորդ արեամբ գնուած թաղեր պատուական,

Մեզ համար հոն պատրաստ կան:

Ո՛հ, տենչամ առնուլ թեւեր . . .

3. Մեղք ու մահ, վիշտ ու արցունք դառն աղի,
Ահր մահուան մանգաղի.

Վերին հայրենեաց պալատներուն մէջ,

Յաւիտեան գտնին ալ վերջ:

Ո՛հ, տենչամ առնուլ թեւեր . . .

4. Կեանքս է հոն անմահ, չիք արցունք դիչեր,
Ծառ, ծաղիկ չունին փուշեր.

Զի փրկիչս է հոն. կեանքս լոյս եւ արեւ,

Անմահ դրախտ մ'արդարեւ:

Ո՛հ, տենչամ առնուլ թեւեր . . .

511 Մ Օ Տ Ե Մ Ա Յ Ս Օ Ր Յայր. 21, 4:

«In the land of fade-less day.» S. S. B. 170

1. Հայրենի տանս երկնաւոր,

Մօտ եւմ շատ մօտ այսօր.

Վերին տան միշտ լոյս ու նոր,

Մօտ եւմ շատ մօտ այսօր

Մեղք ու վէրք ու վիշտ ու ցաւ,
 Հոն պիտի չըլլան բընաւ,
 Գաւառին սուրբ ու անդորր,
 Մօտ եմ շատ մօտ այսօր:

2. Փրկչիս զէմքին լուսաւոր,
 Մօտ եմ շատ մօտ այսօր:
 Պրօսկին փայլուն աղուոր,
 Մօտ եմ շատ մօտ այսօր:
 Մեծ աթոռն շրջապատած,
 Պիտ' օրհնենք փառաց Աստուած՝
 Թրհնութեանց սուրբ նորանոր,
 Մօտ եմ շատ մօտ այսօր:

3. Ձիս սիրող ու պահող Հօր,
 Մօտ եմ շատ մօտ այսօր:
 Պաշտպանիս զթած հըղօր,
 Մօտ եմ շատ մօտ այսօր:
 Բազկաց մէջ հանգստաւէտ,
 Պիտ' հանգչիմ ես առ յաւէտ:
 Սուրբ գործերու փառաւոր,
 Մօտ եմ շատ մօտ այսօր:

512 (321) Ե Ր Բ Խ Մ Բ Ո Ի Ի Ն Ք Երու. 71, 11.

1. Երգէ՛ փրկչին սէրն հրաշալի,
 Երգէ՛ շնորհքը, գութն առ լի,
 Քանզի անհուն իր շնորհքով,
 Մեղ տեղ պատրաստեց իր քով,
 Երբ ամէնքս խմբուինք յերկինս,
 Ո՛հ, ի՛նչ բերկրալի օր պիտ' այն ըլլայ:
 Երբ տեսնենք Յիսուսը,
 Հողիս կ'երգէ և կը ցընծայ:

2. Մինչ թափառինք պանդուխտ աշուղէս,
 Ամպեր մթազնեն մեր երկին.
 Բայց վախճանը ճամբուն տեանես,
 Մէզն ու մըշուչ կ'անհետին:

Երբ ամէնքս խմբուինք

3. Արդ, օ՛ն, հաւատքով և յոյսով,
 Ապրինք գործենք բոլոր օր.
 Իր մէկ ժպիտն զառն վըշտի մէջ,
 Կը փոխէ կեանքը բոլոր:

Երբ ամէնքս խմբուինք

4. Յառա՛ջ, օն, դէպ ի մրրցանակ,
 Ահա չքնաղ դէմքն կ'երևնայ.
 Երկնից զո՛րերն բաց, անաղակ,
 Ասկի փողոցներ ահա:

Երբ ամէնքս խմբուինք

513 Ե Ք Ե Ղ, Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Բայք. 21, 27.

1. Վերն շքերդ հայրենիք բարեկամներ,
 Հաւաքուինք հոն պիտ' բոլորս ալ.
 Ուր ամէն ինչ փայլուն, չիք մուխ ամպեր,
 Յաւուց, վըշտաց, շուքերն մոռալ.
 Հոն հաւաքուինք, հետ սիրելիաց,
 Որք մահով դատուեցան մեզմէ ի բաց.
 Ուր բաժանման մանգաղն հատու,
 Չի տար երբէք վախ սըրտերու:
2. Վերն այն մեծ սուրբ քաղաք չ'իշխեր զիշեր,
 Ո՛հ ե՞րբ պիտի հոն միանանք.
 Երբ անցնին պիտի շուտ այս սև օրեր,
 Յաւերէն վերջ վայլենք բերկրանք:
 Հոն հաւաքուինք հետ սիրելիաց

3. Վերն այն վայրն ուր միայն փրկեալ հոգիք,
Էւ արժանի ժառանգորդներ.
Այ բաժանման բրնաւ վախ կասկած չիք,
Զեղ համար ով սրգաւորներ,
Հոն հաւաքուիմք
4. Ով դուք որ խոցուած էք վիշտի նետով,
Սրբեցէք արդ ձեր արցունքներ.
Անշուշտ քիչ վերջ բոլոր սիրելեաց քով,
Ապրինք անվերջ կեանք մ'անսառէր,
Հոն հաւաքուիմք

514 (309) ՊԵՏԻ ՄԻԱՆԱՆԻ ԱԹԵԱ, 4, 17.

Soon will come the setting sun. S. S. S. 339

1. Շուտ կեանքի արևն մարի,
Զեռքեր զործէն պիտ' դադրի,
Տըկար սիրտն ալ դարնելէն կայնի,
Բայց վերջին փողն երբ հնչէ,
Պիտ' ելլենք վեր ամպերէ,
Միանանք պիտ' շուտ մէջ Սիրնի,
Միանանք հոն պիտի,
Ո՛հ, միանանք հոն պիտի,
Յիսուսի դէմքին փոխուած,
Միանանք մենք հոն պիտի,
Միանանք հոն պիտի,
Ո՛հ, միանանք հոն պիտի,
Պիտ' վայելենք մեր Տէրը.
2. Մութ խաւարն օրատած չորս դին,
Հովք սաստկաշունչ կը փրչեն.

Վախս կուտայ որոտումք մեր սրաին,
 Բայց Տէրը պիտ' հայթայթէ.
 Համբայ մը, անհուն մըտքէ,
 Սիրանաք պիտ' մէջ սուրբ երկինքին,
 Սիրանանք հոն պիտի . . .

3. Բաժանման ցաւերն եւ լաց,
 Թափել տայ արցունք աչաց,
 Կարճ կեանք երբ գըտնայ ցաւով վախճան.
 Բայց Տէրը անշուշտ գալով,
 Պիտ' երկինք տանի իր քով,
 Համայն ցաւք եւ վիշտք պիտ' վերջանան,
 Սիրանանք հոն պիտի . . .

515 Հ Ո Ն Տ Ե Ս Ձ Ի Ս Բայք. 22. 1—2.

On the happy golden shore. S. S. S. 437

1. Երջանիկ ափանց վըրայ,
 Բաժանման կսկիծ չկայ.
 Երբ կենաց լուծն հոս կ'իյնայ,
 Հոն տես դիս.
 Ուր տխուր դիչեր շիշխեր,
 Այլ ցորեկն ու վարդ շողեր.
 Տուն հանդիլ կ'երթամ ես վերն,
 Հոն տես դիս.
 Հոն տես դիս, հոն տես դիս,
 Ուր կենաց ծառն միշտ կը ծաղկի.
 Հոն տես դիս.
 Կ'անհետին վշտերն կեանքի,
 Հոն ոսկի ափանց վըրայ.
 Բաժանման կսկիծ չկայ,
 Հոն տես դիս.

2. Որն են հոս ոսկի յոյսեր,
 Կը լուծուին սրտեր ու սէր.
 Վերն չկան հոգեր յոյզեր,
 Հոն տես դիս.
 Գետին քով փայլուն պայծառ,
 Քաղքին մէջ բերկրապատար.
 Ուր հաւատքն հասնի կատար,
 Հոն տես դիս.
 Հոն սես զիս, հոն սես զիս . . .

3. Քընարներ հրեշտակային,
 Կ'օրհներգն են անդադրին.
 Պալատին մէջն Սրբային,
 Հոն տես դիս.
 Ուր սրտեր հաշտ անխրոով,
 Կը ձուլուին անրիժ սիրով.
 Եւ կ'ապրին յաւէրժ Հօրն քով.
 Հոն տես դիս.
 Հոն սես զիս, հոն սես զիս . . .

516

Պ Ի Տ Ի Մ Ի Ա Ն Ա Ն Բ Բայժ. 22 16.

1. Միանանք պիտ' գետէն անդին,
 Ուր այլիս ալիք դադրին,
 Ուր ամէն բան խիստ փայլուն է,
 Եւ ուր ցաւ չպիտի մտնէ.
 Միանանք, միանանք,
 Միանանք, պիտ' գետէն անդին.
 Ուր երբէք չկան տառապանք,
 Ուր այլիս ալիք դադրին.

2. Միանա՞նք պիտ' այն վայրուն վայր,
Ուր չկան փոթորկահար,
Ուր կեանքի և երկնի պերճանք,
Արդեօք հոն պիտ' միանա՞նք,
Միանանք, միանանք . . .
3. Միանա՞նք պիտ' յայն սուրբ քաղաք,
Ուր վայրի վեհ աշտարակ,
Ուր պատերն են բոլոր դռնար,
Գործ Տէրոջ մատանց ճարտար,
Միանանք, միանանք . . .
4. Միանա՞նք պիտ' քոյն Անհունին,
Ուր անուշ երգեր կ'երգուին,
Ո՛հ, արդեօք սրբոց խմբերդին,
Մեր ձայներն պիտ' մասնակցին,
Միանանք, միանանք . . .
5. Միանա՞նք պիտ' այն սիւեղեաց,
Որոնք մեր զրկէն ի բաց,
Խլուեցան, ո՛հ, մահուամբ դժխեմ,
Եւ տեսնենք հոն դէմ առ դէմ,
Միանանք, միանանք . . .
6. Միանա՞նք պիտի մեր փրկչին,
Հեռի երկրէն խաւարչտին,
Եւ արդեօք իւր մեծ շնորհքով,
Պիտ' նստի՞նք հոն դէմ առ դէմ,
Միանանք, միանանք . . .

517 Ո Հ Ի Ն Ջ Մ Ե Մ Փ Ա Ռ Ք Տիւ. 2, 13.

1. Շուտ մեր Տէրն յերկնուստ պիտի երևնայ,
Այս խորհուրդն սրտիս ի՞նչ ցնծում կուտայ,
Ի մի վայրկեան պիտ' փոխուին ամէն բան,
Այս յոյսն ուրախ է մեր ճամբուն վախճանն.

Ո՛հ, ի՞նչ մեծ փառք,
 Ո՛հ, ի՞նչ մեծ փառք,
 Երբ ես տեսնեմ իր լուսափայլ զէմքն,
 Ո՛հ, ի՞նչ մեծ փառք,
 Ո՛հ, ի՞նչ մեծ փառք,
 Երբ ես տեսնեմ իր զէմքն:

2. Ուսանձնութիւնն շուտ փոխուի միութեան,
 Երբ յոտս փրկչին՝ սիրելիք միանան,
 Ինչոպք ելլին յազմոյ գերեզմանին.
 Եւ ողջերն փոխուին փրկչին պատկերին:

Ան իմչ մեծ վառւ . . .

3. Արհն Կարատէ խաւարն զիչերուան,
 Փոթորիկն տեղի տա՝ խաղաղութեան.
 Քաւք, ողբ ու կոծ, և մահ ալ վերջանան,
 Տիրէ ցնծութիւն, օրհնութիւն անմահ:

Ան, իմչ մեծ վառւ . . .

4. Զօրութիւն յաջորդէ տրկարութեան,
 Անկատարն փոխուի կատարելութեան.
 Վիշաք անհետին, տիրէ լոյս անվախճան,
 Հաւատքն ալ փոխուի պայծառ տեսութեան:

Ո՛հ, ի՞նչ մեծ փառք,
 Ո՛հ, ի՞նչ մեծ փառք,
 Երբ ես տեսնեմ իր լուսափայլ զէմքն.
 Ո՛հ, ի՞նչ մեծ փառք,
 Ո՛հ, ի՞նչ մեծ փառք,
 Երբ ես տեսնեմ իր զէմքն:

518 (308) ՓՐԿՈՒԹԵԱՆ ՇՆՈՐՀԲՐ ԵՎԵՍ. 2 Ծ.

1. Թր մը կենաց թելն երբ կտորի,
 Ու զաղբիմ այլեւս երգելէ:

Պիտ' արթըննամ հրճուանքով լի,
Թագաւորին հետ ապրելու:

Պիտի տեսնեմ զԱյն զէմ առ զէմ,
Շնորհքով փրկուեթնքս պատմեմ,
Պիտի տեսնեմ զԱյն զէմ առ զէմ,
Եւ յաւիտեան հետը երգեմ:

2. Որ մը պիտ' թողում այս տուն իմ,
Ու չեմ գիտեր թէ որ տանն.
Ուսկայն գիտեմ փրկիչըս իմ.
Պատրաստած է տեղ մը արդէն:
Պիտի տեսնեմ զԱյն . . .

3. Որ մը պատրաստ պիտ' բազանեմ,
Լապտերըս վառած է արթուն.
Երբ Տէրոջը ձայնը լըսեմ.
Թռչիմ պիտի երկինք փայլուն.
Պիտի տեսնեմ զԱյն . . .

519 (278) Պ Ի Տ Ի Կ Ա Յ Ն Ի Ն Ք Ա թԵՍ. 4, 16.

We shall stand before the king. S. S. S. 966

1. Պիտ' կայնինք Տէրոջն առջին,
Հրեշտակաց հետ միասին.
Եւ երգենք, և երգենք.
Պիտ' քալենք փողոցն ոսկի,
Եւ օրհնենք զինք աւելի.
Յնճումով յնճումով:

Պիտ' կայնինք Տէրոջն առջին,
Հրեշտակաց հետ միասին,
Եւ երգենք «Փառք Արքային»
Ալէլուեա, Ալէլուեա,
Պիտ' կայնինք Տէրոջն առջին:

2. Քերտփրէք երկնից հրճուին,
երբ կայնինք Տէրոջն առջին,
Ի բարձունս, Ի բարձունս.
Հոն ցաւերն պիտ' լերջանան,
երբ երգենք երգն օրհնութեան
Իր անուան, Իր անուան:
Պիս' կայնինք Տէրոջն առջին . . .

3. Յոն ցնձա՛յ ո՛վ իմ հողիս,
Տէրոջն առջե պիտ' կաջնիս,
երբ ինք դայ, երբ ինք դայ.
Իր պատկերին պիտ' փոխուիս,
Ու փառքով ալ միշտ վայլիս,
Ծաւիտեան յաւիտեան.
Պիս' կայնինք Տէրոջն առջին . . .

4. Օ՛հ. ուրիմն դու ծառայէ,
Բանի քեզ նա կեանք շնորհէ,
Վարձք ունիս, վարձք ունիս.
երբ առջին հոն լերն կայնիս,
Պրսակրդ պիտ' ընդունիս,
Անթառամ, անթառամ.
Պիս' կայնինք Տէրոջն առջին . . .

520 ՊԻՏԻ ՃԱՆՉՆԱՆԹ ԶԻՐԱՐ Ա ԿԱՐՆ. 13. 12:

Shall we know each other there ?

1. երբ ելլենք այս աշխարհէն լեր,
Դէպ երկնային պալատներ.
երբ լըսենք երգն հրեշտակներուն՝
Ողջունել մեզ իրենց տուն.

Այն երկրին մէջ պատմութեամբ հին՝
Ուր հոգեր չունի հոգին .

Այն երկրին մէջ սրբոց արդար՝
Պիտ՝ ճանչնա՞նք մենք հոն զիրար .

Պիտ՝ ճանչնա՞նք զիրար հոն .

Պիտ՝ ճանչնա՞նք մենք հոն զիրար .

2. Երբ հանդիպին մեզ սուրբերն զերն՝
Նաև մեր սիրելիներն .

Արդեօք զիրար պիտ՝ ճանչնա՞նք մենք ,
Երբ զանոնք հոն ողջունենք .

Հոս տեղ մարդու ձեւ կրբէին ,

Հոն ի՞նչպէս պիտ՝ երեւին .

Պիտ՝ սեղմե՞նք զանոնք սրբոի վրայ ,

Սիրելիք հոն գրանել կա՞յ .

Պիտ՝ նաչնամք, զիրար նոն

3. Այս քաղցր խորհուրդն ինձ ուժ կուտայ ,
Որոտս ճնշուած կը թեթեւնայ .

Թէ զերն պիտ՝ տեսնեմ ես իմ Տէրս ,

Պիտ՝ գրանեմ սիրելիներս .

Մեր սիրելիք շատոնց մեռած ,

Սուրբ արեամբ փրկչին փրկուած ,

Ի՞նչ խրրախոյս , ի՞նչ մեծ բերկրանք ,

Հոն պիտի զանոնք ճանչնանք .

Պիտ՝ նանչնամք զիրար նոն

ՍԱՍՆԱԻՈՐ ՊԱՐԱԳԱՆԵՐ

521 Ն Ո Ր Տ Ա Ր Ի Սաղմ. 5. 11.

1. Շընորհաւոր այս նոր տարւոյն,
 Շըրջանը դայ բարին,
 Ըլլայ մեզ ամէնուս սիրոյն.
 Յարգանաց հաւաստին,
 Շատ տարիներ թող փոփոխին.
 Մեր սիրտ մընայ նոյնը,
 Յոյս ու հաւատք սէր բնդ նոյին.
 Ըլլայ մեր քակրունքը:

2. Արարչին վերայ յոյս դրնենք,
 Հաւատանք գրթածին.
 Ամէն սրտով զինքը սիրենք,
 Դո՛ւ Ըլլանք տուածին.
 Աշխատինք որ Տէր Աստուծմէ,
 Ընդունինք շընորհներ.
 Զերծ մընալով փորձանքներէ,
 Հոլովենք շատ տարիներ:

3. Ո՛վ Տէր պահէ փորձանքներէ,
 Մեզ բանաւորներըս.
 Ապատէ մեզ չարիքներէ,
 Քեզ յուսացողներըս.
 Ամանորի այս շըրջանին,
 Թող յաջորդեն բարիք.
 Սէր ու հաւատք միաբանին,
 Թող հեռացունեն չարիք:

522

ԱԼԷԼԵՆԵԱ ՓԱՌՌ ՏԷԼՈՋ Ասղլ. 1:8,3.

1. Ո՛հ աստղեր բարձր գովեցէք,
 Քանզի հոս է մեծ իշխան.
 Դովեցէք ինչպէս հովաւներ,
 Բնիւթէնէ մի գաշտին վրան.
 Ո՛հ ինչ մեծ գանձ, ո՛հ ինչ մեծ գանձ,
 Ո՛հ, ինչ մեծ գանձ,
 Մըսրին մէջ մեղի տըրուած.
 Ալէլուեա, փառք Տէրոջ,
 Ալէլուեա, փառք Տէրոջ,
 Ալէլուեա, փառք Տէրոջ.
 Անոր փառք, պատիւ տանք մենք,
2. Ինք մոլորածներուն փրկիչ,
 Կը բուժէ մեղաւորներ,
 Կը շնորհէ, ներում, գութ և սէր,
 Մեղքով բեռնաւորուածներ,
 Փառք տանք Անոր.
 Տիեզերքի փրկիչին,
 Ալէլուեա փառք Տէրոջ . . .
3. Օ՛հ, ցնծութեան երգ երգեցէք,
 Բարձր ձայնով գովեցէք.
 Իր, Սուրբ Աւետարանին փող,
 Հնչէ միշտ մաքուր ձայնով,
 Ցնծումի երգ.
 Թող լսուի երկրէ երկիր,
 Ալէլուեա փառք Տէրոջ . . .
 Անոր փառք, պատիւ տանք մենք,
 Ամէն.

523 Մ Է Զ Ծ Ն Ա Ի Փ Ր Կ Ի Զ Լ Ե Ա Ս Գ Ը

1. Ոսկի ժողերն թող գոռան,
 Թող դարձնուն աղակին համայն,
 Մեզ ձնաւ փրկիչ.
 Տես հոն աստուր հրաշափառ,
 Շողայ յերկնից ի կամար,
 Սէր նրչուէ կենարար.
 Մեզ ձնաւ փրկիչ,
 Ալէլուեա գովենք Տէրն.
 Օրհնարեր է այս այգ ջինջ.
 Ալէլուեա, Ալէլուեա,
 Մեզ ձնաւ փրկիչ.

2. Արծաթ դանդակներ հնչեն,
 Թող արծազանդ տան լեռներն.
 Մեզ ձնաւ փրկիչ.
 Վախ, կասկած, թող անհետին,
 Սրտեր խայտան ցնծագին,
 Այս է պարտութիւն մեղքին,
 Մեզ ձնաւ փրկիչ,
 Ալէլուեա գովենք Տէրն

3. Թող երգէ ամէն բերան,
 Զի այս է մեծ Յորելեան,
 Մեզ ձնաւ փրկիչ.
 Երգեցէք զի տիրէ Տէրն,
 Փրկութեան հոսին գետերն,
 Աւագ գործն է աւարտեր,
 Մեզ ձնաւ փրկիչ,
 Ալէլուեա գովենք Տէրն

526

Փ Ա Ռ Ք Ի Բ Ա Ր Զ Ո Ի Ն Ս Դ, ւկ. 2. 14:

1. Ո՛հ, լսէ լռիկ զաշտին մէջ,
 Մեղեցին հրեշտակաց.
 Որ կ'երգեն ահա ձեզի խաղաղութիւն,
 Յիսուս ծնաւ այսօր,
 Երգեցէք սաղմոս ըսէք.
 Մեօխային Նուրբ Անունին.
 Տիեզերք արձագանդեն,
 Տէր Յիսուս Քրիստոս ծնաւ այսօր.
 Փառք ի բարձունս Աստուծոյ՝ Թագաւորին,
 Ըլէլուհա, Աստուծոյ փառք ի բարձունս.
 Խող երկինք արձագանդեն,
 Երկրի վրայ խաղաղութիւն.
 Եւ մարդոց մէջ տիրէ սէր հաճութիւն,
 Փառք ի բարձունս Տէր Աստուծոյ.
 Եւ երկիր խաղաղութիւն,
 Յնձա երկիր, երկինք,
 Քրիստոս պիտի թագաւորէ.
 Փառք ի բարձունս Տէր Աստուծոյ,
 Եւ երկիր խաղաղութիւն.
 Խաղաղութիւն և մարդոց մէջ հաճութիւն.

527

Զ Ո Ի Ն Ե Ր Մ Ա Հ Ի Ճ Դ, ւկ. 9. 18.

1. Ով սուրբ ծնունդ ողջոյն,
 Քաղցր օր ըտլոր տարւոյն.
 Օր որ ծնաւ Փրկիչ Յիսուս,
 Զուներ փափուկ մահի՛ն.
 Ոչ ալ բարձ գլխին տակ,
 Երբ նոր ծնած Յիսուս մանկան.
 Մոգերն ի տես եկան.

524

Յ Ի Ս Ո Ի Ս Ծ Ն Ա Ի Մատթ. 1. 23.

1. Տեսէք սիրուն ձննդեան ծառ,
Տեսէք լիալի ի՞նչ պայծառ.
Ի՞նչ, ի՞նչ գիշեր հիանալի,
Յիսուս ծընաւ սիրելի:
- 2 Ամէն աչքեր խանդով լառին,
Բեռնաւորուած սա ծառին,
Ամէն սիրտեր արդ թող ջընծան,
Զի ծնաւ Յիսուս Մեսիան:
3. Յիսուս Փրկիչ, Դու ինձ համար,
Երկնից իջար մեր աշխարհ.
Դու որ ինձի կեանք ես տուեր,
Կուտամ սիրտըս Քեզ նուէր:

525

Փ Ր Կ Ի Զ Մ Ր Ծ Ն Ա Ի Դուկ 2. 11— 2:

1. Յընծայից քաղցր երգեր թող թռչին ի վեր,
Գողեղու մեծաձայն նորածին Սրբայն.
Օն ի սիրտ զուարթուն մաղթենք մենք ողջոյն,
Մեր Փրկչին մեծագոր որ ծնաւ այսօր:
2. Կըննջէ ի մարին մանուկ երկնային,
Եւ մայրն ալ կորովով կը հսկէ իւր քով:
Իսկ հեռուն կասկեմակ, երկնից ի յատակ,
Կը լիալի յոյժ պայծառ, աստղիկ լուսավառ:
3. Օն մտէք համարձակ, թէպէտ չունենաք.
Ընծաներ մեծագին, կընդրուկ եւ ըզմուռս.
Նա կ'ուզէ քան զգանձ, ընծայ գերազանց,
Զոր ամէն ոք կրնայ առնել գալ առ Նա:

2. Ով սուրբ ծնունդ ողջոյն,
 Ով օր ցնծմանց հոգւոյն,
 Ներկալ անյոյսն ու խեղճ անտէրն,
 Քեզմով կ'ըլլան ուրախ.
 Քեզմով կ'ըլլան ուրախ.
 Խեղճերն մենք չենք մոռնար.
 Զանոնք պիտ' կերակրենք,
 Դեռ օրն չեկան սուրբ ծննդեան,
 Այս պարտքն ընենք լման.

528 Ա Պ Շ Ա Մ Հ Ո Վ Ի Ի Ք Ն Ղուկ. 2, 12—16

1. Դարեր առաջ ձայնից բարձրերն,
 Թշուառ հոգւոց լուրն անդին
 Ու այդ ազդու մեծ ձայնին,
 Քնժայ երկիր ու երկինք.
 Անբիծ հրեշտակք երկնային.
 Պաղեստինի դաշտաց մէջ,
 Լուր հաշտութեան երգեցին.
 Մեղեգին քաղցր հնչէ անվերջ,
 Ապշած հովիւք հիանօք,
 Տեսան այս վեհ տեսարան.
 Բեթլէհէմ տարին այս լուրն արտօւնօք,
 Ուր մօրին մէջ մանուկ գտան.
2. Որչափ վսեմ էր այն պատկեր,
 Մանուկ հիւր մը երկնային.
 Թողած երկին վար իջեր.
 Հանդչի լուռ ծոցն մսուրին,
 Երկնից կամարն, ջահն, աստղեր,
 Պարզէ այս դէպքն ահաւոր.

Հետու երկրաց աւետիս ապ,
Թէ Տէրն Արքայ եկաւ այսօր,
Ապօստ նովիւք նիւան . . .

3. Ինչո՞ւ իջար բարձրէն մանուկ,
Ի՞նչ էր քուկին նպատակ
Որբանդ խեղճ էր և պարզուկ -
Սշխարհ քեզմէ չէր դիտակ,
Ի՞նչ էր Քու գործ յառաւոր -
Այրած սրտեր լոկ գիտին,
Թէպէտ մանուկ և անդօր,
Երկինք երկիր ծնունդդ պատմեն,
Ապօստ նովիւք նիւան . . .

529 ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԽ Ղուկ. 24, 6.

1. Բարի հրեշտակ մ'այս առաւօտ,
Թըռչքոտելով անկողնիս մօտ -
Վպտուն, զուարթ մանկիկ բաւ,
Եւ և երգէ. Քրիստոս Յարեաւ:
2. Սիրալըս լեցուած սուրբ հրճուանքով,
Ես ալ կ'երգեմ թէի. թոթով -
Բայց մանկական անուշ լեզուաւ,
Քրիստոս Յարեաւ, Քրիստոս Յարեաւ:
3. Եւ կը լըսեմ ահա այսօր,
Մարդիկ, հրեշտակք, աշխարհ քոյր -
Կ'երգեն անուշ եղանակաւ,
Ոյս աղուոր երգն, Քրիստոս Յարեաւ:

530 Յ Ա Ր Ո Ի Յ Ե Ա Լ Է Տ Է Ր Ղուկ. 21. 6:

1. Սուրբ Զարուծեան զանգակը հնչեն,
Հնուռ և մօտ պատգամ խրկեն.
Հնչուն ձայնով կարծես կ'ըսեն,
Յարուցեալ է Տէրն մեր այսօր.
Լսեցէք զանգակներ,
Յարուցեալ է Տէրն մեր այսօր.
Լսեցէք զանգակներ,
Յարուցեալ է Տէրն այսօր.
2. Կը տարածեն քաղցր զանգակներ,
Օրհնեալ խորհուրդ քաղցր լուերը.
Յիսուս կ'ապրի խաչեալ Տէրն մեր,
Յարուցեալ է Տէրն մեր այսօր.
Լսեցէ՛ք զանգակներ . . .
3. Հնչեցուցէք մօտէն հեռուէն,
Որձագանգեն երկնից աստղէն.
Լեռանց զագաթ և ովկէաններ,
Յարուցեալ է Տէրն մեր այսօր.
Լսեցէ՛ք զանգակներ . . .

531 (370) Վ Ա Խ Ձ Ի Կ Ա Յ Յովն. 16. 33.

1. Այս ինչ է որ գաղտուկ ինձի կուգայ,
Մա՞հն է այն, մա՞հն է այն.
Պղպլած կեանքըն որ մարիլ կը ջանայ,
Մա՞հն է այն, մա՞հն է այն.
Թէ որ մա՞հն է, շուտով ամէն
Յաւերս պիտի փախչին ինձմէ.

Աչքերս ալ Տէրն պիտի տեսնէն,
 Վախ չկայ յաւիտեան:

2. Իմ վրաս մի՛ լաք. ո՛վ իմ բարեկամներս,
 Վախ չկայ յաւիտեան:

Արդ ներուեցան իմին բոլոր մեղքերս,
 Վախ չկայ յաւիտեան:

Ձկայ երբէք քօղ իմ աչքիս,

Որ չի կրնամ նայիլ Փրկչիս:

Շուտ բարձրանամ պիտի յերկինս,

Վախ չկայ յաւիտեան:

3. Զարկէք քնարնիդ դուք ո՛վ փրկեալ սուրբեր,
 Վախ չկայ յաւիտեան:

Թող անդադար լսեմ ձեր քաղցր երգեր,

Վախ չկայ յաւիտեան:

Շատ հրեշտակներ յերկնից եկած,

Անկողինիս շուրջ են պատած:

Որ զիս տանին աշխարհն փառաց,

Վախ չկայ յաւիտեան:

4. Ահա՛, Տէրոջս ձայնը կը լսեմ,

Վախ չկայ յաւիտեան:

Ձայն մեծ ցնծմամբ շուտով պիտի տեսնեմ,

Վախ չկայ յաւիտեան:

Մնաք բարեաւ, արդ Տէրն ընդ ձեզ,

Ալ չեմ կրնար կենալ ես հոս:

Հրաւէր կայ ինձ Տէր Աստուծմէն,

Վախ չկայ յաւիտեան:

5. Ողջոյն ընդ ձեզ, արեամբ լուացեալ խոմբեր,
 Եւ շնորհօք փրկեալներ:

Զիս ալ ձեր մէջ առէք երգենք երգեր,

Փառարանելով ՂՏէրն:

Ահա՛ բոլոր՝ Աստուածային,
 Խնդութիւններ հզան իմին,
 Ուէլուհա, անմահ Դառին,
 Վախ չկայ յաւիտեան:

532

Ք Ա Ղ Յ Ր Օ Ր Ա Ս Լ Է, 14.

(Some sweet (s. y.))

1. Միանանք պիտ' օր մը վերն,
 Քաղցր օր, մի քաղցր օր:
 Այն տան մէջ ուր տիրէ սէրն,
 Քաղցր օր, մի քաղցր օր:
 Քաղցր օր, մի քաղցր օր,
 Երբ հասնինք ի Սուրբ Սիօն:
 Մայր իմ Քեզ պիտ' տեսնենք հոն,
 Քաղցր օր, մի քաղցր օր:
2. Երբ աշխարհս ձգենք կտին,
 Քաղցր օր, մի քաղցր օր,
 Յաւ հառաչ ալ կ'անհետին,
 Քաղցր օր, մի քաղցր օր:
 Քաղցր օր, մի քաղցր օր . . .
3. Միանանք երբ սիրելեաց,
 Քաղցր օր, մի քաղցր օր:
 Պիտ' ըլլանք հաղորդ փառաց,
 Քաղցր օր, մի քաղցր օր:
 Քաղցր օր, մի քաղցր օր . . .
4. Երբ կ'ելենք վերին Գանան,
 Քաղցր օր, մի քաղցր օր:
 Պիտ' երգենք երգն յաղթութեան,
 Քաղցր օր, մի քաղցր օր:
 Քաղցր օր, մի քաղցր օր . . .

533 ՄՐԱՆՔ ԲԱՐԵԱԻ ԲՏԻՄ. 4,6—8.

1. Ճամբորդ եմ երկինքի. մընա՞ք բա՛րեաւ,
Եկաւ մահ հըրաւէրս. մընա՞ք բա՛րեաւ,
Բէպէա հողի մէջ մարմինսս պիտի մընայ,
Հողիս երկինք կ'երթայ. մընա՞ք բարեա՛ւ:
2. Եւրէ ինձ, ո՞վ մայր իմ, մընա՞ք բա՛րեաւ,
Դուն ալ Հայր իմ ներէ. մընա՞ք բարեա՛ւ,
Ո՞վ եղբայրներս ե. սիրելի իմ քոյրերըս.
Հողիս երկինք կ'երթայ, մընա՞ք բարեա՛ւ:
3. Հրեշտակք կ'սեն երգելով. բարի եկար,
Յիսուս ալ կը կրկնէ. բարի եկար.
Հաղարաւոր սուրբեր հորս կողմս. շրջապատած
կը գոչեն ինձ բարի, բարի եկար:
4. Յիսուս Տէրս կ'ըսէ ինձ բարի եկար,
Առ պըսակդ. դիր գլխիդ, բարի եկար.
Հաղարաւոր, սուրբեր հորս կողմս շրջապատաւ,
կը գոչեն ինձ բարի, բարի եկար:
5. Ո՞հ ի՞նչ ի՞նչ փառք է այս, փառք Քեզ Տէր իմ
Ո՞հ կապշիմ, կ'ըզմայլիմ, փառք Քեզ Տէր իմ,
Երկինքն եմ ո՞հ չեմ երազեր, ահա Տէրն իմ,
Բիւր փա՞ռք, փառք Քեզ Հայր իմ, փառք Քեզ
Տէր իմ:

534 ՊԻՏԻ ԱՆՅՆԻՆՔ ՅՈՐԴԱՆԱՆԷՆ Յոր 16,22.

1. Անշուշտ չուտով պիտի անցնինք Յորդանանէն
Անշուշտ չուտով ալ պատտերազմք պիտի լըուեն
Ոչ թշնամեաց նետք մեր սրտեր պիտի խոցեն
Ոչ մեր սրտեր գետեր արեան պիտի հոսին:

2. Ոչ ալ խաւար չկայ աչաց մեր մըթագին,
 Եւ ոչ ալ ցաւ պիտի ճանչնայ մեր հէզ հոգին,
 Լոյսն Աստուծոյ դէմքէն պիտի ոհ զեղանի,
 Մեր վէրքերուն մեր խոցերուն ըսպեղանի:
3. Անոյշ երգեր պիտի թնդան Սիրոնի մէջ,
 Լնման կենաց արեւ պիտի փայլի անշէջ,
 Թեկեր պիտի առնուն յայնժամ մեր հոգիներ,
 Երթալ խիզախ թռչիլ սիրով Աստուածն ի վեր:
4. Ի զուր դարեր պիտի շափեն մեր խնդութիւն,
 Իւրաքանչիւր օր նոր պիտի բերէ աւիւն,
 Այլ զու մարմին իմ երկրաքարչ միաս բարեաւ:
 Սնաս բարեաւ աշխարհ կ'երթամ յոյսն իմ յարեաւ:

535

ԵՐԿԻՆՔԷՆ ԶԱՅՆ ՄԸ Յայտ. 14, 13.

1. Ու երկինքէն ձայն մը լըսեցի որ կ'ըսէր զրէ,
 Այսուհետեւ, այսուհետեւ,
 Երանելի են ան մեռելները,
 Որոնք Տէրօջմով կը նընջեն,
 Այո կ'ըսէ Հոգին, այո, այո, այո կ'ըսէ Հոգին,
 Որ իրենց աշխատութենէն,
 Իրենց աշխատութենէն,
 Հանգչին ու իրենց իրենց գործքերը իրենց,
 Ետեւէն կ'երթան, ետեւէն կ'երթան:

ՅԱԻԵԼՈՒԱԾՔ

536 ՀՈՎ.ՏԻՆ ՇՈՒՇԱՆԸ Երգ երգոց 2.1.

I've found a friend in Jesus. S. S. S. 104 (Ար.130)

1. Յիսուս է իմ բարեկամս, խիստ թանկագին ինձի,
 Հաղարաց մէջ էն գեղեցիկն իմ հոգւոյս.
 Նա է հովտին շուշանը, Իրմով միայն ունիմ,
 Ինչ որ պէտք է մաքրել իմ բոլոր մեղքերս,
 Վրշտաց մէջ մխիթարիչս. Նեղութեան մէջ պաշտ-
 նա կ'ուզէ Իր վրայ ձրգեմ բոլոր հոգերս. [պանս
 Նա է հովտին սիրուն շուշանն,
 Պայծառ աստղն առտուան.
 Հաղարաց մէջ էն գեղեցիկն իմ հոգւոյս,
 Վրշտաց մէջ մխիթարիչս, (ՅԵ.) 782
 Նեղութեան մէջ պաշտպանս.
 Նա կ'ուզէ Իր վրայ ձրգեմ բոլոր հոգերս,
 (Ալէլուիա) Նա է հովտին սիրուն շուշանն,
 Պայծառ աստղն առտուան,
 Հաղարաց մէջ էն գեղեցիկ իմ հոգւոյս:

2. Նա վերցուց բոլոր ցաւերս, վիշտերս, ալ ինք կը
 Փորձութեան մէջ Նա ինձի է ապաստան. [բեց,
 Իրեն համար թողում ես կուռքերս պզտիկ ու
 ինք պահէ զիս զօրութեամբն անսահման. [մեծ
 Թէև զիս մերժէ աշխարհն, և Ստտանն յարձա-
 ցիսուսով յաղթութիւն ունենամ պիտի. [ԿԻ
 Նա է հովտին սիրուն շուշանն.
 Պայծառ աստղն առտուան,
 Հաղարաց մէջ էն գեղեցիկն իմ հոգւոյս.
 Վրշտաց մէջ մխիթարիչս. . . .

3. Իմ Տէրս բնաւ զիս չը թողուր, զի ե հաւատարիմ
 Հերիք որ հոս հաւատքով բնթացքս վայեմ.
 Իր կրակն բոլորտիքս պատէ վախնայու բան չու.
 Մաննայովն կարօտ հոգիս յագեցնեմ. [նիմ.
 Եւ երբ վառքով համբառնամ, և օրհնեալ դէմքն
 տեսնամ,
 Հոն ներկայութեամբն պիտի ես կշտանամ.
 Նա է հովտին սիրուն շուշանն,
 Պայծառ աստղն առտուան,
 Հազարաց մէջ էն գեղեցիկն իմ հոգւոյս.
 Վշտսց մէջ միմիբարիչքս. . . .

537 (136) Կ Ա Ն Դ Ն Ա Ծ Բ ԿՈՒՆ. 1, 20.

Standing on the promises. Տ. Տ. Տ. 877 (Արք. ԷՕ)

1. Կանգնած Փրկիչ Աստուծոյս խոստմանցը վրայ,
 Բաւիտեան անոր անունն փառարանեմ.
 Փառք 'ի բարձունս բարձրածայն պիտի երգեմ,
 Կանգնած Աստուծոյ խոստմանցը վրայ,
 Կանգնած, Կանգնած.
 Կանգնած իմ Փրկիչ Աստուծոյս խոստմանցը
 Կանգնած. Կանգնած, [վրայ,
 Կանգնած եմ Աստուծոյ խոստմանցը վրայ,
 Կանգնած, Կանգնած.
 2. Կանգնած խոստմանցը վրայ որ բնաւ չեն փլչիր
 Թէև յարձակին վախ տարակոյս կամ մահ.
 Կենդանի Աստուծոյ խօսքն հաստատ մնայ.
 Կանգնած Աստուծոյ խոստմանցը վրայ,
 Կանգնած, Կանգնած. . . .

3. Կանգնած խոստմանցը վրայ այժմ յատկ տես-
Սրեամբն կատարեա սրբութիւն ինձ համար (նեմ
Քրիստոսով ազատ կ'օրհնեմ Զինք անդադար,
Կանգնած Աստուծոյ խոստմանցը վրայ,
Կանգնած կանգնած . . .
4. Կանգնած խոստմանցը վրայ Յիսուս Քրիստոսի,
Որոյն կապովն հետն միայնած յաւիտեան,
Սուրբին Հոգւոյն ամէն օր եմ յաղթական,
Կանգնած Աստուծոյ խոստմանցը վրայ,
Կանգնած, Կանգնած . . .
5. Կանգնած խոստմանցը վրայ՝ չեմ կրնար իյնալ
Հոգւոյն ձայնն ուղղիչս է, պաշտպանս մինչեւ
Փրկիչս ալ ամէնիւ ամէն բանի մէջ (վերջ,
Կանգնած Աստուծոյ խոստմանցը վրայ,
Կանգնած, Կանգնած . . .

538 Ձ Ե Ռ Ք Է Ս Բ Ռ Ն Է Եսա. 41. 13.

(Ար. 106)

Take Thou n y hard and I lead me. S. S. S. 32

1. Տէր իմ Դուն ձեռքէս բռնէ, ընտրէ ճամբսս .
«Ոչ թէ իմ կեանքս» թող սորվիմ բսել սրտանց
Թէ փոթորիկք յարձակին՝ Դուն յաւ գիտես,
Երբ Տէրն ըլլայ ինձ պաշտպան միշտ զովեւ ես .
2. Տէր իմ, Դուն ձեռքէս բռնէ, զի եմ բուկինդ .
Սուրբ Հոգւովդ խնդրեմ լեցուր սիրտս համովին
Որ երբ փորձանք յարձակին չտամ տեղի,
Քեզ համար ապրիմ մեռնիմ, Տէր սիրելի .
3. Տէր իմ, Դուն ձեռքէս բռնէ, միշտ փեղ նայիմ,
Յգնէ ինձ որ պատկերիդ ես նրմանիմ .
Քու վրանիդ մէջ թող Հոգիս միշտ բնակի,
Պահէ զիս, Հա՛յր, պահէ զիս, մօտ, մօտ փեղի .

539 (156) Յ Ո Յ Ս Ս Ք Ե Ջ Ի Է Սաղմ. 143. 8.

G. II. 5:4

1. Պաշտօնագեղ զէմքիդ Յիսուս,
Եղեր իմ սիրահար.
Դուն ես իմ Տէր իմ կեանքս և լոյս,
Ուրիշ մը չեմ ճանչնար,
Իմ յոյսըս ալ Քեզ է,
Իմ յոյսըս ալ Քեզ է.
Բաց Տէր իմ սիրտս առ քեզ քաշէ,
Իմ յոյսըս ալ Քեզ է.

2. Ճամբաներդ են ինձ ոգտակար,
Հոգւոյս են առաջնորդ.
Առանց Քեզի կ'ըլլամ տըկար,
Քեզմով ուժիդ հաղորդ.
Իմ յոյսս ալ Քեզ է . . .

3. Եկ մօտ ինձի ով Տէր Փրկիչ,
Փոխէ իմ կեանքս այս բիրտ.
Առ Քեզ կուտամ ամենայն ինչ,
Դրամ և ինչք և սիրտ.
Իմ յոյսս ալ Քեզ է

540 Յ Ի Ս Ո Ի Ս Ի Ա Ն Ո Ի Ն Ջ Յսղմ. 14, 12, 14.

Take the name of Jesus with you. S. S. S. 91

1. Սէր անհուն սիրուն Յիսուսի,
Պահէ սրտից ի յատուկ.
Ջօրաւիզն է նա անյոյսին,
Սիրոյ աղբււր անապակի.

Քաղցր Անունն Յիսուսի,
 Լոյս երկնից և յոյս երկրի,
 Քաղցր Անունն Յիսուսի,
 Լոյս երկնից և յոյս երկրի:

2. Սյդ սուրբ Անունն վեհ և անդին,
 Պաշտպանդ է ընդդէմ չարեաց.
 Սմայք վշտաց երբ զքեզ պատեն,
 Խնդրէ զքեզ բազկատարած:
 Քաղցր Անունն Յիսուսի

3. Սուրբ Անուամբ սիրուն Յիսուսի,
 Սիրաք մեր հրճուանօք լցունին,
 Եւ իր սիրասուն բազկաց մէջ,
 Սիրոյ երգ մեր կը լսուին:
 Քաղցր Անունն Յիսուսի

4. Քաղցր Անունն Փրկիչ Յիսուսի.
 Թէ սուրբ սրտիւ ծնրադրենք,
 Թագաւորաց թագաւորին,
 Փառաց պսակն պիտի առնենք:
 Քաղցր Անունն Յիսուսի

541 (173) Հ Ա Յ Ր Ս Գ Ի Տ Ե Յոր 23, 10.

I know my heav'nly Father knows. Alex. 106

1. Գիտեմ թ'երկնաւոր Հայրս գիտէ,
 Մըրիկն որ ճամբաս կ'արգիլէ,
 Բայց ինք կրնայ ամպերն վաարել,
 Եւ իմ խաւարս լոյսի փոխել,
 Եւ իմ խաւարս լոյսի փոխել:

Գիտէ, գիտէ,
 Ըսպառնացող փոթորիկներն.
 Գիտէ, գիտէ,
 Եւ կը մեղմէ սաստիկ հողերն.

2. Գիտեմ թ'երկնաւոր Հայրս գիտէ,
 Ինչ դարման իմ ցաւիս պէտք է.
 Եւ սիրոյն հրամամբն երկնային,
 Բռնէ խոցեալ հոգիս կրկին.
 Բռնէ խոցեալ հոգիս կրկին.
 Գիտէ, գիտէ . . .

3. Գիտեմ թ'երնաւոր Հայրս գիտէ,
 Որչափ անզօր եմ ես ինձմէ.
 Կազմել անթիւ թրչնամիներս.
 Եւ ինք դիւ կ'պահէ մինչեւ վերջ:
 Եւ ինք զիւ կ'պահէ մինչեւ վերջ:
 Գիտէ, գիտէ . . .

4. Գիտեմ թ'երկաւոր Հայրս գիտէ,
 Երբ այս կեանքս հոս վերջ պիտ' գլտնէ.
 Տո՛ւր Տէ՛ր այն ժամն երբ քովդ կայնիմ,
 Սիրոյդ հովանւոյն տակ հանգչիմ.
 Սիրոյդ հովանւոյն տակ հանգչիմ.
 Գիտէ, գիտէ . . .

542 ԳԻՏԵՄ ՓՐԿԵԽ ՉԱՅՆ Յովն. 10, 27:

1. Գիտեմ փրկչիս ձայնն է որ միշտ կը փափայ ինձ
 Մի՛ վախճաբ, մի՛ վախճար.
 Գիտեմ անոր շնորհաց հրզօր բազուկները,
 Են ապաստան ինձի համար:

Դիտեմ կարող է նա պահել,
 Ինչ որ յանձնեմ ես իր խնամքին,
 Դիտեմ փորձանք երբ են ահեղ,
 Նա կը լըսէ իմ աղօթքին:

2. Դիտեմ փրկչիս ձայնն է որ միշտ կը փափայ ինձ
 Խաղաղութիւնս կուտամ քեզի.
 Այսպէս իրմով անդորրը ըլլալ սորված եմ ես,
 Իր կամքին մէջ կամքս է թաղուած:
 Գիտեմ կարող է նա
3. Դիտեմ փրկչիս ձայնն է որ միշտ կը փափայ ինձ
 Դուն իմս ես, Դուն իմս ես.
 Թէև ճամբադ ըլլայ տխուր փորձանքներ չստ
 Իմ շնորհքս է քեզ բաւական:
 Գիտեմ կարող է նա
4. Դիտեմ փրկչիս ձայնն է որ միշտ կը փափայ ինձ
 Մօտ է երկինք, մօտ է երկինք.
 Եռտող կ'անցնի այս աշխարհը փառքերով սին
 Դուն պիտ' զտնես իմ քովս հանգիստ:
 Գիտեմ կարող է նա

543 ՇՆՈՐՀԻՈՎ. ՅԱՂԹՈՒԹԻՒՆ. Յայ. 6. 2.

Conquering now and still to conquer. S. S. S. 673

1. Յաղթութենէ՝ միշտ ի յաղթութիւն հեծնէ Ար-
 քայ մի զօրեղ,
 Կ'առաջնորդէ իր զօրքերն ընտիր, դէպ ի մարտ
 մեծ և ահեղ.
 Տես ի՞նչ քաջութեամբ կ'արշաւեն, զինեալ զէն-
 քերով փայլուն,
 Անուամբն իրենց առաջնորդին, ահա երգեն
 ևռանդուն:

Միայն շնորհօքն Տէր Յիսուսի՝ յաղթութիւն
մեզ պիտ' տրուի,
Զօրաւորներն պիտ' կորնչին, վաղողներն
պիտ' չ'աղատին:

2. Յաղթութենէ՝ միշտ ի յաղթութիւն՝ ո՞ր է Ար-
քայն այս հրդօր,
Ուսկի՞ց բանակէք որ կ'օրհնարանեն իր սուրբ
Անունն Վառաւոր.
Նա է մեր Տէրն՝ Փրկիչ Աստուած, խաղաղութեան
մեծ իշխանն,
Նոքա՝ աստղեր որ պիտ' յայլին ի մէջ արքա-
յութեան:

Միայն շնորհօքն Տէր Յիսուսի . . .

3. Յաղթութենէ՝ միշտ ի յաղթութիւն. Յիսուս իշ-
խանդ ամէնուն,
Թագեր, դահեր շուտ պիտի իյնան, տապալին
ալ տէրութիւնք.
Բայց զօրքերդ որ Գեղ հետեին հաւատարիմ
մինչ ի մահ
Գու տանդ մէջ պիտ' զտնեն հանդիստ, երբ հոս
պայքարն լըմնայ:

Միայն շնորհօքն Տէր Յիսուսի . . .

544 Պ Ի Տ Ի Հ Ե Տ Ե Ի Ի Մ Յովն. 12, 26:

Down in the valley with my saviour. S. S. S. 529

1. Դէպ ի յայլուն դաշտերն պիտ' Փրկչիս հետեւիմ
Ուր կայ ծաղկեայ արօտ, և հանդարտ ջուրք
հոսին:

Ուր որ ինք առաջնորդէ՝ պիտ' իրեն հետեւիմ,
Մինչև ձեռքէն վայլուի՝ պըսակս բնդուելիմ:

Պիտի հետեւիմ, Երսուսի հետեւիմ,

Ուր որ ինք գիտ տանի՝ պիտի հետեւիմ:

Պիտի հետեւիմ Երսուսի հետեւիմ

Ուր որ առաջնորդէ պիտի հետեւիմ:

2. Դէպ ի տրխուր մութ ձորն պիտ' փրկչիս հետեւիմ
Ուր մորբկն է վայրենի եւ հոսանքս ուժգին
Իր ձեռքն երբ գիտ բռնէ չեմ բլլար ես առանձին:
Երբ Տէրն քոյս է կրնամ տողալ՝ վըտանդին:

Պիտի հետեւիմ, Երսուսի հետեւիմ . . .

3. Ի դաշտ 'ի ձոր կամ լեռնոտ ճամբայ դժուարին:
Կ'ուզեմ հոգիս, բլլայ Փրկչիս հետ միասին:

Կարող է գիտ առաջնորդել իր քալած ճամբէն,
Մինչև տուես երկնային՝ ուր բնակին սուրբերն

Պիտի հետեւիմ Երսուսի հետեւիմ . . .

545 (310) Փ Ր Կ Զ Ի Ս Դ Է Մ Ք Ը Ք Բայք. 22, 4:

When my life work is ended, S.S.S. 967. (Արք. 8)

1. Երբ կեանքիս գործն աւարտեմ եւ մութ գեղէն
Եւ այդն ոսկեղէն հեռուէն նշմարեմ:

Իմ Փրկիչս պիտի ճանչնամ երբ միւս եղերքն
Ես հասնիմ,

Եւ նախ իր քաղցրը ժրպիտովն ողջունեմ:

Պիտ' ճանչնամ Զինք, պիտ' ճանչնամ Զինք:

Երբ փրկեալ ես կայնիմ իրեն քով:

Պիտ' ճանչնամ Զինք, պիտ' ճանչնամ Զինք:

Իր ձեռաց յէրքերու նշաններով:

2. Հոգիս ի՞նչպէս պիտ' թրթռայ երբ տեսնեմ իր
 զէմքն սիրուն,
 եւ լուսավառ աչքերն իմ վրաս փայլին.
 եւ ինչպէս զեղուն սրտով պիտի օրհնեմ սէյն
 անհուն,
 Որ պատրաստեց ինձ օթեան երկնային.
 Պիս' նանչնամ Զինք . . .

3. Ո՛հ սիրելիքս փառաց մէջ կ'ըսպասեն զիս ող-
 ջունել,
 եւ կը յիշեմ տըխուր ժամն մեր լաժանման.
 Հոն կ'ուզեն եղեմի զաշտերուն մէջ զիս բնդ-
 զրկել,
 Իայց առաջ փրկչիս զէմքն տեսնել ես կ'անձկամ:
 Պիս' նանչնամ Զինք . . .

546 Փ Ր Կ Ի Զ Դ Կ Ա Ր Ո Ղ Է Մատ. 11.28—30.

Come ye disconsolate. S. S. S. 719

1. Ե՛կ, ո՛վ անմըխիթար է՞ր կը վարանիս,
 եկ շընորհաց զահին, 'ի ծունը խոնարհ,
 Հոս բեր սիրտդ վիրաւոր, հերիք տանջուիս,
 Զիք ցաւ որ փրկիչդ բուժել չը կրնար:
2. Տըրտմածին կայ ցնձում, լոյս մուրեհալին,
 Յոյս անըսպառ՝ անկեղծ զղջացողին,
 Մըխիթարիչ Հոգին խօսի սիրոյ բարբառն,
 Զիք ցաւ որ փրկիչդ բուժել չը կրնար:
3. Ահա հոս կենաց հացն եւ ջուրն յորդառատ,
 Հօրն աթոռէն հոսի ջինջ, անընդհատ,
 եկ սիրոյ խընճոյքին, մերժուիլ անհրնար.
 Զիք ցաւ որ փրկիչդ բուժել չը կրնար:

547 (202) Վ. Ա. Ս. Ն. Յ Ի Ս Ո Ի Ս Ի Կաղ. 3. 17

All for Jesus, all for Jesus. S. V. 391. S. S. S. 1179

1. Վասն Յիսուսի, Վասն Յիսուսի,
Տամ զինչս ամէն ի նուէր.

Խորհուրդ ու խօսք, գործերս բարի,
Սիաշն լինին իւր ի սէր.

Վասն Յիսուսի, Վասն Յիսուսի,
Տամ զինչս ամէն ի նուէր.

Վասն Յիսուսի, Վասն Յիսուսի,
Ապրիմ միաշն իւր ի սէր.

2. Վասն Յիսուսի, Վասն Յիսուսի,
Ոտքերս քաշեն անխոտոր.

Այքերս յառին առ նա միաշն,
Շրթներս օրհնեն ամէն օր.

Զնռքերս պատրաստ յիւր պաշտաման,
Ոտքերս քաշեն անխոտոր.

Վասն Յիսուսի, Վասն Յիսուսի,
Շրթներս օրհնեն ամէն օր.

3. Վասն Յիսուսի, Վասն Յիսուսի,

Թողուցի ամէն սին յոյս,

Գրտայ իր սէրն, իմ կեանքս է նա,
Իմ պաշտելի Տէրս Յիսուս.

Զի երբ հոգիս գրտաւ ըզնա,

Թողուցի ամէն սին յոյս,

Վասն Յիսուսի, Վասն Յիսուսի,

Իմ պաշտելի Տէրս Յիսուս.

4. Վասն Յիսուսի, Վասն Յիսուսի,

Տիեզերաց զեհ Արքայն.

Կ'ընէ և զիս կըցորդ փառքի,

Արքայութեանն յաւիտեան.

Այս ինչ շնորհք հիանալի,
 Վասն ինձ խաչեալ Յիսուսի.
 Վասն Յիսուսի, Վասն Յիսուսի,
 Ապրիմ գործիմ ալ պիտի:

548

Օ Ն Պ Ա Շ Տ Ե Ն Ք Սաղմ. 145. 10.

(Արք. 125)

O worship the king all glorious. G. H. 42

1. Օն, պաշտենք Արքայն՝ փառաց մէջ բնակողն,
 երգք մեր բարձրանան, օրհնել մեզ սիրողն.
 Նա է մեր հինաւուրցն, Վահանն և պաշտպանն
 Սերովրէք՝ բիւրք բիւրուց իրեն միշտ փառք
 | տան:
2. Օրհնենք զօրութիւնն՝ լուսոյ Աստուծոյն,
 իր շնորհք ալ անհուն պատմենք ամէնուն.
 Մութ ամպերն են իր կառքն, զայրոյթն խիստ
 անկող,
 Փոթորկին մէջ իր փառքն ցոլայ յոյժ շքեղ:
3. Իր խնամքն հայրական, պատմել ո՞վ կրնայ.
 Բարիքն անպայման՝ թափին միշտ մեր վրայ.
 Զխնազարդ լիռ ու սար, արեւն, անձրեւներ,
 Ոռոգեն մեզ համար, երկիրն պտղաբեր:
4. Որդիք մենք տրկար մարդոց հոգեղէն,
 Յուսանք առ Գեղ յար, ո՞վ օգնողդ վերէն.
 Քու ողորմութիւններ են ինչ գլխաւից,
 Դու ես միշտ պաշտպան մեր, Աստուած ու Փրկիչ

Շ Ա Ր Թ Ի Թ

549

Շ Ա Ր Թ Ի Թ

Խաթ. 27. 6.

Ձարթի՛ք փառք իմ զարթի՛ք, եւ ես զարթեալց առաւօտուց. Ալէլուիա:

Ձարթի՛ք ընդ զուարթունս մանկունք զհրին ի իօնի. Ալէլուիա:

Ձարթի՛ք որդիք լուսոյ, ի յօրհնութիւն Հօրն լուսոյ. Ալէլուիա:

Ձարթի՛ք փրկեալք արեամբ, եւ տո՛ւք զփառըս փրկողին. Ալէլուիա:

Ձարթի՛ք նոր ժողովուրդք, նոր երգս առեալ նորոգողին. Ալէլուիա:

Ձարթի՛ք հարսունք հոգւոյ. սպասեալք պալոյ սուրբ փեսային. Ալէլուիա:

Ձարթի՛ք վառեալք լուսով րատ իմաստուն սուրբ կուսանացն. Ալէլուիա:

Ձարթի՛ք պատրաստեցէք իւր լապտերաց զջերմ արտասուս. Ալէլուիա:

Ձարթի՛ք եւ մի՛ ննջէք, նըման յիմար կուսից նիրհէք. Ալէլուիա:

550

Ա Ռ Ա Ւ Օ Տ Լ Ո Ւ Ս Ո Յ

Սաղմ. 108, 1—3.

1. Առաւօտ լուսոյ, արեգակն արդար, առ իս լոյս ծագեալ. Բղխումն ի հօրէ, բղխեալ ի հոգւոյս, բան քեզ ի հանոյս:
2. Դանձդ ողորմութեան. գանձիդ ծածկելոյ, գրտող զիս արա. Դուռն ողորմութեան, դաւանողիս բաց, դասեցո զերնոցն:
3. Երբեակ միութիւն, եղելոց խնամող, եւ ինձ ողորմեա. Ձարթիւ, Տէր, յօգնել, զարթո բութմեալս, զուարթնոց նըմանիլ:

4. Էդ Հայր անըսկիզբն. էակից Որդի. է միշտ Սուրբ Հոգի. Ընկալ զիս գլխած, Ընկալ ողորմած, Ընկալ մարդասէր:
5. Թաղաւոր փառաց. թողութեանց տրւող. թող ինձ ըզյանցանս. ժողովող բարեաց, ժողովեալս զիս ժողովս անդրանկաց:
6. Ի քէն Տէր հայցեմ ի մարդասիրէդ. ինձ բոժորչեութիւն. Լեր կեանք մեռելոյս. լոյս խաւարելոյս. լուծանող ցաւոյս:
7. Խորհրդոց գիտող. խաւարիս շնորհեա խորհուրդ լուսաւոր. Ծրնունդ Հօր ծոցոյ, ծածկելոյս բառուերաւ. ծագեալ լոյս փառաց:
8. Կենարար Փրկիչ. կեցող զմեռեալս, կանգնեալ զգորեալս. Հաստեա հաւատով, հաստատեալ տեսով. հիմնեցո սիրով:
9. Ձայնիւս աղաչեմ ձեռօքս՝ պաղատիմ, ձեր բարեաց շնորհեա. Ղամբարամբ լուսոյ զեկափար ճարտար, զօղեալս ամբայո:
10. Ճառագայթ՝ փառաց. ճանապարհ ինձ ցոյց ճեպել ի յերկինս. Սիածինչդ հօր, մոյժ՝ զիս յառագաստ, մոքուր հարսանեացդ:
11. Յորժամ գաս փառօք. յահագին աւուրն յիշեալիս, Գրիստոս, հորոգող հնութեանց, նորոգեալս զիս նորոգ զարգարեալ:
12. Շնորհապու բարեաց. շնորհեա զքաւութիւն. շնորհեա զթողութիւն. Ուրախացս, Տէր, ոգւոյս փրկութեամբ, ոյր վասն եմ ի սուգ:
13. Ձար մըշակողին, չար սերմանց նորին չորացո զպտուղն. Պարգեւիչ բարեաց, պարգեւեալ իմոց, պարտեացս թողութիւն:
14. Ձուր շնորհեա աչացս, ջերմ հեղուլ զարտօսր. ջնջել ըզյանցանս. Ռեալիւրդ քաղցու. ռամ հոգւոյս արրո, ռահ ցոյց ինձ լուսոյ:

15. Ոէր անուն Յիսուս սիրով քով ճմլեա, սիրտ իմ
քարեղէն: Վասն զրթութեան, վասն ողորմու-
թեան, վերբասին կեցո:
16. Տենչալոյդ տեսեամբ տուր ինձ յագնաւ: Տէր՝
Յիսուս Քրիստոս: Բարունդ երկնաւոր ըտեա
դաշակերտս, բամիջ երկնայնոց:
17. Յօդ արեան քո: Տէր ցօղեա ի հոգիս, ցըն-
ծասցէ անձն իմ, իիծեալքս մեղօք լիւծեալ
աղաչեմ, լիւսեղ ինձ բարիս:
18. Փրկիչ բոլորից, փութա դիս փրկել, փորձու-
թեանց մեղաց, Քաւիչ յանցանաց, քաւեա
զօրհնարանս, քեզ երգել ըզփառս:

551 ԼՈՅՐ, ԱՐԱՐԻՉ ԼՈՆՍՈՅ Ա. Յովն. 1. 5.

1. Լոյս, Արարիչ լուսոյ, առաջին լոյս, բնակեալդ
ի լոյս անմատոյց, Հայր երկնաւոր, ի դասուց
լուսեղինաց օրհնեալ, ի ծագել լուսոյ առաւօ-
տուս ծագեա ի հոգիս մեր ըզլոյս քո իմանալի:
2. Լոյս ի լուսոյ ծագումն արեգակն արդար, ան-
ճառ ծընունդ Հօր՝ Որդի, յառաջ քան դարե ա-
նուն քո գոյեալ ընդ Հօր, ի ծագել լուսոյ առա-
ւօտուս ծագեա ի հոգիս մեր ըզլոյս քո իմանալի:
3. Լոյս, ի Հօրէ ըզխումն, ազրիւր բարութեան,
Հոգիդ Ուրբ Աստուծոյ, մանկունք եկեղեցւոյ
ընդ հրեշտակս ըզճեղ բարերանեն: Ի ծագել
լուսոյ առաւօտուս ծագեա ի հոգիս մեր . . .
4. Լոյս, երբեակ և մի անբաժանելի սուրբ էր-
րօրդութիւն, ըզճեղ ընդ երկնայնոցն երկրա-
ծինքս միշտ փառաւորեմք: Ի ծագել լուսոյ
առաւօտուս ծագեա ի հոգիս մեր ըզլոյս . . .

Ես ոչ զսպարեցայց փրկիչ. փառաւորել զՔեզ
զամենայն աւուրս կենդանութեան իմոյ.

Ի գիշերի համբարձէ՝ ք զձեռս ձեր 'ի սրբութիւն,
եւ օրհնեցէ՝ ք զՏէր.

Լուսապայծառ. Հրեշտակն նստելով 'ի կենսա-
տու գերեզմանին. Եւ աւետէր կանանցն Յարեաւ
Ասատւած.

554 Ն Ո Ր Ա Ս Տ Ե Ղ, Խ Ե Ա Լ Յ Ի՞՞՞ 0.1—10.

1. Նորաստեղծեալ Բանն յանէից,
Ի սկրզրանէ գերկինս երկնից,
Եւ գերկնային գօրս անմարմնոց,
Իմանալեացըն զբւարթնոց,
Եւ ըզգալի տարերց քառից,
Հակառակաց միաբանից,
Որով յաւէտ փառաբանի
Երրորդութիւնն անճառելի.
2. Երեքսրբեան մի տէրութիւն,
Միով բնութեամբ Ասատւածութիւն,
Եւ յոյսն որ անեղ արարչական,
Ասաց լինել յոյս եղական.
Զոր եւ ձագեաց յօրն առաջին,
Միաշարաթ կիւրակէին,
Որով յաւէտ փառաբանի
Երրորդութիւնն անճառելի.
3. Բարունօրէն բացատրեսցուք,
Զձածկեալ խորհուրդըն ձանիցուք,
Զի լոյսն անտես իմանալի,
Մաքուր հոգւոց տեսանելի,
Ի սոյն ձագեաց միաշարաթ
Մեղ յարութեան սուրբ ճառադայթ.

552 ԱՂՕԹՔ ԱՌ ԱՍՏՈՒԱՆ

Անեղանելիդ Աստուած, Հայր ամենակալ, ընկալ զաղաչանքս մեր, քոյ պաշտօնէից:

Ի Հօրէ ծագումն անճառ, արեղակն արդար-
ծագեալ ի յանձինս մեր, զլոյսդ ողորմութեան:

Ի Հօրէ բղխեալ Հոգի, ազրիւր բարութեան,
լուսով քով լցո բղմեղ, յայսմ առաւօտուն:

Երեք անձինք եւ մի բնութիւն, մի Աստուած-
ութիւն, զքեզ խոստովանիմք յաւէտ, Սուրբ Եր-
րորդութիւն:

553 ԵՐԳ ԻԻՂԱՐԵՐԻՑ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ Սաղմ.113.

Եղիցի անունն Տեառն օրհնեալ, ի յայսմ հետէ
մինչեւ ի յաւիտեան:

Օրհնեցէք մանկունք ըզՏէր եւ օրհնեցէք զա-
նուն Տեառն:

Եղիցի անունն Տեառն օրհնեալ յայսմ հետէ մին-
չեւ ի յաւիտեան:

Յարեւելից մինչ ի մուտս արեւու օրհնեալ է
անունն Տեառն. ի յայսմ հետէ մինչեւ ի յաւիտեան:
Փա՛ռք եւ Երկրպագութիւն Հօր եւ Որդւոյ եւ Սրբոյ
Հոգւոյն, եւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւի-
տենից, Ամէն: Ի յայսմ հետէ մինչեւ ի յաւիտեան:

Փա՛ռք Յարութեան քո Տէր, ո՛չ զաղարեցայց
Քրիստոս, օրհնել զքեզ զամենայն աւուրս կենդա-
նութեան իմոյ:

Փա՛ռք Յարութեան քո Տէր, ո՛չ զաղարեցայց
Յիսուս, գովել ըզքեզ ամենայն աւուրս կենդա-
նութեան իմոյ:

- Եկայք, փրկեալք, ընդ զըւարթնոյն,
Տուք օրհնութիւն Յարուցելոյն:
4. Աէրբդ սիրոյ խոնարհեցար,
Ի փրկութիւն մեր մարմնացար,
Նոյին մարմնովքն խաչեցար,
Ի գերեզման մահու եղար,
